



Ուրբաթ  
1 Ապրիլ

**Վարորդի Աթոռին  
Վրայ**

Կարդա՛  
Մատթեոս 5. 13-16

Ձեր լոյսը այնպես թող փայլի մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաւորեն ձեր հայրը՝ որ երկինքն է:  
—Մատթ. 5. 16

ԱՍՏՈՒԱՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒԱՆ ՄԷՋ  
■ Յեսու 4-6  
■ Առակաց 1. 1-7

Ճամբուն եզերքը բերէ: Կինը ձեռքերը վեր բռնած, ինքնաշարժէն դուրս գայ: Ոստիկանը ոստիկանատուն կը տանի եւ կը բանտարկէ գայն:

Մէկ ժամ ետք, ոստիկանը կը վերադառնայ եւ կ'ըսէ. «Ներդուլթիւն, տիկին, ըրածս սխալ էր: Երբ ետեւէդ քեզ կեցուցի, ինքնաշարժիդ վրայ կարդացի Յիսուս ըլլար ի՞նչ պիտի ընէր՝ խօսքերը, որուն տակ գրուած էր 'Հետեւէ ինձի Կիրակնօրեայ երթալու': Այդ գրութիւնները տեսնելէ ետք, ենթադրեցի, թէ գողցուած ինքնաշարժ մը կը քշես»:

Սատանային համար շատ կարեւոր չէ, թէ դուն հաւատացեալ ես կամ ոչ, այնքան ատեն՝ որ ոչ հաւատացեալի մը պէս կը գործես: Եթէ ան կրնայ քեզ զինաթափ ընել եւ իր ուզածին պէս գործել տալ ու անպատուել Յիսուսի անունը, ան կը գոհանայ: Բայց Յիսուս կոչ կ'ընէ հաւատացեալներուն «աղ» ըլլալ ըսելով.— «Ձեր լոյսը այնպէս թող փայլի մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաւորեն ձեր Հայրը՝ որ երկինքն է» (Մատթ. 5. 16):

**Պէտք չէ թոյլ տալ, որ մամոնան ղեկավարէ մեր կեանքի մանրամասնութիւնները:**





Շաբաթ  
2 Ապրիլ

**Թռչունը՝ Պատու-  
հանիս Դիմաց**

Կարդա՛ր  
Մատթեոս 6. 25-34

Նայեցե՛ք երկինքի  
թռչուններուն...:  
—Մատթ. 6. 26

ԱՍՏՈՒԱՍԸՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
■ Յեսու 7-9  
■ Առակաց 1. 8-19

**Գ**րասենեակիս պատուհանին  
թռչուն մը, օրեր շարունակ շիւղ  
առ շիւղ փոքրիկ բոյն մը հիւսեց:  
Շուտով հաւկիթ մը ածեց եւ անոր  
վրայ նստաւ մինչեւ անոր թխտուիլը:  
Թէեւ ան շատ փոքրակազմ էր,  
սակայն շատ գօրաւոր պիտոժակ մը  
ունէր: Անոր մայրը մեծ ճիւղ կը  
թափէր իր ձագը կերակրելու եւ  
զայն ապահով պահելու համար: Մի  
քանի ամիսէն թռչնակը պատրաստ  
էր բոյնէն դուրս գալ: Ես կը հետեւի  
այդ սքանչելի պատահարներուն:

Այդ բոյնը մնաց ծառին վրայ՝  
պարապ, մինչեւ յաջորդ գարունը:  
Երբ մայր թռչունը վերադարձաւ,  
շատ ուրախացայ, սակայն, միեւնոյն ատեն տիրեցայ: Մենք  
մեր տունը նոր ծախած էինք եւ ես շատ մտահոգ էի, որ  
նոր տանտէրը կրնար կտրել այդ ծառը: Սակայն, իմ  
մտահոգութիւնս շուտով հիացումի փոխուեցաւ: Երբ կը  
պարպէի գրասենեակս փոխադրութեան համար, մայր  
թռչունն ալ կը քակէր իր բոյնը: Երբ ձգեցինք մեր  
ծախած տունը, բնագրային ինչ մղում, այդ մայր թռչունն  
ալ իր ընտանիքով լքեց իր բոյնը: Աստուծոյ իրեն տուած  
բնագրը գինք մղած էր այդպէս ընելու:

Այս դէպքը ինծի յիշեցուց Յիսուսի գործածած թռչուն-  
ներու եւ դատի շուշաններու օրինակը, մարդոց հասկնե-  
լու, թէ պէտք չունին մտահոգուելու: Եթէ Աստուած կը հոգայ  
երկինքի թռչունները, վստահաբար աւելիով պիտի հոգայ իր  
պատկերով ստեղծուած մարդկութիւնը (Մատթ. 6. 26-30):

Երբ մեր կեանքի պայմաններով մտահոգուած ենք,  
նայինք երկինքի թռչուններուն եւ վստահ ըլլանք, թէ  
մենք աւելի արժէք ունինք Աստուծոյ քով քան թռչունները:

**Պետք չունիմք վախճալու մեր շուրջը երեւոյժ  
վտանգներէն, քանի որ Տէրոջ աչքերը մեր վրայ են:**





Կիրակի  
3 Ապրիլ

### Շիտակ Տեղը

Կարդա՛ր  
Առակաց 16. 1-9

Մարդուց սիրտը կը  
ծրագրէ իր ճամբան,  
բայց Տէրը կը  
նաստատէ անոր  
քայլերը:  
—Առակ. 16. 9

ԱՍՏՈՒԱՍՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ԱՒԷՋ  
■ Ցետ. 10-12  
■ Առակաց 1. 20-33

Անոնք շիտակ տեղն էին, սխալ օրուան ընթացքին: Կամ այդպէս կը թուէր ըլլալ: Երկրորդական վարժարանի մը երգչախումբը ծերանոց մը հրաւիրուեցաւ երգելու: Անոնք որոշուած տեղը հասան Հինգշաբթի օր: Մինչդեռ անոնք կ'ակնկալուէին Ուրբաթ օր: Քանի երգչախումբը եկած էր, իրենց ըտեցաւ, թէ եթէ քիչ մը արագացնեն իրենց բեմի պատրաստութիւնը, կրնային միայն 20 վայրկեան երգել, որովհետեւ յիշատակի պաշտամունք մը կար անմիջապէս ետք:

Մինչ երգչախումբը կ'երգէր, մեռնող մարդուն զաւակը լսեց անոնց հաճելի երգեցողութիւնը եւ խնդրեց, որ երգէին նաեւ յիշատակի պաշտամունքի ընթացքին: Անոնք ուրախութեամբ ընդունեցին եւ իրենց հաճելի երգեցողութեամբ յոյս եւ ճշմարտութիւն ներշնչեցին ներկաներուն: Աստուած գործածած էր այդ երգչախումբը յատուկ ձեւով մը, եւ այդ բոլորը եղած էր պարզապէս թուականի մը սխալ արձանագրութեամբ: Բայց արդեօք իրաւ սխալի մը արդիւնքն էր եղածը:

Մենք շատ ուշադիր կերպով ժամանակացոյցեր կը պատրաստենք յաճախ, որպէսզի ճիշդ ժամանակին ըլլանք հոն՝ ուր որոշուած է որ ըլլանք: Սակայն, միշտ պէտք է յիշենք Սողոմոն իմաստունի խօսքը. «Մարդուն սիրտը կը ծրագրէ իր ճամբան, բայց Տէրը կը հաստատէ անոր քայլերը» (Առակ. 16. 9):

Պատրաստ ենք ընդունելու չծրագրուած ծառայութիւններ, որոնք մեր ժամանակացոյցը փոփոխութեան կ'ենթարկեն: Երբ Աստուծոյ կամքը կը կատարենք, շիտակ տեղը կը գտնուինք եւ կրնանք Զինք ցոյց տալ մարդոց:

**Չակնկալուած փոփոխութիւններ առիթներ են քաջնուած ծառայութեան:**





Երկուշաբթի  
4 Ապրիլ

**Ի՞նչ Պէտք է  
Ընեմ**

Կարդա՛  
Առակաց 2. 1-9

Արդարեւ  
իմաստութիւնը Տէրը  
կու տայ, գիտութիւնն  
ու ճանճարը Անոր  
բերանէն կու գան:  
—Առակաց 2. 6

ԱՍՏՈՒԾՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Յետ 13-15  
■ Առակաց 2. 1-11

**Բ**արեկամս կարեւոր որոշում մը առնելու տազնապին մէջ է— Պէ՞տք է պահէ իր Հին ինքաշարժը որ շարունակ նորոգութեան հարցեր ունի, թէ նոր մը գնէ: Ան կ'ուզէ լատնտես մը ըլլալ իր նիւթականին, ուրեմն, կ'ուզէ իմաստուն որոշում մը առնել: Ամէն բանէ աւելի, ան կ'ուզէ պատուել զԱստուած:

Նիւթական որոշումներ առնելը յաճախ դժուարին պարագաներ կը նկատուին: Պիլի Կրահամ կ'ըսէ. «Եթէ մարդ մը ուղիղ կեցուածք ունի դրամին հանդէպ, այդ մէկը պիտի օգնէ իրեն ուղղելու իր կեցուածքը, գրեթէ կեանքի բոլոր մարզերէն ներս»:

**Հետեւեալ կարծիքները կրնանք նկատի առնել իմաստութեամբ վարուելու դրամական հարցերու հետ:**

Քննէ՛ պարագան, վստահ ըլլալու, թէ դուն կը Հետեւի՞ս Աստուծոյ նախապատուութիւններուն: Կու տա՞ս Իրեն եւ ուրիշներու (Ա. Կորնթ. 16. 2): Հոգ կը տանի՞ս ընտանեկան կարիքներու (Ա. Տիմ. 5. 8): Թոյլ չե՞ս տար, որ դրամը քեզ կառավարէ (Ղուկ. 16. 13):

Հետագօտէ՛ նիւթը: Նկատի ունեցիր բոլոր կարելիութիւնները, առաւելութիւններն ու անպատեհութիւնները:

Խնդրէ՛ Աստուծմէ իմաստութիւն: Աղօթէ՛, աղօթէ, աղօթէ: Ան իմաստութիւն պիտի տայ շիտակը ընելու (Առակ. 2. 6):

Վստահէ՛ Աստուծոյ եւ որոշումդ առ: Աստուծոյ Խօսքէն սորվածդ եւ ստացած իմաստութիւնդ գործադրութեան դիր, որ որոշումդ Իր կամքին համեմատ ըլլայ:

Աստուծոյ Հնազանդիլը մեր մէջ կը սնուցանէ սիրոյ եւ վստահութեան յարաբերութիւն մը Անոր հետ եւ իւրաքանչիւր որոշում աւիթ մը կ'ըլլայ Աստուծոյ աւելի մօտ ըլլալու:

**Որքան մօտեմ քալեմք Աստուծոյ հետ, աւելի յստակ կը տեսնեմք Անոր առաջնորդութիւնը:**





Երեքշաբթի  
5 Ապրիլ

## Կեանքի Խօսքեր

Կարդա՛ր  
Յովհ. 6. 60-71

Տէր, որո՞ւն պիտի  
երթանք, դուն ունիս  
յախտեցակամ կեանքի  
խօսքերը:  
—Յովհ. 6. 69

ԱՍՏՈՒԱՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԷՁ  
■ Յեսու 6-10  
■ Առակաց 2. 12-22

մը մէջ ինդոլուելու վտանգին տակ, որոնք կը ներկայացուին յաճախ առանց բծախնդրութեան եւ խառնիճադանճ վիճակով: Ուրեմն, պէտք է զգոյշ ըլլալ եւ իմաստուն, թէ ո՞ր մէկը ընտրելու եւ որո՞ւն մտիկ ընելու ենք:

Յովհ. 6-րդ գլուխին մէջ Յիսուս կը պատգամէ մեզի ըսելով. «Ես եմ Կենաց Հացը» (Հ. 35): Շատեր, իր ժամանակին, այս պատգամը հակասական նկատեցին եւ ուրեմն, հրաժարեցան Յիսուսի հետեւելէ (Հ. 66): Երբ Յիսուս կող ըրաւ իր աշակերտներուն թէ արդեօք իրե՞սնք ալ պիտի հրաժարէին իրեն հետեւելէ, Պետրոս իմաստութեամբ պատասխանեց. «Տէր, որո՞ւն պիտի երթանք, Դուն ունիս յախտեցակամ կեանքի խօսքերը» (Հ. 68):

Աշխարհի մը մէջ՝ ընկղմած շփոթութիւններու եւ հակասութիւններու տեղեկութեանց ճահիճին մէջ, մենք ալ կրնանք Պետրոսի պէս դիմել Քրիստոսի՝ իմաստութիւն գտնելու: Միայն Ան կրնայ մեզ շփոթի մատնող խօսքերէն դուրս բերել եւ իրական կեանքի խօսքերով առաջնորդել:

**Եթէ կ'ուզես իմաստուն ըլլալ, մտի՛կ ըրէ  
Քրիստոսի:**

Հեղինակ մը, իր գիրքերէն մէկուն մէջ կը զգուշացնէ մեզ կուտակուած տեղեկութիւններով լեցուն աշխարհի մը վտանգէն: Ան կը նկարագրէ այսօրուան աշխարհը՝ ողորուած ահաւոր տեղեկութիւններով: Միեւնոյն ատեն կը շեշտէ, թէ այդ տեղեկութիւնները այնպիսի ճարտարութեամբ կը շահագործուին կարգ մը մարդոց կողմէ, որ իրենց արժէքը կը կորսնցնեն եւ կը դառնան վնասակար:

Արագ ակնարկ մը համակարգիչի համացանցին կամ յատուկ պարբերաթերթերու ցոյց պիտի տայ, թէ իսկապէս կ'ապրինք նման մշակոյթի մը մէջ, տեղեկութիւններու ծովի





Չորեքշաբթի  
6 Ապրիլ

**Ապաստան  
Մեծուրեան Մէջ**

Կարդա՛  
Ծննդոց 2. 1-15

Տէր Աստուած...  
մարդը դրա Եդէմի  
պարտեզին մէջ,  
որպէսզի զայն մշակե  
ն պահէ:  
—ԾՆՆՈՒՅՑ 2. 15

ԱՍՏՈՒԾՍԵՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԵՋ  
■ Սաղմոս 39-41

**Պ**ատմական վէպի մը մէջ, Հեղինակ մը կը պատմէ ճահիճի մը մօտ ապրող սերունդներու պատմութիւնը: Անոր ներկայացուցած անձերէն մէկը 13 տարեկան անհանդարտ տղայ մըն է, որ նստած դասարանին մէջ, շարունակ կը սպասէ ամառուան արձակուրդին: Սակայն օր մը, երբ ուսուցիչը բանաստեղծութիւն մը կը կարդայ, տղան մեծապէս կ'ազդուի: Ոտանաւորը կ'ըսէր.

Ինչպէս շամբահաւը գաղտնապէս կը  
Հիւսէ իր բոցնը թաց հողին վրայ,  
Ես ալ ինձի համար բոցն մը պիտի  
չի նեմ Աստուծոյ մեծութեան մէջ:  
Ես պիտի թռչիմ Աստուծոյ մեծա-

փառութեան մէջ, ինչպէս շամբահաւը կը թռչի  
Ազատութեան մէջ, որ կը լեցնէ բոլոր պարապութիւնը,  
իրար փաթթելով ճահիճն ու երկինքները:

Այդ պատանին երբ կը մեծնայ, բանաստեղծութիւնը զինք կը հրահրէ անխոնջ աշխատանքի, պաշտպանելու համար արժէքաւոր թաց հողերն ու իր սիրած վայրի կենդանիները: Այդ բանաստեղծութեան բառերը շատերու սիրտը կ'ալեկոծէ, քանի որ այնտեղ բնութիւնը գործածուած է ցայտուն կերպով Արարիչը փառաբանելու համար: Սակայն, դժբախտաբար, այսօր մեր այս մտորակը, որուն վրայ կ'ապրինք, աննկատ ձգուած է եւ մեծապէս շահագործուած: Աստուծոյ պատուէրը Ադամին տրուած, փոխանցուած է բոլոր հաւատացեալներուն. «Տէր Աստուած... մարդը դրաւ Եդէմի պարտէզին մէջ, որպէսզի զայն մշակէ եւ պահէ» (Ծննդոց 2. 15):

Մենք կանչուած ենք հոգալու եւ պահելու Աստուծոյ ստեղծագործութիւնը հաւատարիմ տնտեսներու պէս:

**Գէշ վերաբերմունք Աստուծոյ ստեղծագործութեան հանդէպ, կը նշանակէ անարգել անոր Արարիչը:**





Հինգշաբթի  
7 Ապրիլ

**Ինչո՞ւ, Ինչո՞ւ,  
Ա՛հ Ինչո՞ւ**

Կարդա՛  
Առակ. 3. 1-12

Եթէ տոկաք պատիժի,  
Աստուած կը վարուի  
ձեզի հետ իբրեւ՝  
որդիներ:  
—Եբրայեցիս 12. 7

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Յետև 16-18  
■ Առակաց 3. 1-10

քան Աստուծոյ մեզ ուղղելու համար տնօրինած պատիժէն, որովհետեւ Ան չ'ուզեր ժամանակ վատնել պարսպ բաներու համար, որոնք երբեք պտղաբերիլ չեն խոստանար:

Միշիկըն լիճին եզերքը, կան ընդարձակ խոպան աւազակոյտեր, որոնք երբեք չեն հերկուած, որովհետեւ որոշ է, որ ապարդիւն է գանոնք մշակելը: Սակայն, քիչ մը անդին, հոպազործներ շարունակ կը մշակեն հողը, որովհետեւ գիտեն, թէ ի՞նչ կ'ընեն: Անոնք այդ հողերը աւելի խորունկ կը հերկեն, աւելի լաւ բերք ստանալու համար: Որքան արօտը աւելի խորը երթայ եւ հողը լաւ փշո՛է, հունձքի ատեն ա՛յնքան աւելի բերք կարելի է ստանալ:

Երբեմն Աստուծոյ խոփը աւելի խորունկ կ'երթայ եւ վերջաւորութեան, երբ տեսնենք բերքին առատութիւնը, կ'ուրախանանք եւ կը մոռնանք հերկելու նեղութիւնը: «Ոչ մէկ պատիժ նոյն պահուն կը թուի ուրախարար, հապա տրտմարար, բայց յետոյ կու տայ արդարութեան խաղաղարար պտուղը՝ անով կըթուածներուն» (Եբր. 12. 11):

**Միայն արեւ՝ առանց անձրևի, շրջանը կը վերածէ անապատի:**

**Ե**ւ ինչո՞ւ տառապելու եմ, յուսալքուելու ու նեղութիւն քաշելու եմ: Ի՞նչ ըրած եմ, որ Աստուած ինծի փորձանքներ զրկէ: Արդեօք Աստուած դժգո՞հ է ինձմէ: Այս հարցումները շարունակաբար կը հարցուին Աստուծոյ սիրելի զաւակներուն կողմէ:

Այս վախերուն եւ հարցումներուն մեծ մասը հետեւանքն են՝ Աստուծոյ մեր հարցերուն հանդէպ ունեցած վերաբերմունքին մեր սխալ հասկնալուն: Աստուած ունի իր բարի պատճառները այդպէս վերաբերուելու: Անոնցմէ մէկը մեր հոգեւոր կարգապահութիւնն է: Պէտք է շատ աւելի վախնանք առանձին լքուած մնալ,





Ուրբաթ  
8 Ապրիլ

**Ուղղամտութիւն -  
Կարելի՞ է**

Կարդա՛  
Սաղմոս 119. 121-128

Խելացի ըրէ գիս,  
որպէսզի քու  
վկայութիւններդ  
գիտնամ:  
—Սաղմոս 119. 125

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Յետև 19-21  
■ Առակաց 3. 11-26

գտնուի անփոփոխ եւ անփոխարինելի եղող չափանիշին՝  
**Աստուածաշունչին մէջ:**

Սաղմոսերգու Դաւիթ, միջազգային ընկերակցութեան մը ղեկավարը չէր: Սակայն, ան ուզեց, որ իր թագաւորութեան սահմաններէն ներս կ'իրարկուին այն օրէնքները, որոնք շիտակ են եւ տէրունական: Ան գիտէր, որքան դիւրին էր շեղիլ ճշմարիտ ճամբէն եւ հետեւիլ անբարոյական կենցաղի մը, գայն պարզապէս հաճելի նկատելով:

Հետեւաբար Դաւիթ խնդրեց Աստուծոյ. «Քու կանոններդ սորվեցո՛ւր ինձի... Խելացի ըրէ գիս, որպէսզի քու վկայութիւններդ գիտնամ» (Սաղմ. 119. 124, 125): Դաւիթ կ'ատէր «սխալ ճամբան» եւ կ'ուզէր իր կեանքը հաստատել այն սկզբունքին վրայ, որ աստուածային է եւ ուղիւ. «Քու բոլոր հրամաններդ ուղիւ կը համարեմ» (Հ. 128), կ'ըսէ ան:

Ոչ ոք կը ծնի աստուածային նկարագրով: Բայց սերտելով Աստուծոյ Խօսքը եւ հնազանդելով Սուրբ Հոգիին, կը սորվինք աստուածայինը եւ սիրել ուղղամտութիւնը:

**Հաւատացեալը կանչուած է ամէն պարագայի տակ  
Աստուծոյ վստահելով շիտակը գործել:**

**Ա**ռեւտուրի հարցերու վերաբերեալ գիրք մը կարդացի, որուն հեղինակը կը շեշտէր, թէ առեւտրական աշխարհի մէջ ամենէն կարեւորը մարդոց վստահութիւնը չափիլ է: Գիրքը կ'առաջարկէր յստակ եւ թափանցիկ հոգի մը, պատասխանատուութեան գիտակցութիւն եւ ուղղամտութիւն: Հեղինակը կ'ըսէ. «Մէկ բան, որ գիրքերը չեն կրնար սորվեցնել, Ուղղամտութիւնն է: Մարդիկ կա՛մ կ'ունենան զայն կամ ոչ»:

Արդեօք շիտակ է այս խօսքը: Աշխարհի մը մէջ, ուր չափանիշեր անընդհատ փոփոխութեան կ'ենթարկուին, կարելի՞ է ուղղամտութեան տիրանալ: Պատասխանը կը







Շաբաթ  
9 Ապրիլ

**Ոստրե Մարդը**

Կարդա՛ր  
Բ. Կորնթ. 4. 1-7

Որպեսզի զօրութեան  
գերազանցութիւնը  
ըլլայ Աստուծմէ, եւ ո՛չ  
թէ մեզմէ:  
—Բ. Կորնթ. 4. 7

ԱՍՏՈՒԱՍՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ԱՄԷՅ  
■ Յետ 22-24  
■ Առակաց 3. 27-35

Ջուրերուն խորը, հասնելու ոստրէներուն: Այդ ճիգին մէջ ան կը վիրաւորէ իր ձեռքերը ոստրէի պատեանին սուր ծայրին դպչելով: Ոստրէ մը բռնելէ ետք, ան կը բարձրանայ Ջուրին երեսը, ամուր բռնելով գայն իր պատուուած եւ արիւնոտ ձեռքերով: Քարոզիչը կը շարունակէ. «Յիսուս երկինքի Իր փառքէն վար իջաւ... մեղաւոր մարդկութիւնը փրկելու եւ զանոնք վերստին վեր բարձրացնելով՝ երկնային փառքին հասցնելու: Անոր պատուուած եւ արիւնյուլաց ձեռքերը նշան մըն են, թէ Ան ո՛րքան արժէք կու տայ մեզի պէս մեղաւոր մարդոց»:

Այդ քարոզէն ետք, 12 հոգիներ դարձի գալով Քրիստոսը կ'ընդունին: Երեկոյեան, եկեղեցիի անդամներէն մէկը կը գանգատի Ուէյլիի այդ անգէտ քարոզիչին գործածած սխալ բառին համար: Ուէյլի կ'ըսէ. «Վնաս չունի, Տէրը երկոտասնեակ մը ոստրէներ ունեցաւ այսօր»:

Աստուած կարող է մեր տկարութիւնները ու անկեղծ ճիգերը գործածել Իր փառքին համար:

---

**Ըրէ ինչ որ կրնաս, ուր որ ես, միայն այն քաներով որ ունիս:**





Կիրակի  
10 Ապրիլ

## Ներողամտութեան Մարտահրաւերը

Կարդա՛  
Ծննդոց 45. 1-15

Արդարեւ, եթէ դուք  
ցերեք մարդոց իրենց  
յանցանքները, ձեր  
երկնաւոր Հայրն ալ  
պիտի ցերե՛ ձեզի:  
—Մատթ. 6. 14

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆ ԱԷՁ

- Դատարարց 1-3
- Առակաց 4. 1-17

Ներելը ցաւցնելու չափ դժուար է եւ անկէ բաւական ժամանակ ետք, վէրքը կը մնայ յիշողութեան մէջ: Ներողամտութիւնը անբնական արարք մըն է, եւ կիսա կը բողբոջէր անոր անարդարութեան դէմ:

Ծննդոց գիրքին մէջ եղող պատմութիւն մը ճիշդ նոյն իրողութիւնը կը յայտնէ: Այն եղբայրներուն, որ Յովսէփ կը մաքառէր ներել, անոնք էին, որոնք ծրագրած էին մեռցնել զինք, եւ ապա ծախած էին զինք գերութեան: Թէեւ ան փորձեց յաղթահարել թշնամութեան, որ ստեղծուած էր իր եղբայրներուն միջեւ, եւ ամբողջ սրտով ներել կ'ուզէր անոնց, սակայն կարելի չեղաւ անմիջապէս ներողի իր կեցուածքը շտկել:

Ծննդոց 42-45 գլուխներուն մէջ Յովսէփ կարծես ըսել կ'ուզէ. «Ես կը խորհիմ, բաւական զարմանալի է որ ես ձեզի կը ներեմ»: Սակայն երբ Աստուծոյ շնորհքը տեղ գտաւ Հոգիէն ներս, Յովսէփի վիշտն ու սէրը արձագանգեց պալատին մէջ: Ատիկա ներող մարդու մը լացի ձայնն էր:

**Մե՞ք կը դադրի՞նք ուրիշներուն ներելէ, երբ  
Քրիստոս դադրի մեզի ներելէ:**

**Ե**րկար եւ տաք վիճաբանութենէ մը ետք, կիսա Հարցը աստուածաբանական շատ նուրբ իրողութեան մը վրայ դրաւ: Մենք կը խօսէինք գործիս մէջ, երբեմնի աշխուժութեան պակասին մասին: Ան ըսաւ. «Զարմանալի է, որ ես կը ներեմ քեզի կարգ մը բաներու Համար, որ այնքան երկչոտութեամբ կ'ընես յաճախ»: Կնոջս ըրած դիտողութեան մէջ, ան ինչ որ ամենէն աւելի ցնցեց զիս, իր ներողամտութեան Հանդէպ ունեցած ըմբռնումն էր: Կարելի է ներողամտութիւնը պղտտոնական սիրոյ քաղցր վերաբերմունք մը նկատել եւ գայն ցրուել ամէն կողմ օդը թարմացնող որակումի մը պէս:





Երկուշաբթի  
11 Ապրիլ

### Հնագանդիլ Անոր Յիշեցումներուն

Կարդա՛  
Գործք 16. 6-10

Հասնելով Միսիպի  
կողմերը՝ կը փորձէին  
երթալ դէպի  
Բիւթանիա, բայց  
Հոգին շօնյլատրեց  
անոնց:  
— Գործք 16. 7

ԱՍՏՈՒՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Դատարարաց 4-6
- Առակաց 4. 18-27

կը հաւատայի, որ Աստուած տակաւին զիս կը սիրէ»:

Կարծէք, Պօղոս Առաքեալ ալ, վերապահութիւններ ունէր, երբ Սուրբ Հոգին յիշեցուց իրեն եւ իր խումբին, որ չերթան Ասիոյ նահանգները՝ Բիւթանիա: Փոխարէնը, անոնք զգացին, թէ Հոգին կ'աւաջնորդէր զիրենք երթալու Մակեդոնիա, հոն քարոզելու: Իւրաքանչիւր պարագային, անոնք հնազանդեցան Սուրբ Հոգիին յիշեցումներուն: Եւ որպէս արդիւնք, Պօղոս եւ իր խումբը միջոց դարձած էին նոր եկեղեցիի մը ծնունդին Փիլիպպէի մէջ (Գործք 16. 11-15):

Մենք, որպէս հաւատացեալներ, որ Սուրբ Հոգին ունինք մեր մէջ բնակող (Եփես. 2. 22), մեր մեծազոյն փառաքը զինք հաճեցնել պէտք է ըլլայ: Պէտք չէ վշտացնենք Սուրբ Հոգին (Եփես. 4. 30), ուրանալով Անոր ազնուութեամբ ըրած յիշեցումները: Երբ հնազանդինք Անոր, մենք Աստուծոյ կողմէ գործածուած կ'ըլլանք մէկը՝ Քրիստոսի առաջնորդելու – կամ նոյնիսկ մէկու մը կեանքը փրկելու:

**Շիտակ ընտրութիւն ըրէ, հնազանդելով Սուրբ  
Հոգիին ձայնին:**

Ուրբալժ օրերը, որպէս հողեւոր հովիւ, հանգստեան օր նշանակած եմ ես ինծի համար: Սակայն, այդ Ուրբալժ օր, Սուրբ Հոգին ինծի յիշեցուց, որ հեռաձայնեմ առանձին մօր մը, իմանալու թէ իր ինքնաշարժը նորոգուած էր թէ ոչ: Քիչ մը վերապահ զգացի այդ հեռաձայնը ընելու, սակայն հնազանդեցայ Սուրբ Հոգիին եւ ըրի:

Վերջը իմացայ, թէ իմ հնազանդութիւնս պիտի օգնէր այդ կնոջ կեանքին խնայուելուն: Ժամանակ մը ետք, այդ կինը խոստովանեցաւ ըսելով. «Այդ Ուրբալժ օր ծրագրած էի կեանքիս վերջ դնել: Սակայն, նման ճգնաժամի մը ընթացքին, ես







Չորեքշաբթի  
13 Ապրիլ

## Զիրար Քաջալերել

Կարդա՛  
Երբ. 10. 19-25

Ուշադիր ըլլանք  
գիրար հրահրելու սիրոյ  
ու բարի գործերու:  
—Երբ. 10. 24

ԱՍՏՈՒԱՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՋ  
■ Սաղմոս 42-44

**Լ**ոնտոնի Մարաթոն վազքի մրցումին, վերջին գիծէն մէկ մղոն առաջ, ճամբուն երկու կողմերը խճողուած մարդիկ, թռուցիկներ բռնած կ'աղմկեն: Երբ հանդիսատեսներ նկատեն ընտանիքի անդամի մը կամ բարեկամի մը յայտնուելը վազքի ընթացքին, անոր անունը կու տան բարձրաձայն, դրօշակներ կը շարժեն, քաջալերական խօսքեր կը բացականչեն ըսելով. «Քիչ մըն ալ արագ, շարունակէ՛ վազել, շատ չմնաց, գրեթէ հասար»: 25 մղոն վազելէ ետք, շատ մը մրցակցողներ, հազիւ քալելու ոյժ մնացած՝ պատրաստ են կենալու: Զարմանալի բան է տեսնել յոգնաբեկ վազողներ, երբ կը տեսնեն մարդիկ, որոնք իրենց անունը կու տան եւ քաջալերական խօսքեր կ'ըսեն, աւելի կ'արագացնեն իրենց քայլերը շնչասպառ վազելով:

**Քաջալերութիւն.**— Բոլոս ալ պէտք ունինք անոր, մասնաւորապէս մեր հաւատքի քայլարշաւին մէջ: Եբրայեցիներուն նամակը կը պատուիրէ մեզի շարունակել գիրար քաջալերել. «Ուշադիր ըլլանք գիրար հրահրելու սիրոյ ու բարի գործերու: Եւ չլքենք մեր հաւաքոյթները, ...հապա յորդորենք գիրար, այնչափ աւելի՛ որչափ կը տեսնենք այն օրուան մօտե՞նալը» (10. 24-25): Նոր կտակարանը շատ մը յստակ խօսքեր ունի, որոնք կը յայտնեն Յիսուսի վերստին գալը: «Տէրը մօտ է» (Փիլիպ. 4. 5), «Որովհետեւ Տէրը զգալուստը կը մօտե՞նայ» (Յակոբ. 5. 8), «Ահա շուտով կու գամ» (Յայտ. 22. 12):

Մինչ կը տեսնենք Տէրոջ օրուան մօտե՞նալը, գիրար քաջալերենք հաւատքի մէջ. «Շարունակէ՛ վազել հաւատքի մարաթոնը: Գրեթէ հասած ես: Վերջին գիծը արդէն կ'երեւի»:

**Եթէ բան մը իսկ չունիս տալիք, առնուազն կրնաս քաջալերութիւն մը տալ:**





Հինգշաբթի  
14 Ապրիլ

**Երբ Կասկածի  
Մէջ Ենք**

Կարդա՛  
Մատթէոս 11. 1-6

Դո՞ւն ես Աճ՝ որ պիտի  
գար, թէ ուրիշի մը  
սպասենք:  
—Մատթ. 11. 3

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՎ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ

- Դատարարաց 7-9
- Առակաց 5. 15-23

**Ա**յնպէս կը թուի, թէ Յովհաննէս Մկրտիչ յուսաբաբ՝ բանտի իր խուցին մէջ, հարցականի տակ կ'առնէր իր հաւատքը – Արդեօք Յիսուս այն սպասուած Մեսիա՞ն էր: Անոր խօսքերը ճշմարիտ էին: Արդեօք պարա՞յ տեղ ես իր գալուստին համար աշխատեցայ: Այս բանտը արդեօք իմ վարձատրութի՞ւնն է, Աստուծոյ կոչին անսալով իմ տարած աշխատանքներուս համար: Թերեւս այսպիսի անհամար հարցումներ քու ալ մտքիդ մէջ տեղ կը գտնեն երբեմն – Յիսուս իսկապէ՞ս Փրկիչ է: Իմ մեղքերս իրապէ՞ս ներուած են: Կրնա՞մ վստահիլ Աստուածաշունչի խօսքերուն: Արդեօք ես ալ յարութիւն պիտի առնե՞մ մեռնելէս ետք: Իսկապէս երկինք մը կա՞յ մեր առջեւ:

Մեզմէ շատեր, երբեմն այսպիսի հարցումներ կը հարցնեն: Ես ալ կը հարցնեմ՝ մանաւանդ երբ օրերը մութ են եւ պայմանները ցաւ եւ յուսաբաբութիւն կը ստեղծեն:

Այս տեսակի հարցումներ չեն նշանակեր հաւատքի մէջ ձախողութիւն, այլ պարզապէս մեր հաւատքը փորձելու կը ծառայեն եւ կարելի է պատասխանել անոնց Յովհաննէս Մկրտիչի ըրած ձեւով: Ան իր ուզած ժամանակին եւ իր ուզած ձեւով եւ իմաստութեամբ, վստահութիւն պիտի հաստատէ մեր սիրտերուն մէջ:

Յիսուս չլքեց Յովհաննէս Մկրտիչը իր կասկածին մէջ: Ան զրկեց իր պատգամը ըսելով, թէ հրաշքներ կը կատարուին, եւ յաւիտենական կեանքի յոյսը կը քարոզուի (Մատթ. 11. 4-6): Ինչպէս հեղինակ մը ըսած է Աստուծոյ հաւատարմութեան մասին. «Հակառակ մութին, Աստուած ակելի մօտ է անձկութեան մէջ եղող հոգիներուն»:

---

**Երբեք մի՛ կասկածիր մութիմ մէջ, ինչ որ Աստուած քեզի ցոյց տուած է լոյսիմ մէջ:**





Ուրբաթ  
15 Ապրիլ

**Բաւարարութիւն**

Կարդա՛  
Մարկ. 12. 12-17, 41-44

Ուստի կերակուր ու  
ճագնէիք ունենալով՝  
բաւարարուի՛նք  
անոնցմով:  
—Բ. Տիմոթ. 6. 8

ԱՍՏՈՒՍԵՍՆՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՁ  
■ Դասաւորաց 10-12  
■ Առակաց 6. 1-11

**Տ**եղինակի մը կինը՝ Ալիս, յատուկ գաղափար մը կը յղանայ եկամուտի տուրքի վերաբերեալ: Ան կ'ըսէ, թէ «Եկամուտի որոշ գումարէ մը ետք, կառավարութիւնը մնացած բոլոր գումարը պէտք է առնէ որպէս տուրք»: Ան կը խորհի, թէ պէտք է սահման ըլլայ, թէ մարդիկ որքան դրամ կրնան պահել իրենք իրենց համար: Անոր ամուսինը թերթի մը մէջ կ'ըսէր. «Կինս կը հաւատայ բաւարարութեան սկզբունքին»:

Մարկոսի Աւետարանին 12-րդ գլխուն մէջ, Յիսուս կը խուսափի զինք հարցուփորձող մարդուն ծուղակին մէջ իյնալէ եւ կը պատասխանէ. «Ի՞նչ որ կայսրինն է՝ կայսրին տուէք, եւ ի՞նչ որ Աստուծոյ է, Աստուծոյ տուէք» (Հ. 17): Երբ Յիսուս կը դիտէր մարդիկը որոնք դրամ կը դնէին գանձանակին մէջ, Ան ուզեց հոն եղողներուն ուշադրութեան յանձնել կնոջ մը պարագան, որ նախատական կը նկատուէր շատերու կողմէ, անոր համար, որ ան միայն երկու լումայ ձգած էր գանձանակին մէջ: Յիսուս ըսաւ անոնց. «Այս աղքատ այրին բոլորէն աւելի դրամ ձգած եղաւ գանձանակին մէջ: Որովհետեւ բոլորը իրենց առատութենէն ձգեցին, բայց ան իր կարօտութենէն ձգեց՝ իր ամբողջ ունեցածը՝ իր ամբողջ ապրուստը» (Հ. 43-44):

Յիսուս շեշտեց ամբողջական սիրով զԱստուած սիրելու կարեւորութիւնը, քան նիւթական կարիքներով մտահոգուիլը: Իր պաղ վերաբերմունքը դրամի եւ ստացուածքի հանդէպ, արդիւնքն էր վստահութեան՝ իր Հօր՝ Աստուծոյ, որ կարող էր մեր ամէնօրեայ կարիքները հոգալ: Ան ըսաւ. «Ձեր Հայրը գիտէ ձեր պէտքերը՝ դեռ դուք չիմուրած իրմէ» (Մատթ. 6. 8): Բաւարարութիւն - Ի՞նչ լաւ համոզում:

**Գոհունակութիւն չի նշանակեր ունենալ ինչ որ կ'ուզեմք, այլ գոհանալ այն բաներով որ ունիմք:**





Շաբաթ  
16 Ապրիլ

## Վճռական Պահ

Կարդա՛  
Ծննդոց 50. 15-21

Թէեւ դուք ինձի դէմ  
չարիք մտածեցիք,  
սակայն Աստուած  
մտածեց զայն բարիքի  
վերածել, որպէսզի  
շատ ժողովուրդ ողջ  
պահէ:  
—Ծննդոց 50. 20

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Դատարարաց 13-15
- Առակաց 6. 12-19

որեւէ ձեռով կարելի է յաղթահարել զգացական այն սպիները, որոնք իրենց հետքը ձգած են մեր վրայ: Սակայն, Աստուծոյ մեզ բարեփոխելու զօրութիւնը, կրնայ յաղթահարել այդ բոլորը: Յովսէփի կեանքը շատ խօսուև օրինակ մըն է այս առնչութեամբ (Ծննդ. 37-50): Եղբայրները, որոնք զինք որպէս գերի ծախեցին, կ'ակնկալէին, որ ան անպատճառ վրէժխնդիր ըլլար (50. 15-17): Բայց Յովսէփ ըսաւ. «Թէպէտ դուք ինձի դէմ չարիք մտածեցիք, Աստուած մտածեց զայն բարիքի վերածել, որպէսզի շատ ժողովուրդ ողջ պահէ, ինչպէս այսօր եղաւ» (Հ. 20):

Երբ մենք մեր վրէժխնդիր ըլլալու միտումը Աստուծոյ ձեռքերուն մէջ դնենք, մասնակցած կ'ըլլանք այն կարեւոր գործին, որ Պօղոս Առաքեալ կը պատուիրէ. «Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիով յաղթէ՛ չարին» (Հռովմ. 12. 21):

Մեր կեանքին վճռական պահերը, որոշուած չեն մեզի չարիք հասցնելու, այլ Աստուծոյ շնորհքին եւ զօրութեան վստահելով, անոնք կրնան բարիին գործակից դառնալ:

**Թող վտանգը քեզ աւելի մօտեցնէ Յիսուսի:**

**Ա** շխարհի ամէն կողմ մարդիկ ապշած մնացին, երբ 2007-ին Վըրճինիա Համալսարանի մէջ պատահեցաւ այն ոճրային արարքը, որ 32 հոգիներու մահուան պատճառ դարձաւ: Ծանրօրէն վիրաւորուած, սակայն վերապրած աշակերտի մը մայրը ըսաւ, թէ ինք չ'ուզեր, որ այդ ծանր դէպքը իր գաւկիտ կեանքին մէջ նկատուի ցաւառիթ պահ մը: Այլ, անոր փոխարէն, ան կը փափաքէր, որ այդ տխուր դէպքը «կեանքը փառաբանող՝ դրական արդիւնք մը ունենար»:

Երբ մեր միտքէն չանցած՝ ծանր բաներ պատահին, յաճախ մեզի անկարելի կը թուի հաւատալ՝ թէ որեւէ ձեռով կարելի է յաղթահարել զգացական այն սպիները, որոնք իրենց հետքը ձգած են մեր վրայ: Սակայն, Աստուծոյ մեզ բարեփոխելու զօրութիւնը, կրնայ յաղթահարել այդ բոլորը: Յովսէփի կեանքը շատ խօսուև օրինակ մըն է այս առնչութեամբ (Ծննդ. 37-50): Եղբայրները, որոնք զինք որպէս գերի ծախեցին, կ'ակնկալէին, որ ան անպատճառ վրէժխնդիր ըլլար (50. 15-17): Բայց Յովսէփ ըսաւ. «Թէպէտ դուք ինձի դէմ չարիք մտածեցիք, Աստուած մտածեց զայն բարիքի վերածել, որպէսզի շատ ժողովուրդ ողջ պահէ, ինչպէս այսօր եղաւ» (Հ. 20):

Երբ մենք մեր վրէժխնդիր ըլլալու միտումը Աստուծոյ ձեռքերուն մէջ դնենք, մասնակցած կ'ըլլանք այն կարեւոր գործին, որ Պօղոս Առաքեալ կը պատուիրէ. «Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիով յաղթէ՛ չարին» (Հռովմ. 12. 21):

Մեր կեանքին վճռական պահերը, որոշուած չեն մեզի չարիք հասցնելու, այլ Աստուծոյ շնորհքին եւ զօրութեան վստահելով, անոնք կրնան բարիին գործակից դառնալ:

**Թող վտանգը քեզ աւելի մօտեցնէ Յիսուսի:**







Կիրակի  
17 Ապրիլ

## Ոչ Կատարեալ Նուէրներ

Կարդա՛  
Յակոբ 1. 2-18

Ամէն բարի նուէր եւ  
ամէն կատարեալ  
պարգեւ՝ վերէն է, ու  
կ'իջնէ լոյսի Հօրմէն:  
—Յակոբ 1. 17

ԱՍՏՈՒԾՆՈՒԹՅԱՆ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ

- Դատարարաց 16-18
- Առակաց 6. 20-35

Ծնողներ իրենց զաւակներուն հացի փոխարէն քար չեն տար, ոչ ալ օձ մը ձուկի մը փոխարէն: Աստուած մեզ աւելի կը սիրէ քան մեր երկրային ծնողները (Մատթ. 7. 9-11):

Այս չի նշանակեր, որ Աստուծոյ հաւատացողներ պէտք է ակնկալեն ցաւէ եւ նեղութենէ՛ գերծ կեանք մը: Յակոբոս Առաքեալ կ'ըսէ, թէ ոչ միայն ամէն կատարեալ պարգեւ կու գայ մեր Երկնաւոր Հօրմէն (1. 17), բայց նաեւ պէտք է «բողոքովին ուրախութիւն համարենք», երբ «զանազան փորձութիւններու մէջ իյնանք»: Մեր հաւատքը փորձելը «համբերութիւն կ'իրագործէ», եւ համբերութեամբ եղած գործը մեզ «կատարեալ եւ ամբողջական կ'ընէ, ոչինչ պակաս ձգելով» (հ. 2-4):

Եթէ նոյնիսկ, երբ բան մը ստանանք, որ մեզի լաւ չթուի, կրնանք դարձեալ երախտապարտ ըլլալ, որովհետեւ ան մեր տեսածէն աւելի է: Այն պարգեւը, որ ոչ կատարեալ կը թուի մեզի, կրնայ ըլլալ, որ անով Աստուած կ'ուզէ մեզ կատարեալ ընել:

---

**Փորձութիւն մը կրնայ Աստուծոյ լաւ նուէրը  
ըլլալ մեզի՝ թաքնուած ձևով:**

**Ե**րբ մանուկ էի, կը զարմանայի, թէ ինչո՞ւ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու էի այն կերակուրին համար, որ չէի ուզեր ուտել: Իմ տհաս մտքով, երախտապարտութիւնը շնորհակալութեան զգացում մըն է: Օրինակ, երբ ուտելիք կամ խմելիք ուզեմ եւ ստանամ զայն, պէտք է շնորհակալութիւն յայտնեմ: Իմ չուզած բանիս համար ինչո՞ւ շնորհակալութիւն յայտնեմ:

Մարդկային տրամաբանութեամբ, թերեւս իմ մտածածս տրամաբանական թուի:

Սակայն, հարցը Աստուծոյ պարագային բողոքովին տարբեր է: Ինչպէս Յիսուս կը յիշեցնէ մեզի, սիրող





Երկուշաբթի  
18 Ապրիլ

## Ներուած

Կարդա՛ր  
Սաղմոս 103. 1-12

Երանի անոր որուն  
յանցանքները  
ներուեցան, եւ անոր  
մեղքը ծածկուեցաւ:  
—Սաղմոս 32. 1

ԱՍՏՈՒԱՍԵՆՈՒՆԵՐ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Դատարարաց 19-21
- Առակաց 7. 1-5

**Թէ մեղք կոչուած իրականութիւնը ներուած է:** Աստուածաշունչը կ'ըսէ, թէ «Քրիստոսով մենք ազատագրութիւն ունինք, իր արիւնով, այսինքն մեղքի ներում» (Կողոս. 1. 14): Բոլոր անոնք, որոնք ընդունած են Տէր Յիսուսը որպէս իրենց Փրկիչը, կը վայելեն իրենց մեղքերէն թողութիւն գտած ու յաւիտենական դատապարտութենէ փրկուած ըլլալը (Հռովմ. 8. 1): Մենք կրնանք նաեւ ամէնօրեայ մաքրութիւն ունենալ եւ թողութիւն գտնել (Ա. Յովհ. 1. 9):

Առաքեալը կ'ըսէ նաեւ, թէ փրկութիւնը կրնայ մեզի պարզեւել յաւելեալ բարիքներ, ինչպէս արդարացում (Հռովմ. 3. 24) եւ հաշտութիւն ու խղարկութիւն Աստուծոյ հետ (Յ. 1): Առաքեալին խօսքերը մեզի այն տպաւորութիւնը կու տան, թէ Աստուած լրջօրէն նկատի կ'առնէ մեր մեղքերը: Սակայն, երբ խոստովանինք զանոնք ճշմարիտ ապաշխարութեամբ, Աստուած պատրաստ է մեզի ներելու Քրիստոսի Խաչին վրայ գոհաբերութեամբ: Մեզի կը մնայ հաւատալով ընդունել այդ փրկութիւնը:

**Երբ Աստուած մեզի ներէ մեղք մը, Ան անգամ մըն ալ գայն չի յիշեր:**

**Մ**այր մը, երբ իր պզտիկ տղեկը անկողին կը դնէր քննաչափ համար, սպասեց որ ան աղօթէ: Սակայն տղեկը այդ օր չար եղած էր եւ անհանդիստ կը զգար աղօթելու: Ուրեմն մօրը կ'ըսէ: «Մամա, կ'ուզեմ որ զիս առանձին ձգես: Ես կ'ուզեմ առանձին աղօթել»:

Մայրը զգալով տղեկին ունեցած դժուարութիւնը կը հարցնէ. «Բան մը կա՞յ որ կ'ուզես ինծի ըսել»:

«Ո՛չ, մամա» կը պատասխանէ տղեկը: «Դուն զիս պիտի յանդիմանես, բայց Աստուած պիտի ներէ եւ մոռնայ ըրածս»:

Այդ տղեկը հասկցած էր փրկութեան մեծագոյն բարիքներէն մէկը,



Երեքշաբթի  
19 Ապրիլ

## Չեւացնել

Կարդա՛  
Յովհ. 17. 6-19

Երբ մանուկ էի,  
մանուկի պէս կը  
խօսէի, մանուկի պէս  
կը մտածէի... Բայց երբ  
այր մարդ եղայ,  
մանկական բաները  
մէկ կողմ դրի:  
—Ա. Կորնթ. 13. 11

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԷՁ

- Յովհաննու 16-21
- Առակաց 7. 6-27



Երեւոյթ մըն է երեք տարեկան մանուկի մը համար: Սակայն, կան մարդիկ, որոնք այդ ձեւացնելու սովորութիւնը իրենց հետ կը պահեն հասունութեան տարիքի մէջ ալ, երբ եկեղեցի յաճախեն: Ինչ որ անոնք կ'ընեն եկեղեցիին մէջ, երբեք չի համապատասխաներ շաբթուան ընթացքին իրենց ըրածներուն: Կիրակի օր՝ անոնք սրտանց կը փառաբանեն զԱստուած, սակայն Երկուշաբթի անոնք տարբեր մարդիկ կը դառնան:

Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս գիտէ, թէ մենք դիւրաւ կրնանք այդ փորձութեան մէջ իյնալ: Ասոր համար, Ան աղօթեց Իր Հօր. «Ձեմ թախանձեր, որ վերցնես զանոնք աշխարհէն, հապա, որ պահես զանոնք չարէն (Յովհ. 17. 15):

Աստուած մեզ դրած է մեր գտնուած տեղը, որպէսզի բարեփոխութիւն կատարենք մեր շրջանակէն ներս: Ան միշտ պատրաստ է մեզ պաշտպանելու չարէն եւ կ'ուզէ, որ ապրինք հաւատքի նոյն մակարդակին վրայ, ամէն օր եւ ամէն պարագայի տակ, ոչ միայն կիրակի օր:

**Կարգ մը մարդիկ երկինքը իրենց լեզուներում վրայ ունին, իսկ աշխարհը՝ իրենց սրտին մէջ:**





Չորեքշաբթի  
20 Ապրիլ

## Մշտատեւ Խօսք

Կարդա՛ր  
Ա. Պետրոս 1. 17-25

Երկինքն ու երկիր  
պիտի անցնին, բայց  
Իմ խօսքերս բնաւ  
պիտի չանցնին:  
—Մարկոս 13. 31

ԱՍՏՈՒԾՆՈՒՆԵՐ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆ ԱԷՁ  
■ Աղամու 45-47

**Ծովի մագաղաթներուն գտնուիլը: Աստուծոյ Խօսքը գոյատեւած էր դարերու ընթացքին:**

Երբ կը դիտէի այդ ձեռագիրերը, խորապէս ազդուեցայ Աստուծոյ Խօսքին տեւականութենէն: Աստուծոյ Խօսքին մշտատեւ ըլլալու բնոյթին շնորհիւ է, որ մենք վստահութիւն կրնանք ունենալ այն պատգամներուն վրայ, որ ան կը պարունակէ: Յիսուսի ըսաւ. «Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ Խօսքերս բնաւ պիտի չանցնին» (Մարկոս 13. 31): Ետքը Յիսուսի աշակերտներէն՝ Պետրոս պիտի գրէր. «Արդարեւ, ամէն մարմին խոտի պէս է, ու մարդուն ամբողջ փառքը՝ խոտի ծաղիկի պէս: Խոտը կը չորնայ եւ անոր ծաղիկը կը թափի, բայց Տէրոջ Խօսքը կը մնայ յաւիտեան» (Ա. Պետ. 1. 24-25):

Աստուծոյ Խօսքը կը գոյատեւէ դարերու ընթացքին, եւ տակաւին կը մնայ որպէս ամենէն վստահելի եւ այժմէական եւ առաջնորդող Խօսքը, ճշմարիտ կեանք սպրեւելու համար:

**Կողմնացոյցի մը պէս, Աստուածաշունչը միշտ  
ցոյց կու տայ շիտակ ուղղութիւնը:**

**Ի**րլանտայի Տապլին Բերդին մէջ, կայ գեղեցիկ գրադարան մը, որ կոչուած է բարեսիրական նպատակներու նուիրատուի մը անունով: Այդ գեղեցիկ եւ ճոխ գրադարանը կը պարունակէ նաեւ Հնադարեան սուրճի խանութ մը եւ այլազան իրերու ցուցադրութիւն:

Ցուցադրութեան մէջ իմ ուշադրութիւնս գրաւեց Հին ձեռագիրերը: Դանդաղօրէն քայեցի այն բաժինին մէջ, ուր ցուցադրուած էին Նոր Կտակարանի Աւետարաններէն կտորներ, թուագրուած Քրիստոսէ ետք երրորդ դար: Այդ մագաղաթները ամենէն հինը կը նկատուէին մինչեւ 20-րդ դարու կէսերուն Մեռեալ





Հինգշաբթի  
21 Ապրիլ

**Վերադառնալ  
Շահադրումի**

Կարդա՛  
Ա. Կորնթ. 6. 12-20

Քանի որ մեծ գինով  
մը գնուեցաք, ուստի  
փառաւորեցէ՛ք  
Աստուած ձեր  
մարմինից ու ձեր  
հոգիից մէջ:  
—Ա. Կորնթ. 6. 20

ԱՍՏՈՒԾԱՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Հոուք 1-4  
■ Առակաց 8. 1-11

ընդհանուր յաջողութեան համար անոր բերած նպաստէն:

**Ա. Կորնթ. 6. 20**-ի մէջ, Առաքեալը կը յիշեցնէ, թէ մենք ալ գնուած ենք՝ մեզի համար վճարուած գումարով մը: Բնազիրը կը ներկայացնէ հիացում պատճառով նկար մը՝ Յիսուսի մեծ զոհաբերումը ներկայացնելով: Յիսուս իր խաչելութեամբ ազատագրեց մեզ՝ մեղքի գերութենէն, ծախու առաւ մեզ իր կեանքի բարձր գինով:

Ըմբռնումը Աստուծոյ սիրոյն մեծ ներդրումին՝ ի խնդիր մեր փրկութեան, պէտք է հրահրէ ուրախութեամբ նկատի առնել եւ արժեւորել իր զոհաբերութիւնը: Այս մէկը կարելի է ընել փառաբանութեամբ լեցուն մեր կեանքով: Մեր աչքերը, ձեռքերը, ոտքերը, խորհուրդները, երազներն ու փափաքները տրամադրելով իրեն եւ մեր կեանքով իր կամքն ու իմաստութիւնը արտացոլացնելով:

Առաքեալը կ'եզրակացնէ. «Ուստի փառաւորեցէ՛ք Աստուած ձեր մարմինն...մէջ» (Վ. 20): Այսպիսի կեանքով է, որ կրնանք հաճեցնել մեր կեանքին Տէրը եղող՝ Հայր Աստուած:

**Աստուծոյ փառք բերելու համար պէտք է  
անդրադառնալ Յիսուսի մեծ զոհաբերութեան:**





Ուրբաթ  
22 Ապրիլ

## Ուրախ Երկրի Օր

Կարդա՛ր  
Սաղմոս 148

Որովհետեւ միայն Անոր անունը վսեմ է, Անոր փառաբանութիւնը երկրէն ու երկինքէն վեր է: —Սաղմոս 148. 13

ԱՍՏՈՒԱՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԵՒՋ

- Ա. Թագ. 1-3
- Առակաց 8. 12-31

դը: Ականատեսի այս փորձառութիւնը մեզ կը ձգէ խոկումի մը տակ, եւ կ'անդրադառնանք, թէ ի'նչ շքեղ եւ տպաւորիչ լուսագունդ մըն է այս երկրագունդը:

Այսօր «Երկրի Օր» է, յիշատակելու մեր այս երկրագունդատունը եւ յիշեցնելու մեզի՝ մեր ունեցած պարտաւորութիւնները անոր հանդէպ, որպէս ուշադիր տնտեսներ: Սակայն, շատ վտանգաւոր շեղում մըն է այս եզակի եւ մեծ բնակավայր աշխարհին մեծութիւնն ու շքեղութիւնը տօնակատարելը, զայն միւս մոլորակներուն հետ բաղդատելով, որովհետեւ դուրս ձգած կ'ըլլանք կարեւոր բանալի կէտ մը: Աշխարհի հրաշալի մեծութեան վրայ խորհրդածելը պէտք է մեզի յիշեցնէ, թէ մենք պարզապէս «Անոր արօտին ժողովուրդն ենք» (Սաղմ. 95. 7), եւ պէտք է պաշտենք «Մեզ ստեղծող Տէրը» (Հ. 6): Միայն Ան արժանի է մեր փառաբանութեան եւ պաշտամունքին (Սաղմ. 148. 5):

Շնորհակալ ենք, Տէ՛ր, Քեզ պաշտել յիշեցնող ստեղծագործութեանդ համար:

**Ո՛րքան յիմարութիւն է պաշտել արարչութիւնը,  
երբ կայ այնքան մեծ Արարիչը:**

**Պ**էտք չունինք անպայման շրջելու Ալաքայի «Յարութեան Ծոց» կոչուած բնութեան հրաշալիքներուն մէջ, գնահատելու համար սքանչելիքները մեր այս երկրին: Սակայն, այդ շրջիլը մեծապէս կ'օգնէ: Պէտք չունինք անպատճառ ձրմէյքայի տաք ջուրերուն մէջ լողալու, որպէսզի տպաւորուինք ծովային թաքնուած այն գեղեցկութենէն, որ մեր մոլորակը ունի, բայց այդպէս ընելը կ'օգնէ: Դուն պէտք չունիս անպատճառ ձրպրայթարի ապառաժը դիտելու, կամ նայելու Փիճի լեռան, անդրադառնալու, թէ ո՛րքան սարափազդու եւ ներշնչող տեսարաններ ունի այս երկրագունդը:





Շաբաթ  
23 Ապրիլ

## Երայտագիտութեամբ Մղուած

Կարդա՛  
Գործք 20. 22-24

Հաստատուն եւ անշարժ եղէք, ու ամէն ատեն յառաջդիմեցե՛ք Տէրոջ գործին մէջ, գիտնալով, թէ ձեր աշխատանքը ընդունայն չէ Տէրոջմով:

—Ա. Կորնթ. 15. 58

ԱՍՏՈՒԱՍՏՆՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏՈՒՌՈՒՆ ՄԷՋ

■ Ա. Թագ. 4-6

■ Առակաց 8. 32-36

տրամադրութեան տակ, եւ ապահով ապագայ մը:

Թող թոյլ կը բացատրէ, թէ ինք կը շարունակէր գրել, որովհետեւ ինք գերին էր ներքին պարտադրանքի մը եւ զօրաւոր փափաքի մը՝ իր ոսկորներուն խորը: Ան կը զգար, որ պէտք էր շարունակ գրել, հակառակ պարագային կրնար խենթանալ:

Պօղոս Առաքեալ կարծես նման պարտադրանքի մը փորձառութիւնը ունէր, միայն մէկ տարբերութեամբ, որ անոր մղումը Աստուծոյ կողմէ հրահրուած էր: Ինչպէս ան կը բացատրէր Կորնթոսի իր բարեկամին. «Որովհետեւ Քրիստոսի սէրը կը պարտադրէ մեզ» (Բ. Կորնթ. 5. 14): Առաքեալը ունէր այրող կարեկցութիւն մը, զգացումի կրակ մը եւ հոգեկան ներքին ոյժ մը, որ զինք կը մղէր բաժնեկցելու Աւետարանին փրկութեան բարի լուրը:

Այդ զոհաբերուող եռանդը կը յայտնուի Յիսուսի շատ մը հետեւողներու նկարագրին մէջ՝ դարերու ընթացքին: Թող բոց մը այդ կրակէն վառի մեր սիրտերուն մէջ:

**Բարի լուրը այնքան բարի է, որ չենք կրնար գայն միայն մեզի պահել:**

Որն է մեծագոյն վէպը, որ գրուած է աշխարհի պատմութեան մէջ: Շատեր թերեւս պիտի ըսեն Լէօ Թոլսթոյի «Պատերազմ եւ Խաղաղութիւն» վէպը՝ որուն կարգ մը հրատարակութիւնները կը բաղկանան աւելի քան 1000 էջերէ: Նոյնիսկ իր վէպը վերջացնելէ ետք, Թոլսթոյ շարունակած է գրել, ու ժամպառ ըլլալու աստիճան, անկարող քնանալու եւ աշխատելու վիճակի մը հասած:

Օր մը, բարեկամ մը կը հարցնէ, թէ ինչո՞ւ շարունակ կը գրէր մինչեւ ուժաթափ ըլլալը: Ան կ'ըսէ Թոլսթոյի, թէ ինք հարուստ ուռու կոմս մըն էր եւ ունէր ծառաներ իր





Կիրակի  
24 Ապրիլ

**Հաւատքի Փորձութիւնը  
Հիմն է Հաւատքի**

Կարդա՛  
Յակոբ 1

Եղբայրներս, բոլորովին ուրախութիւն համարեցէք, երբ զանազան փորձութիւններու մէջ իյնաք, գիտնալով թէ ձեր հաւատքին փորձը համբերութիւն կ'իրագործէ: —Յակոբ 1. 2

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Ա. Թագ. 7-9  
■ Առակաց 9. 1-9

**Ե**րբ Սուրբ Գրային այս խորհուրդով ճամբայ ելլենք, փորձութիւնները ուրախութիւն համարելու երկնային կոչ մը ունինք: Սակայն, երբ յիշենք Հայ ժողովուրդի ցեղասպանութեան արհաւիրքը, Սուրբ Գրային այս համարը պահ մը մտածել կու տայ մեզի, թէ ի՞նչպէս կարելի է ուրախութիւն համարել ցեղասպանութեան փորձառութիւնը: Յակոբոս Առաքեալ այս խօսքը ուղղեց առաջին դարու քրիստոնեաներուն, որոնք կ'ենթարկուէին ահեղ հալածանքներու: Բերանը լայն բացած անօթի առիւծներու դիմաց կեցած, առաջին քրիստոնեայ նախահայրերը ի՞նչպէս կրնային իրենց վիճակը ուրախութիւն համարել:

Աստուած չ'ըսեր «վայելեցէ՛ք ձեր փորձութիւնները, Հալածանքներն ու դժբախտութիւնները»: Աստուած գիտէ, թէ քանի կ'ապրինք այս աշխարհին մէջ, փորձութիւն եւ տառապանք պիտի ունենանք: Երբ ենթարկուինք փորձութեան, երկու ճամբայ ունինք: Կա՛մ կ'ընկճուինք, կը լքենք ու կը կորսցնենք մեր հաւատքը, եւ կա՛մ զայն ուրախութիւն կը համարենք եւ համբերութեամբ կը դիմագրաւենք: Առաքեալը կը նախընտրէ երկրորդ ճամբան – Աստուծոյ դէմ կարծր դիրք բռնելու եւ մեր հաւատքը լքելու փորձարէն, ան կը նախընտրէ բոլորովին ուրախութիւն համարել մեր փորձութիւնները: Պատմութիւնը կ'ապացուցանէ, թէ այն է լուսադոյն ճամբան, վկայ՝ մեր նահատակները: Մենք կրնանք միխթարուիլ ցեղասպանութեան փորձութիւնն ալ ուրախութիւն համարելով: Իսկ զայն գործադրողները պիտի տառապին այնքան ատեն, որ գիտակցօրէն չեն ընդունիր իրենց սխալը եւ, զղջալով, դարձի գան ու խնդրեն Աստուծոյ ողորմութիւնը:

**Ցեղասպանութեան փորձութիւնը հիմն է մեր հաւատքին: Յարգանք մեր մահատակներուն:**







Երկուշաբթի  
25 Ապրիլ

## Խաղ Մը 2է

Կարդա՛  
Մարկ. 8. 31-38

Ո՛վ որ իմ ետեւէս գալ կ'ուզէ, թող ուրանայ ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինձի: —Մարկ. 8. 34

ԱՍՏՈՒԾՆԱԿՆԵՐԸ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆՔ ՄԷՅ

- Ա. Թագ. 10-12
- Առակաց 9. 10-18

Թիւնները, բան մը սխալ է Աստուծոյ տեսակէտով: Շիտակ չէ ոտնակոխ ընել մարդոց զգացումները, շեղիլ կամ բեկանել օրէքները եւ յաղթանակներու տեսչալ:

Կեանքին մօտենալ որպէս մեծ խաղ մը, որ միշտ կը փորձենք շահիլ, կը նշանակէ ապրիլ անյոյս եւ երեւակայական պատրանքի մը մէջ: Թէեւ նիւթական հարստութիւն, մասնագիտական յաջողութիւններ եւ անձնական յաղթանակներ հաճելի կը թուին մեզի, սակայն անոնք կը տեսնն միայն այս կեանքի ընթացքին: Յետոյ, ամէն ինչ ետեւ կը ձգուի:

Յիսուս իր աշակերտներուն ուսուց իրենց անձերը ուրանալ, իրենց խաչը վերցնել եւ հետեւիլ իրեն անձուրացութեամբ: Շատերու համար ատիկա նշանակեց նոյնիսկ մահ (Մարկ. 8. 34-35): Ան շատ յստակ ըրաւ իր աշակերտներուն, թէ արուեստական յաղթանակներ «կեանքի խաղ»ին մէջ, շատ արժէք չունին: Արժէք ունեցող իրազործումը, Տէրոջ համար մեր ըրածն է:

**Անոնք որոնք Աստուծոյ համար կ'ապրին, անոնք են ճշմարիտ շահողները այս կեանքին մէջ:**

**Ի**մ նախկին դրացիս յաճախ կը գործածէր «Կեանքին Խաղը» խօսքը: Հիմա կը հասկնամ, թէ ինչո՞ւ այդպէս կ'ըսէր: Մարդկային բնութեան մէկ մասն է մօտենալ կեանքին որպէս մեծ խաղ մը, կազմուած փոքր խաղերէ:

Մրցակցիլը կրնայ հաճոյք նկատուիլ, հետաքրքրական եւ հրահրող: Բայց մարդկային կեանքը՝ իր ամբողջութեան մէջ, խաղ մը ըլլալէ աւելի բան մըն է՝ մասնաւորաբար քրիստոնեային համար: Երբ հաւատացեալ մը ուզէ մեծ տուն մը ունենալ, մեծագոյն ինքնաշարժը քշել, պաշտօնի բարձրացում ունենալ եւ շահիլ բոլոր վիճաբանու-





Երեքշաբթի  
26 Ապրիլ

### Յարգանք

Կարդա՛ր  
Եսթեր 1. 1-5, 9-12

Քիչ մը վար ըրիր զայն հրեշտակներէն, փառքով ու պատիով պսակեցիր զանիկա: —Սաղմ. 8. 5

ԱՍՏՈՒՆՍԵՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Գործք 1-6  
■ Առակաց 10. 1-11

**Ա**մերիկացի երգչուհի, Արէթա Ֆրէնքլին, 1967-ին, բարձրագոյն մրցանակը շահեցաւ իր «Յարգանք» երգով: Շուտով այդ երգը նկատուեցաւ ներշնչող օրհներգ մը, քաղաքացիական իրաւունքներու շարժումին, նաեւ բոլոր անոնց, որոնք կը փնտռէին, որ մարդիկ յարգանքով վարուէին իրենց հետ:

Արէթայէն շատ առաջ, Պարսկաստանի Վաշտի Թագուհին իր երկրի բարձրագոյն գաղաթին վրայ կը գտնուէր «Յարգանքի» իր մեկնաբանութեամբ: Եսթերի գիրքը կը սկսի Ասուերոս Թագաւորի մեծ խնձոյքի պատմութիւնով: Իր հարստութիւնն ու զօրութիւնը ցուցադրելու կողքին, Ասուերոս Թագաւոր ուզած էր նաեւ ցոյց տալ իր կնոջ գեղեցկութիւնը: Ասոր համար հրամայեց, որ Վաշտի Թագուհին բերեն իր եւ իր հիւրերու ներկայութեան: Եթէ Թագուհին հնազանդէր, ան թոյլ տուած պիտի ըլլար, որ Թագաւորը զինք պատուազրկէ եւ անարգէ: Իսկ միւս կողմէ, եթէ մերժէր հնազանդիլ, ան իր կեանքը վտանգած պիտի ըլլար: Թագուհին կը մերժէ եւ չ'ուզեր զիջիլ իր նկարագրէն, ինքզինք կտոր մը ապրանքի վերածած՝ ցուցադրութեան դրուելու: Տեղ մը չէ ըստւած, թէ Վաշտի Թագուհին աստուածավախ էր: Սակայն իր քաջութիւնը ցոյց կու տայ, թէ ան հասկցած էր եւ ունէր արժանապատուութեան գիտակցութիւն մը, որ Աստուծմէ տրուած է եւ տեղ գտած՝ իրաքանչիւր մարդ արարածի մէջ: Աստուած մեզ իր պատկերով ստեղծած է եւ պսակած՝ փառքով ու պատիւով, «հրեշտակներէն քիչ մը վար դասելով» (Սաղմ. 8. 5): Զինք սիրելու եւ մեծարելու հետ մէկտեղ, լաւ է, որ իրարու հետ վարուինք յարգանքով եւ ակնածանքով:

**Մեր ճանցած ամենէն դաժան մարդիկն իսկ, Աստուծոյ պատկերը կը կրեն իրենց մէջ:**





Չորեքշաբթի  
27 Ապրիլ

**Աստուծոյ Թարմացնող Խօսքը**

Կարդա՛  
Եսայի 55. 8-11

Իմ խօսքս ալ... ինձի  
ապարդիւն պիտի  
չվերադառնայ:  
—Աղամ. 8. 5

ԱՍՏՈՒԾՆԵՐՆԵՐ ՄԷ՛՞՞՞  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷ՛՞՞՞  
■ Աղամսաց 48-50

**Ե**րբ պզտիկ տղայ մըն էի, մեր ընտանիքը յաճախ կը ճամբորդէր Նէվատայի մէկ կողմէն միւսը: Ընկերակցելով փայլատակումին, շանթեր, որոտումներ եւ հավայ անձրեւի տարափներ, տաք աւազին վրայ կը տարածուէին այնքան հեռու՝ որքան մեր աչքերը կարող էին տեսնել: Չովացնող ջուրը կը թարմացնէր երկիրը եւ մեզ:

Չուրը մեծ բարեփոխութիւն կը բերէ անջրգի շրջաններու մէջ: Օրինակ, կարգ մը բոյսեր, որոնք կը մնան քնացած չոր եղանակին, ամառուան առաջին անձրեւին, արագ կ'աճին եւ կը ծաղկին փափուկ եւ գոյնզգոյն թերթեր արձակելով:

Եսայի մարգարէ ծանօթ էր անձրեւի նորոգող յատկութեան, որովհետեւ Երուսաղէմի շրջանին մէջ ալ տեղատարափ անձրեւէ մը եւ չոր հողը ջուրը զայն ծծելէ ետք, ցանուած հունտերը արագօրէն կ'աճին: Այս պատկերով կը բացատրէ Աստուծոյ Խօսքին թարմացնող յատկութիւնն ու գորութիւնը եւ կ'ըսէ. «Ինչպէս անձրեւն ու ձիւնը երկինքէն կ'իջնեն եւ հոն չեն դառնար, հապա երկիրը կ'ուռէն ու զայն պտղաբեր եւ արգասաւոր կ'ընեն, ցանողին հունտ եւ ուտողին հաց կու տան, իմ բերնէս ելած Խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ, ինձի պարսպ պիտի չդառնայ, հապա իմ կամքս պիտի կատարէ, եւ յաջողութեամբ գործադրէ այն բանը, որուն համար զայն ղրկեցի» (Ես. 55. 10-11):

Աստուծոյ Խօսքը իր մէջ ունի եւ իրեն հետ կը բերէ հոգեւոր յատուկ կենսունակութիւն մը: Ատոր համար է, որ անիկա պարսպ չի դառնար: Այնտեղ ուր ան բաց սիրտ մը գտնէ, հոն կը բերէ թարմութիւն, սնունդ եւ նոր եւ առողջ կեանք:

**Աստուածաշունչը ծարաւած հոգիին համար այն քանն է, ինչ որ ջուրն է չոր ու ամուլ հոգիին:**





Հինգշաբթի  
28 Ապրիլ

## Մեծ ազոյն Նուէրը

Կարդա՛  
Յոր. 2

Անոր ճետ եօթը օր ու  
եօթը գիշեր գետինը  
ճստան: Ոչ մէկը անոր  
խօսք մը ըսաւ:  
—Յոր. 2. 13

ԱՍՏՈՒԱՍՏԱՇՈՒՆԸՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԵՒ ՄԷՅ

- Ա. Թագ. 13–15
- Առակաց 10. 12–21

Քիչ մը իրենց տրամադրութիւնը փոխել: Իմ ներկայութիւնս  
ի՞նչ ձեռով կրնայ օգտակար ըլլալ իրենց:

Մեծ աւետարանիչ մը կը պատմէ, թէ օր մը մեռելատուն  
կ'երթայ յուղարկաւորութեան մը մասնակցելու: Սակայն,  
սխալմամբ մեռելատան ուրիշ մէկ բաժինը կը մտնէ: Կը  
տեսնէ տարեց մարդ մը դադաղին մէջ եւ միայն անոր  
այրին, առանձին կեցած: Խղճալով, կ'որոշէ մնալ այդ  
առանձին կնոջ հետ եւ մինչեւ գերեզմանատուն ալ երթալ:  
Թաղման արարողութենէն ետք, աւետարանիչը իր  
ցաւակցութիւնները կը յայտնէ եւ կ'ըսէ, թէ ինք չէր  
ճանչնար իր ամուսինը: «Կարեւոր չէ», կ'ըսէ կինը: «Ձեռ  
կրնար երեւակայել, թէ որքան մխիթարութիւն եղաւ ինծի  
ձեր ներկայութիւնը»:

Յաւի մէջ եղողներ յաճախ կը յիշեն իրենց մօտ եղող  
լուռ մարդիկը: Մէկը, որ հոն էր եւ կը լսէր գիրենք  
առանց ժամացոյցին նայելու: Այլ խօսքով, մատչելի էր  
եւ եկած էր տառապողին ցաւը բաժնեկցելու:

---

**Յանախ լաւագոյն մխիթարութիւնը պարզապէս  
հոմ ներկայ ըլլալն է:**





Ուրբաթ  
29 Ապրիլ

**Գառնուկը Իմ  
Հովիւս է**

Կարդա՛  
Սաղմոս 23

Գառնուկը որ գառին  
մէջտեղն է, պիտի  
հովուէ գառնք:  
—Յայտ. 7. 17

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ

- Ա. Թագ. 16-18
- Առակաց 10. 22-32

մէջ գրուածները կ'ըսէր. «Տէրը Իմ Հովիւս է»:

Իր սխալը մտածել կու տայ իրեն այդ հարցին մասին: Կը յիշէ, որ Աստուածաշունչը ներկայացուցած է Յիսուսը, թէ՛ որպէս «Բարի Հովիւ» եւ թէ՛ որպէս «Աստուծոյ Գառնուկը»: Այդ երգահանը կ'ըսէ իր ընկերներուն. «Ես տեսայ մեր Տէրոջ Աւետարանին փառաւորութիւնը նոր լոյսի մը տակ: Յովհաննէս Առաքեալ ինծի յիշեցուց, Պաթմոս Կղզիին վրայ տեսած իր տեսիլքով, թէ յարուցեալ «Գառնուկը՝ որ գահին մէջտեղն է, պիտի հովուէ իր ժողովուրդը, նոյնիսկ երբ անոնք երկինք հասնին: Այդ պատին վրայ դրուած համարին սխալ ընթացքովը, ինծի համար մեծ օրհնութիւն եղաւ: Այո՛, անիկա կրնար իրապէս կարդացուիլ - «Գառնուկը Իմ Հովիւս է»:

Մեզ գօտեպնդող ճշմարտութիւնը գիտնալ է, թէ մեր Հովիւր մեզ պիտի առաջնորդէ ասպարհուրեցած ներկայ կեանքին մէջ, եւ առաւել, Ան պիտի շարունակէ մեզ սնուցանել եւ առաջնորդել յաւիտենութեան մէջ:

---

**Յանախ լաւագոյն միտքարութիւնը պարզապէս  
հոն ըլլալն է:**





Շաբաթ  
30 Ապրիլ

## Անձնական Աւետարան Մը

Կարդա՛ր  
Հոովմ. 10. 13-17

Գացե՛ք ամբողջ  
աշխարհ, ու  
քարոզեցե՛ք  
աւետարանը բոլոր  
արարածներուն:  
—Մարկ. 16. 15

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ

- Ա. Թագ. 19-21
- Առակաց 11. 1-11

սեղմած եւ կու լար աշխարհի կորսուած ըլլալուն համար: Բայց անոր տիեզերական մտահոգութիւնն ու տեսիլքը կը յատկանշուէր անհատ մարդոց հանդէպ իր ցուցաբերած կարեկցութեամբ: Դուն եւ ես՝ մենք ալ պէտք է պատասխանատու զգանք մենք մեզ՝ Աւետարանին փրկութեան բարի լուրը տանելու աշխարհին, բաժնեկցելով զայն իւրաքանչիւր անհատի հետ:

Դժբախտաբար, Մեծ Յանձնառութեանց մասին կը խորհինք նկատի ունենալով «Օտար Առաքելութիւններ»: Բայց «Առաքելութիւն Աշխարհի» բառերը գործածել հաւանաբար լաւագոյնը պիտի ըլլայ, քանի որ ան իր մէջ կը բովանդակէ մեր ամենամօտ դրացիներէն մինչեւ աշխարհի բոլոր մարդիկը, ստեղծուած Աստուծոյ պատկերով:

Ուրեմն, սկսի՛նք մեր փոքր աշխարհէն, թախանձագին աղօթելով բոլորին համար, սկսելով մեր ընտանիքի անդամներէն, դրացիներէն եւ գործակիցներէն: Աստուած միշտ պատրաստ է մեզի նոր առիթներ ստեղծելու:

---

Այն լոյսը, որ հեռուները կը փայլի, աւելի փայլում կ'ըլլայ մեր տան մէջ:

**3** ովհ. 3. 16-ը կ'ըսէ. «Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը...»: Սակայն, ի՞նչ կարելի է ըսել անհատ մարդոց հանդէպ Անոր ունեցած սիրոյն մասին: Այդ համարին մնացած մասը ցոյց կու տայ Աստուծոյ կեդրոնական նպատակը՝ իր Միածին Որդիին գոհաբերութիւնը, «Որպէսզի ամէն ո՛վ որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ»:

Ուրեմն, առանց բացառութեան, ամէն մարդ կրնայ մեկնաբանել Յովհ. 13. 16-ը սա ձեւով. «Վասնզի Աստուած այնպէս սիրեց զիս...»:

Միսիոնար մը յաճախ երկրագունդ մը կը գրկէր իր կուրծքին





Կիրակի  
1 Մայիս

## ԱՅ Կը Սպասէ

Կարդա՛ր՝  
Սաղմոս 34. 1-15

Տէրը փնտռեցի եւ  
ինձի պատասխանեց:  
—Սաղմոս 34. 4

ԱՍՏՈՒԱՆՍԵՆՆԵՐ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆԸ ՄԷ՛Ջ  
■ Ա. Թագ. 22-24  
■ Առակագ 11. 12-21

սպասեցի լսելու իր քայլերուն ձայնը անցքին մէջ, բայց ան  
չեկաւ: Հիմա ալ շատ ուշ է: Կարծեմ այսօր պիտի չգայ»:   
Խորապէս ազդուած, կը հեկեկայ գրագէտը եւ կ'անդ-  
րադառնայ, որ կամայ կամ ակամայ, կ'նոջ հետ ըլլալու եւ  
անոր հետ խօսելու անտեսումը, որքա՛ն մեծ ցաւ  
պատճառած էր անոր:

Երբ կարդացի այս պատահարին մասին, չկրցայ չմտածել  
Աստուծոյ խորապէս գիտ սիրած ըլլալուն եւ ինձի հետ  
յարաբերութեան մէջ ըլլալ փափաքելուն մասին: Որքա՛ն  
յաճախ ես կը մոռնամ Անոր հետ ըլլալ:

Աստուած՝ մեր Տէրը, սիրով կը սպասէ մեր աղօթքին,  
պաշտամունքին եւ փառաբանութեան: Անոր պատուէրն է  
միշտ աղօթել (Ա. Թեա. 5. 17): Ինչպէս Ան ըրաւ Լավոդիկէի  
եկեղեցիին, Քրիստոս մեր սրտին դուռը կը բախէ եւ  
համբերութեամբ կը սպասէ (Յայտ. 3. 20): Ան ուշադիր  
մտիկ կ'ընէ մեր կանչին, աղերսին եւ աղօթքին: Արդեօք  
որքա՞ն յաճախ Ան սպասած է ապարդիւն:

**Խօսէ՛ր Աստուծոյ հետ:  
ԱՅ կը սպասէ լսելու քեզի:**

**Ս** կովտիացի նշանաւոր գրագէտ  
Թամրա Քարլայլ (1795-1881)  
թէեւ շատ կը սիրէր իր կինը, բայց  
այնքան զբաղած էր իր գրական եւ  
դասախօսական գործերով, որ յաճախ  
կ'ինը ինքզինք անտեսուած կը զգար:  
Ժամանակ մը ետք, կ'ինը կը հիւան-  
դանայ եւ շուտով կը մահանայ:

Թամրա երբ իր տիկնոջ յուզար-  
կաւորութենէն ետք տուն կու գայ,  
կ'նոջ սեղանին վրայ կը գտնէ անոր  
օրագրութեան տեսրակը: Երբ էջերը  
կը թերթատէ, կը հանդիպի անոր  
գրած աս խօսքերուն. «Երէկ մէկ ժամ  
անցուց ինձի հետ: Դրախտային պահ-  
մըն էր: Շատ կը սիրեմ գիւնք»: Ուրիշ  
օր մը կ'ինը գրած էր. «Ամբողջ օրը  
սպասեցի լսելու իր քայլերուն ձայնը անցքին մէջ, բայց ան  
չեկաւ: Հիմա ալ շատ ուշ է: Կարծեմ այսօր պիտի չգայ»:





Երկուշաբթի  
2 Մայիս

**Ոչ Մէկ Բարի  
Գործ**

Կարդա՛ր  
Ա. Թագ. 25. 32-39

Օրհնեա՛լ է Տէրը, որ  
իրաւունքս  
պաշտպանեց:  
—Ա. Թագ. 25. 39

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Ա. Թագ. 25-27  
■ Առակաց 11. 22-31

**Թ**ատերադիր եւ Միացեալ Նահանգներու Ծերակուտական՝ Քլէյր Պ. Լուս (1903-1987), ըսած է. «Ո՛չ մէկ բարի գործ կը մնայ անպատիժ»: Դժբախտաբար, այս խօսքը երբեմն կը թուի շիտակ ըլլալ:

Դաւիթ, որ շուտով Իսրայէլի Թագաւորը պիտի ըլլար, ունեցաւ փորձառութիւն մը, որ կարծես աւելի կը հաստատէր վերը յիշուած տեսակէտը: Մինչ Դաւիթ եւ իր մարդիկը Սաւուղէն հեռու պահուած էին, հոգ տարին Նաբաղ անունով հարուստ հողատիրոջ մը կալուածին: Սակայն, ետքը, երբ Դաւիթ ծառայութիւն մը խնդրեց Նաբաղէն, անոր ծանր արհա-մարհանքին ենթարկուեցաւ: «Անտարակոյս, անպատին մէջ այս մարդուն ամբողջ ունեցածը պարապ տեղ պահպաներ եմ», ըսաւ Դաւիթ, «Ան ինծի չարիք հատուց բարիքի փոխարէն» (Ա. Թագ. 25. 21):

Դաւիթ վրէժխնդիր ըլլալէ առաջ, Նաբաղի կինը միջամտեց եւ թոյլ չտուաւ, որ ան խստութեամբ վարուէր իր ամուսինին դէմ: Սակայն, Աստուած շուտով զարկաւ Նաբաղին եւ ան մեռաւ (Հ. 38): Յետոյ, Դաւիթ փառաբանեց զԱստուած, որ զինք փրկած էր չարութիւն գործելէ, «Նաբաղի չարութիւնը իր գլխուն վերադարձնելով» (Հ. 39):

Թերեւս դուն ալ օր մը այդպիսի փորձառութիւն ունեցած ես, երբ մարդիկ քու ազնուութեանդ փոխարէն, ապերախտ գտնուած են: Առատաձեռնութեանդ մէջ յետին նպատակ մը տեսած են: Խրատդ սխալ հասկցուած է եւ մարդիկ քու դէմդ դիրք ճշդած են եւ յանդիմանած քեզ: Նման պարագաներու, հարցը ձգենք Աստուծոյ եւ Ան անպատճառ վարձահատոյց պիտի ըլլայ մեզի:

---

**Օր մը Աստուած պիտի շտկէ բոլոր սխալները:**







Երեքշաբթի  
3 Մայիս

## Չինաստանի Պիլի Կրահամը

Կարդա՛  
Փիլիպ. 3. 1-11

Բայց ինչ որ շահ էր  
ինձի, վնաս համարեցի  
զայն Քրիստոսի  
համար:  
—Փիլիպ. 3. 7

ԱՍՏՈՒԱՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՁ  
■ Գործք 7-11  
■ Առակաց 12. 1-14

**Չ**ինացի մը, 1927-ին նաև Միաց-  
եալ Նահանգներէն Չինաստան  
կը վերադառնար: Ան Ամերիկա  
եկած էր ուսանելու համար եւ եօթը  
տարուան մէջ բարձր վկայական-  
ներու տիրացած էր, որոնցմէ  
վերջինը Դոկտորայի վկայականն էր:

Մինչ նաւը կը մօտենար իր քա-  
ղաքին, Չինացին իր շահած մրցա-  
նակներն ու վկայականները ծովը  
կը թափէ պահելով միայն Դոկտո-  
րայի վկայականը, որ հօրը ցոյց  
տար: Ան Քրիստոնեայ էր եւ որոշած  
էր յաւիտենականութեան առաջնոր-  
դող կեանք մը ապրիլ:

Շատ մը տարեց քրիստոնեաներ,  
որոնք դեռ կ'ապրին Արեւելեան եւ  
Հարաւ Արեւելեան Ասիոյ մէջ, քրիստոնէութիւնը  
ընդունած են այդ Չինացիին քարոզչութեան շնորհիւ, որ  
չատերու կողմէ կոչուած է «Չինաստանի Պիլի Կրահամը»,  
իւր արդիւնաբեր աւետարանչութեան համար: Անոր  
եռանդուն աշխատանքները կարելի է բնորոշել Պօղոս  
Առաքեալի խօսքերով, որ կ'ըսէ. «Ի՛նչ որ շահ էր ինձի,  
վնաս համարեցի զայն Քրիստոսի համար (Փիլիպ. 3. 7):

Ո՛չ ամէն մարդ կրնայ ընել այն՝ ինչ որ այդ Չինացին  
ըրաւ: Սակայն Պօղոս Առաքեալի պէս պէտք է մեր այս  
կեանքի բաները «աղտեղութիւն» (Կ. 8) համարենք եւ  
ապրինք յաւիտենականութեան հասնելու նպատակով:

Անկապած մեր շուրջ կան մարդիկ, որոնց կեանքին  
վրայ կրնանք ազդեցութիւն գործել զիրենք Քրիստոսի  
մօտեցնելով: Ատուած մեզ յատուկ ծրագրով մը դրած է  
մեր միջավայրին մէջ: Մտածենք անձի մը մասին, որուն  
կրնաք խօսիլ Քրիստոսի մասին եւ վկայենք անոր, որ  
Քրիստոս ի՛նչ ըրած է մեզի համար:

**Մնայուն չէ մեր ապրած այս կեանքը.  
Մնայուն է Քրիստոսի համար մեր ըրածը:**





Չորեքշաբթի  
4 Մայիս

## Առաջնորդութեան Պարտքը

Կարդա՛  
Սաղմոս 86

Փրկէ ծառայ որ քեզի  
կը վստահի:  
—Սաղմոս 86. 2

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 51-53

**Ե**րբ քննելու ըլլանք 86-րդ սաղմոսը, կը մոռնանք այն իրողութիւնը, թէ մենք կը կարդանք բարի մարդու մը խոկումները: Դաւիթ թագաւոր կ'աղօթէ ըսելով: «Ո՛վ Տէր, լսէ՛ ինծի... որովհետեւ դժբախտ եւ աղքատ եմ» (Հ. 1): Յետոյ ինքն իրեն ակնկարկելով, ինքզինք «ծառայ» կ'անուանէ եւ կարեկցութիւն կ'աղերսէ: Դաւիթ Աստուծոյ կողմէ ընտրուած էր իր ժողովուրդը առաջնորդելու, եւ Հիմա թախանձագին Աստուծոյ օգնութիւնը կ'աղերսէր: Ինչ տարօրինակ երեւոյթ:

Երբ մտածելու ըլլանք ղեկավարներու պաշտօնին մասին, կարելոր է վերատեսութեան ենթարկել «առաջնորդութիւն» բառին բմբռնումը: Նշանաւոր առեւտրական մը, որ իր առաջնորդութեամբ իր ընկերութիւնը մեծ յաջողութիւններու հասցուցած էր, կ'ըսէ. «Առաջին պատասխանատուութիւնը առաջնորդի մը ճշմարտութիւնը սահմանել է: Իսկ վերջինը, շնորհակալ եմ ըսել: Այս երկուքին միջեւ առաջնորդը պէտք է ծառայ մը ըլլայ եւ պարտական: Այս իրողութեան մէջ կը խտանայ յառաջդիմութիւնն ու յաջողութիւնը իրաւ առաջնորդի մը»: Այդ երկու բառերը՝ ծառայ եւ պարտական, Դաւիթ կը գործածէ ինքն իրեն համար ալ, երբ Աստուծմէ օգնութիւն կը խնդրէ իր ժողովուրդը առաջնորդելու: Բոլոր անոնք, որոնք առաջնորդի պաշտօնի վրայ կը գտնուին՝ ըլլայ ընտանիք, եկեղեցի, դասարան կամ առեւտրական գործ մը առաջնորդելու, պէտք ունին 86-րդ Սաղմոսի համեատ բառերուն - Աստուծոյ վստահող «Աղքատ եւ Կարօտեալ» (Հ. 1) ծառայ-առաջնորդը այն է, որ վերջաւորութեան կրնայ Դաւիթի պէս ըսել. «Ի՛նչ, ո՛վ Տէր, ինծի կ'օգնես ու զիս կը մխիթարես» (Հ. 17):

**Առաջնորդ ըլլալու համար որակաւոր եմ միայն անոնք, որոնք գիտեն ծառայել:**





Հինգշաբթի  
5 Մայիս

### Համբարձումը

Կարդա՛  
Գործք 1. 1-11

Կ'երթամ, որ տեղ պատրաստեմ ձեզի... եւ դարձեալ պիտի գամ ու քովս ընդունիմ ձեզ, որպէսզի ուր ես եմ դուք ալ հոգն ըլլաք: —Յովն. 14. 2-3

ԱՍՏՈՒՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Ա. Թագ. 28-29  
■ Առակաց 12. 15-28

Յիսուսի յաճախակի երեւնալը իր մահէն եւ յարութենէն ետք, այնքան մեծ ուրախութիւն բերաւ իր հետեւորդներուն, որ անոնք ուզեցին, որ Յիսուսի այցելութիւնները տեւապէս շարունակուէին: Սակայն, իր յարութենէն 40 օրեր ետք, աշակերտներուն իր վերջին պատուէրները տալէ ետք, Յիսուս դանդաղօրէն համբարձաւ եւ ամպի մը մէջ անհետացաւ:

Յիսուս կրնար անհետանալ վայրկենապէս, ինչպէս նախապէս ըրած էր (Ղուկ. 24. 31): Սակայն Ան ուզեց վերջին անգամ համբարնալ տեսանելի կերպով, ցոյց տալու իր հետեւորդներուն, թէ այդ մէկը իր վերջին այցելութիւնն էր: Իր մարմնական ներկայութիւնը պիտի փոխարինուէր ուրիշ օգնականով մը՝ Սուրբ Հոգիով, ինչպէս խոստացուած էր (Յովհ. 14. 16): Յիսուսի համբարնալը նոր ժամանակաշրջանի մը արշալոյսը կ'աւետէր:

Իր մարդկային փառաւորեալ մարմինով, Յիսուս երկինք համբարձաւ, նստաւ Հօր Աստուծոյ աջ կողմը, Սուրբ Հոգին զրկեց Ձինք փոխարինելու (Յովհ. 14. 16-18, Գործք 2. 33) եւ հիմա կը բարեխօսէ մեզի համար (Հռովմ. 8. 34, Եբր. 7. 25): Ան իր ներկայութիւնն ու զօրութիւնը կը զգացնէ բոլոր հաւատացեալներուն (Կող. 1. 15-23, Եփես. 4. 10):

Հին գրութիւն մը կ'ըսէ, թէ Յիսուս մարմնով համբարձաւ երկինք՝ «մեր մուտքը ապահովելու եւ մեզի համար բնակարան պատրաստելու»: Ասիկա ճշմարիտ է: Սակայն, միեւնոյն ատեն ճշմարտութիւն է, թէ Ան միշտ հոգեւորապէս ներկայ է մեզի հետ եւ պիտի մնայ «մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. 28. 20):

Ինչ հրաշալի Փրկիչ մը ունինք:

**Յիսուս գնաց որպէսզի Սուրբ Հոգին գայ եւ մնայ:**





Ուրբաթ  
6 Մայիս

**Հակա-Ծերու-  
թեան Զօրութիւն**

Կարդա՛  
Եսայի 40. 25 - 41. 1

Բայց Տէրոջ յուսացողները իրենց ոյժը պիտի վերանորոգեն: —Եսայի 40. 31

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ

- Ա. Թագ. 30-31
- Առակաց 13. 1-12

**Ա**մերիկացիներ տարեկան 20 պիլիտոն տոլարէ աւելի կը ծախան, ծերութեան դէմ նիւթեր արտադրելով: Անոնք կ'ըսեն, թէ ունին այն նիւթերը, որոնք հերաթափութիւնը կրնան կեցնել, երեսի կնճիռները վերցնել, մկանները զօրացնել եւ երիտասարդական ոյժերը նորոգել: Արդեօք այդ նիւթերը իսկապէս կ'ընեն այն, ինչ որ կը քարոզուի թէ կրնան ընել: Բժշկական գիտութիւններու փրօֆէսոր մը կ'ըսէ, թէ բացարձակապէս չկայ գիտական փաստ մը, թէ նման որեւէ նիւթ կրնայ մարդկային մարմինի ծերութիւնը կեցնել կամ ետ դարձընել տայ:

Սակայն կայ հոգեւոր խոստում մը, որ կրնայ հակազդել ժամանակին գործած աւերներուն: Եսայի Մարգարէ կ'ըսէ. «Երիտասարդներն անգամ պիտի պարտասին ու յոգնին, եւ ընտիր կտրիճները բոլորովին պիտի իյնան, բայց Տէրոջ յուսացողները իրենց ոյժը պիտի վերանորոգեն: Անոնք արծիւներու պէս թեւերով վեր պիտի ելլեն, պիտի վազեն ու չյոգնին, պիտի քալեն ու չպարտասին» (Ես. 40. 30-31): Եսայի մարգարէ արծիւը կը գործածէ որպէս խորհրդանիշ ազատութեան եւ տոկունութեան, որ կը մնայ իր բարձրութեան վրայ, իրմէ դուրս եղող ոյժի աղբիւրի մը շնորհիւ: Երբ մեր յոյսն ու վատահուծիւնը Աստուծոյ վրայ կը դնենք, մենք կը շարունակենք ապրիլ Անկէ բարոյական զօրութիւն ստանալով: Սաղմոսերգուն կ'ըսէ, թէ Տէրն է, որ մեզ կը սնուցանէ իր բարիքներով, «եւ կ'երիտասարդացնէ մեզ արծիւի պէս» (Սաղմոս 103. 5):

Արդեօք մենք կ'օգտուի՞նք Աստուծոյ՝ ծերութեան դէմ ունեցած զօրութենէն: Խոստումը բոլոր անոնց համար է, որոնք իրենց վատահուծիւնը Աստուծոյ վրայ կը դնեն:

**Ծերանալը օրհնութիւն մըն է, երբ հետզհետէ աւելի կը մօտեմամբ Աստուծոյ:**





Շաբաթ  
7 Մայիս

## Ըրէ՛ք Ուրիշներուն

Կարդա՛ր՝  
Մատթ. 7. 7-12

Ուրեմն, ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, դուք ալ այնպէս ըրէք անոնց, որովհետեւ ասիկա է օրէնքն ու մարգարէները: —Մատթ. 7. 12

ԱՍՏՈՒԱՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԷՁ

- Բ. Թագ. 1-3
- Առակաց 13. 13-25

անի մը տարիներ առաջ, Տէյվիտ Քառփի երրորդ անգամ ըլլալով փորձեց էփէրէսթ լերան գազաթը հասնիլ: Ան հասաւ գազաթը, սակայն վերադարձին թթուածինը պակասեցաւ եւ ինկաւ ճամբուն վրայ: Մինջ լերան կողքին, մահուան դէմ կը պայքարէր, լեռ մագլցող 40 հոգիներ անցան քովէն: Ոմանք կ'ըսեն, թէ թթուածինի պակաս ունեցողներուն մօտենալ եւ ազատել փորձել շատ վտանգաւոր է: Ուրիշներ ալ կ'ըսեն, թէ մագլցողներ շատ տարուած կ'ըլլան գազաթը՝ հասնելու եւ շատ անձնասէր՝ նեղութեան մէջ եղողին օգնելու: Արդեօք ի՞նչ կրնար պատահիլ, եթէ այդ ինկած մագլցողին քովէն անցնող մարդերէն մէկը բռնէր. «Ես պիտի վարուիմ անոր հանդէպ, ինչպէս պիտի ուզէի ուրիշ մը վարուէր ինծի հետ»: Մատթ. 7. 12 համարը որպէս ոսկեղէն կանոն Յիսուս տալով իր աշակերտներուն տուած եղաւ գաղտնիքը ամբողջ Հին Կտակարանի յարաբերութեան կանոններուն:— Միտէ՛ ուրիշները եւ ապրէ՛ անոնց բարիքին համար: Յիսուս ուսուցանեց այս փոխադարձ յարաբերութեան սկզբունքը իր լայն տարողութեամբ, որ իր մէջ կը բովանդակէր բոլոր հիմնական այն սկզբունքները, որ ուսուցանած էր իր լերան քարոզով (Մատթ. 5. 17 - 7. 11):

Քանի որ դժուար էր ապրիլ միշտ ուրիշներուն բարիքին համար, Յիսուս գիտէր, թէ իրեն հետեւողները դուրս պիտի ձգէին բարոյական այս օրէնքը: Ասոր համար Յիսուս չեշտը դրաւ այն արդարութեան վրայ, որ կուգայ միայն Աստուծոյ (Ճ. 20): Եթէ մենք Յիսուսի հետեւողներ ենք, պէտք է որ քալենք իր հետքերով - սիրել ուրիշները եւ ապրիլ անոնց բարօրութեան համար:

**Մերը այն պարտքն է, որ մենք պարտական ենք իրարու:**





Կիրակի  
8 Մայիս

## Լաւագոյն Մայրը

Կարդա՛ր  
Առակ. 31. 10-12, 28-31

Անոր որդիները կը կանգգնին ու զայն երանելի կը կոչեն: Անոր ամուսինն ալ զայն կը գովէ: —Առակ. 31. 28

ԱՍՏՈՒԱՏԱՆՈՒՆԵՐ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷ՛Ջ  
■ Բ. Թագ. 4-6  
■ Առակաց 14. 1-11

ներու մասին, որ կը պատահին: Սակայն այս կնոջ սէրն ու գոհաբերութիւնը ճանչցուած էր եւ յարգուած, երբ պետութիւնը նկատի առնելով անոր օրինակելի գործը կը պատուէ զայն որպէս այդ տարուայ Անգլիոյ «Լաւագոյն Մայրը»:

Այսօր Մայրերու Օր է Արեւմտեան երկիրներու մէջ: Այն մեծ ճիգերը, գոհողութիւններն ու սիրոյ արտայայտութիւնները, որ մեր մայրերը ցուցաբերած են մեզի հանդէպ, թերթերու գլխաւոր լուրերը պիտի չըլլան: Բայց կարեւորը, գնահատուելու նպատակը չէ, այլ անկէ առաջ եւ աւելի, անոր հարազատութիւնն ու ճշգրտութիւնն է:

Այս յատուկ օրուան առթիւ, որքան լաւ է, որ Աստուծոյ փառք տանք այն մայրերուն համար, որոնք գիտակից ըլլալով իրենց մայրական կոչումին, կը ձեւաւորեն իրենց զաւակներուն հոգիները: Մինչ կը պատուենք մեր մայրերը, կ'իրագործենք իմաստուն առակագիրին ըսած ճշմարտութիւնը. «Անոր որդիները կը կանգնին ու զայն երանելի կը կոչեն: Անոր ամուսինն ալ զայն կը գովէ» (Առակ. 31. 28):

**Ոչ մէկ բան կ'ազդէ մանուկի մը այնքան՝ որքան մօր մը սէրը:**

**Տ**արի մը, Մայրերու Օրուան առթիւ, Անգլիոյ Ազգային Հեռատեսիլի կայանէն ներկայացուեցաւ ուշագրաւ պատմութիւն մը: Փէկի Պուշի աղջիկը մահացած էր, ուրեմն Փէկի պատասխանատու կը զգայ հոգ տանելու իր աղջկան երեք զաւակներուն, երբ անոնց հայրը ցերեկը գործի կ'երթար: Շատ չանցած փեսան ալ կը մեռնի եղերական մահով մը: Փէկի երեք թոռները իր տուն կը տանի եւ զանոնք կը հոգայ իր հարազատ զաւակներուն պէս:

Աշխարհի մը մէջ, ուր սխալը որպէս հրապուրիչ, եւ անհաճոյ բաները որպէս հաճելի կը ներկայացուին, քիչ անգամ կը լսենք բարի բաներու մասին, որ կը պատահին: Սակայն այս կնոջ սէրն ու գոհաբերութիւնը ճանչցուած էր եւ յարգուած, երբ պետութիւնը նկատի առնելով անոր օրինակելի գործը կը պատուէ զայն որպէս այդ տարուայ Անգլիոյ «Լաւագոյն Մայրը»:

Այսօր Մայրերու Օր է Արեւմտեան երկիրներու մէջ: Այն մեծ ճիգերը, գոհողութիւններն ու սիրոյ արտայայտութիւնները, որ մեր մայրերը ցուցաբերած են մեզի հանդէպ, թերթերու գլխաւոր լուրերը պիտի չըլլան: Բայց կարեւորը, գնահատուելու նպատակը չէ, այլ անկէ առաջ եւ աւելի, անոր հարազատութիւնն ու ճշգրտութիւնն է:

Այս յատուկ օրուան առթիւ, որքան լաւ է, որ Աստուծոյ փառք տանք այն մայրերուն համար, որոնք գիտակից ըլլալով իրենց մայրական կոչումին, կը ձեւաւորեն իրենց զաւակներուն հոգիները: Մինչ կը պատուենք մեր մայրերը, կ'իրագործենք իմաստուն առակագիրին ըսած ճշմարտութիւնը. «Անոր որդիները կը կանգնին ու զայն երանելի կը կոչեն: Անոր ամուսինն ալ զայն կը գովէ» (Առակ. 31. 28):

**Ոչ մէկ բան կ'ազդէ մանուկի մը այնքան՝ որքան մօր մը սէրը:**





Երկուշաբթի  
9 Մայիս

## Չիու Ոյժ

Կարդա՛  
Երեմիա 6. 16. 21

Հարցուցէ՛ք Բնադարեան  
Հաւիղներուն մասին,  
թէ որն է բարօրու-  
թեան ճամբան, եւ  
քաղցե՛ք անոր մէջէն,  
որպէսզի Բնագիտո  
գտնէք ձեր անձերուն:  
—Երեմ. 6. 16

ԱՍՏՈՒՍԸՆՈՒՆՆԵՐ ՄԷՅ

ՏԱՐՈՒՆ ՄԷՅ

■ Բ. Թագ. 7-9

■ Առակաց 14. 12-24

չղթան կը կապէ հիւանդակաւքին, ձիերը քաշելով դուրս  
կը բերեն ինկած հիւանդակաւքը փոսին մէջէն:

Այսօրուան չափանիշով, այդ երիտասարդ մայրը  
օգնութիւն ստացաւ ոյժի աղբիւրէ մը, որ շատ հնութիւն  
կը բուրէր եւ ժամանակավրէպ էր: Բայց այդ օր, հին  
ձեւերը օգնեցին նոր կեանք մը սպահով աշխարհ բերելու:

Շատեր պիտի չուզէին վերադառնալ հնաձեւ միջոցնե-  
րու: Սակայն, աւելի քան 2500 տարիներ առաջ, Երեմիա  
մարգարէ մեզի կը յիշեցնէ, թէ չկայ այնքան աւելի պատշաճ  
եւ վաւերական ճշմարտութիւն, քան անցեալին մէջ  
յայտնուածը: Թէեւ ան իր ժամանակին հիներէն կը  
նկատուէր, սակայն կը պարտադրէ իր դրացիներուն, որ  
քալեն ճշմարտութեան հին ուղիներէն, որպէսզի կարենան  
խաղաղութիւն եւ հանգիստ գտնել իրենց հոգիներուն համար  
(Երեմ. 6. 16): Այսօր, երկու հազար տարիներ ետք, տակաւին  
կրնանք խաղաղութիւն եւ հանգիստ գտնել Յիսուսի քով,  
որպէս ճշմարտութեան մեր յաւիտենական աղբիւրը:

**Աստուծոյ Խօսքին հիմն ճշմարտութիւնը յարիտեան  
նորութիւն է:**





Երեքշաբթի  
10 Մայիս

**Անակնկալ Մը  
Ըրէ՛ Ինձի Համար**

Կարդա՛  
Եփես. 3. 14-21

«Արդարեւ իմ մտածումներս ձեր մտածումները չեն, եւ ձեր ճամբաները իմ ճամբաներս չեն», կ'ըսէ Տէրը: —Եսայի 55. 8

ԱՍՏՈՒԾՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Գործք 12-17  
■ Առակաց 14. 25-35

Աստուածաշունչին մէջ կը կարդանք, թէ Աստուած կ'ուրախանայ, երբ մեր չակնկալած բաները կ'ընէ: Երբեմն ան ջուրերը կը հաւաքէ եւ ցամաք կը բանայ, որպէսզի ժողովուրդը կարենայ ծովէն անցիլ չոր գետնի վրայէն քալելով (Ելից 14. 21-22): Կամ ներելով եւ ողջագործելով բոլոր անոնք, որոնք կ'ապաշխարեն իրենց մեղքերէն (Մաղմ. 130. 1-4): Յիսուսի ժամանակակից աշխարհը լեցուն էր սպչեցուցիչ ղէպքերով, որոնք մարդոց ցոյց կու տային Հայրը՝ Աստուած: Ան ջուրը գինիի վերածեց, փոթորիկը հանդարտեցուց, հիւանդը բժշկեց եւ մեռածը ողջացուց:

Ի՞նչ տեսակ Աստուծոյ կը ծառայենք: Մէկը որ չէ սահմանափակուած մեր սահմանափակ երեւակայութեամբ (Եփես. 3. 20): Աստուծոյ խորհուրդներն ու ճամբաները մեր ունեցածին պէս չեն (Ես. 55. 8), եւ Ան կ'ուզէ օրհնել մեզ շատ ավելիով, քան յատուկ պաղպաղակով: Ան կ'ուրախանայ իր զաւակներով, որոնք իրեն կը վստահին եւ յօտարակամ կ'ուզեն ըսել. «Անակնկալ մը ըրէ ինձի, Տէ՛ր»:

**Անոնք՝ որոնք թոյլ կու տան, որ Աստուած հայթայթէ իրենց, միշտ գոհացած պիտի ըլլան:**

**Ե**րբեմն երբ ընտանիքով կ'երթայինք պաղպաղակ ուտելու, հայրս կը հարցնէր մօրս, թէ ի՞նչ համի վրայ կը սիրէր ունենալ իր պաղպաղակը: Յաճախ մայրս կ'ըսէր. «Անակնկալ մը ըրէ ինձի»: Ան կ'ըսէր, թէ հայրս քիչ անգամ գինք յուսախաբ ըրած էր իր ընտրութեամբ:

Կը սիրե՞ս անակնկալներ ունենալ: Պիտի համարձակէի՞ր ըսելու Աստուծոյ. «Անակնկալ մը ըրէ ինձի»: Շատեր կը վախճան այդ մէկը ընելու: Այո՛, թէեւ մենք կը հաւատանք, թէ Աստուած բարի է եւ կը սիրէ մեզ, սակայն, միւս կողմէ կը վախճանք թէ պիտի չսիրենք Անոր ընտրածը մեզի համար:







Չորեքշաբթի  
11 Մայիս

**Տրամադրութեան  
Ցուցում**

Կարդա՛ր  
Ա. Պետ. 3. 8-12

Եղե՛ք... գթած ու  
բարեսիրտ:  
—Ա. Պետ. 3. 8

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 54-56

**Ա**նդլիացի եւ Ամերիկացի համակարգիչի գիտնականներ հնարած են գեղագիտութիւն մը, որ կը փոխուի ըստ անոր նայող անձին զգացումներուն: Համակարգիչի այդ ծրագիրը կը վերլուծէ դիրքը եւ ձեւը անձին բերնին, յօնքերու անկիւններուն, աչքերու բացումաձեւներուն եւ դէմքի ուրիշ հինգ արտայայտութեանց, ճշդելու համար դիտողին զգացական վիճակը, եւ գեղագրութիւնը յաճախ կը փոխուի ըստ իրեն նայողին տրամադրութեան: Եթէ նայողին դէմքը ուրախութիւն կ'արտայայտէ, գեղագրութիւնը կ'երեւայ փայլուն գոյներով, իսկ եթէ խոժոռ դէմք մը ունի նայողը, պատկերը կ'արտայայտուի մութ եւ թախծոտ:

Մեր տրամադրութիւնները կրնան ազդել նաեւ մեր շուրջ գտնուող մարդոց – մեր ընտանիքի անդամներուն, բարեկամներուն, գործակիցներուն եւ ծանօթներուն: Մեր կեանքը յաճախ կը տպաւորէ մարդիկը լաւ կամ գէշ:

Պետրոս Առաքեալ կը քաջայերէ հաւատացեալները, որ կարեկցութիւն ցուցաբերեն ուրիշներուն հանդէպ, սիրեն զանոնք եւ ըլլան ազնիւ եւ քաղաքավար: Առաքեալը կը պատուիրէ. «Չըլլայ որ չարութեան փոխարէն չարութիւն հատուցանենք», այլ օրհնենք զանոնք (Ա. Պետ. 3. 8-9): Թերեւս Առաքեալին պատուէրներուն հետեւիլ դժուար կրնայ ըլլալ երբեմն, մանաւանդ երբ մենք մեզի նեղուած եւ քմայքոտ տրամադրութեամբ կը զգանք: Սակայն, վառահերով Սուրբ Հոգիին, կրնանք դրական ներգործութիւն ունենալ բոլոր այն մարդոց վրայ, որոնց կը հանդիպինք ամէն օր – նոյնիսկ եթէ մեր ըրածը միայն ժպտիլ կամ լսել է:

Լաւ է որ մեր աշխարհը ներկենք այսօր փայլուն գոյներով:

**Միրա մը Աստուծոյ շնորհէն ազդուած,  
ուրախութիւն կը ցոլացնէ դէմքին վրայ:**





Հինգշաբթի  
12 Մայիս

## Մանուկի Մը Հիացումը

Կարդա՛  
Սաղմոս 78. 1-8

Եւ կանգնելով իրենց  
որդիներուն ճաղորդեն:  
Անոնք ալ իրենց յոյսը  
Աստուծոյ վրայ  
դնելով՝ չմոռնան  
Աստուծոյ ըրածները:  
—Սաղմոս 78. 6-7

ԱՍՏՈՒԱՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Բ. Թագ. 10-12  
■ Առակաց 15. 1-11

19-րդ դարուն, Սիովտիացի մայր մը կը նկատէ իր երեք տարեկան զակին արտակարգ հետաքրքիր բնաւորութիւնը: Այնպէս կը թուի, թէ ան հետաքրքրուած էր չարժող կամ ձայն հանող բաներով: Ճէշմա Մէքսիկէ կողուող այս տղան իրեն մանկութեան հետքերութիւնը իր հետ տարած է իր գիտական ամբողջ կեանքին մէջ, որուն ընթացքին մեծ նախաձեռնութիւններ կատարած է ելեքորական եւ մակնիսական մարզերէն ներս: Տարիներ ետք, Այնը յիշատակէ Մաքսիկէի գործին համար. «Ամենէն բերմաւոր աշխատանքը կենսաբանութեան մէջ, Նիութընէն սաղին»:

Իր մանկութենէն, կրօնքը իր ազդեցութիւնը գործած էր Մաքսիկէի կեանքի, բոլոր մարզերէն ներս: Որպէս նուիրեալ հաւատացեալ, ան օր մը իր աղօթքին մէջ ըսած է. «Սորվեցո՛ւր մեզի սիրել քու ձեռքերուդ գործերը... եւ զօրացո՛ւր մեր տրամաբանութիւնը քեզի ծառայելու»: Անոր մանկութեան շրջանի հետաքրքրութիւնն ու հոգեւոր դաստիարակութիւնը պատճառ պիտի դառնային, որ ան իր ամբողջ կեանքին մէջ, իր գիտութիւնը ի սպաս դնէր իր Արարիչին ծառայութեան:

Որպէս հաւատացեալներ միշտ պատասխանատուութիւնը ունինք մեր մանուկներուն շնորհքները սնուցանելու եւ անոնց կեանքերը դէպի մեր Տէրը առաջնորդելու, որպէսզի անոնք «կանգնելով իրենց որդիներուն հաղորդեն (Աստուծոյ) Օրէնքը, անոնք ալ իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնելով՝ չմոռնան Աստուծոյ ըրածը» (Սաղմոս 78. 6-7):

Ձեւեր որոնել քաջակերելու համար մանուկներու սէրը սորվելու, միեւնոյն ատեն հաստատ պահել զանոնք հաւատքի ճամբուն մէջ, կարեւոր ներդրում մըն է ապագայի համար:

**Մեճք կը ձեւաորենք վաղուան աշխարհը, մեր գաւակներուն մեր սորվեցուցածով:**





Ուրբաթ  
13 Մայիս

## Վերաշրջանակել Նկարը

Կարդա՛ր  
Բ. Օրինաց 32. 1-12

Ինչպես արծիւը իր բոյնը կը խառնէ, կը սաւառնի իր ձագերուն վրայ, իր թետերը կը տարածէ ...նոյնպէս ալ Տէրը զայն առանձին առաջնորդեց:  
—Սաղմոս 78. 6-7

ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ԱՒԶ  
■ Բ. Թագ. 13-15  
■ Առակաց 15. 12-21

արծիւները տակաւին փոքր կը թռչին, երկու ծնողներն ալ յանկարծ անհետացան: Սկսայ մտահոգուիլ, թէ անոնք ինչպէ՞ս պիտի կարենային իրենք զիրենք հոգալ եւ պաշտպանել:

Մտահոգութիւնս անհիմն եւ անտեղի էր: Բոյնին վրայ կեդրոնացած մայր արծիւը մօտ եղող ծառի մը վրայ թառած կը հսկէր: Երբ սկսայ խորհրդածել այս «վերաշրջանակուած» պատկերին վրայ, յիշեցի ժամանակներ կեանքիս մէջ, երբ զգացած եմ, թէ Աստուած լքած է զիս: Կենդանաբանական պարտէզի այդ դէպքը ինծի յիշեցուց, որ իմ տեսողութիւնս կրնայ սահմանափակ ըլլալ: Ես կրնամ ընդհանուր տեսարանին միայն մէկ փոքր մասը տեսած ըլլալ:

Մովսէս արծիւի պատկերը գործածած է նկարագրելու համար զԱստուած: Ինչպէս արծիւը իր... ձագերուն վրայ իր թետերը կը տարածէ, ...այնպէս ալ Տէրը կը կրէ Իր ժողովուրդը (Բ. Օր. 32. 11-12): Աստուած «մեզմէ իւրաքանչիւրէն հեռու է» (Գործք 17. 27): Ասկա ճշմարտութիւն է, եթէ նոյնիսկ մենք մեզ երբեմն լքուած զգանք:

**Քանի որ Աստուած կը հսկէ մեր վրայ, պէտք է չունիմք վախճալու մեր շուրջի վտանգներէն:**





Շաբաթ  
14 Մայիս

**Ճշմարիտ  
Վստահութիւն**

Կարդա՛  
Յովհ. 9. 1-11

Ոչ ասիկա մեղացած է, ոչ ալ անոր ծնողները, քապա որպէսզի Աստուծոյ գործերը յայտնաբերուին իր վրայ:  
—Յովհ. 9. 3

ԱՍՏՈՒԾԱՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
■ Բ. Թագ. 16-18  
■ Առակաց 15. 22-33

տարեկան էի, կարդալէ ետք Յովհ. 9-րդ գլուխը, ուր Յիսուս կու տայ պատճառը մարդու մը կոյր ծնած ըլլալուն. 'որպէսզի Աստուծոյ գործերը յայտնաբերուին իր վրայ...': Հիմա ես ալ կը տեսնեմ Աստուծոյ փառքը եւ գործերը իմ վրաս ալ կ'երեւին, երբ Ան գիտ կը գործածէ ճիշդ այնպէս, ինչպէս որ եմ, այնպէս, որ ուրիշ մէկը կարելի չէ գործածել»: Այդ անձը կը ճամբորդէ աշխարհի չորս կողմը տարածելով Աւետարանին փրկութեան բարի լուրը եւ կ'ըսէ. «Եթէ ես կրնամ Աստուծոյ վստահիլ իմ այս պայմաններու տակ, դուն ալ կրնաս վստահիլ Աստուծոյ քու գտնուած պայմաններուդ տակ...: Ուրախութիւններու մեծագոյնը Քրիստոսը ունենալն է իմ կեանքիս մէջ եւ սպրիդ այն աստուածային նպատակին համար, որ ան որոշած է ինծի համար»:

Մենք կրնա՞նք միեւնոյն բանը ըսել: Կրնա՞նք մեր սահմանափակումներէն անդին նայիլ եւ միեւնոյն վստահութիւնը ունենալ Աստուծոյ, որ առանց ոտքի եւ ձեռքի մարդ մը բարեփոխած ու զայն Յիսուսի ծառայողի մը դարձուցած է:

**Աստուծոյ վստահելով մեր հարցերը առիթներու կը վերածենք:**

**Ե**թէ չես ճանչնար զինք, կրնաս խորհիլ, թէ ամէն բան ի նպաստ իրեն կ'ընթանայ: Ան երբեք թեւերու ցաւ չէ ունեցած, ոչ ալ ծունկերու հարցեր: Անոր մատը երբեք գոցուող դրան մէջ չէ ճզմուած, կամ ոտքին փթամատը առարկայի մը զարնուած: Այդ բոլորը չեն պատահած, որովհետեւ ան ոչ ձեռքեր ունի, ոչ մատներ, ոչ ոտքեր եւ ոչ ալ փթամատ: Անոր համար ցաւելէ առաջ կարդա՛ իր սա խօսքերը. «Աստուած պիտի չթողու որեւէ բան պատահի մեզի մեր կեանքին մէջ առանց բարի նպատակ մը ունենալու մեզի համար: Ես ամբողջութեամբ իմ կեանքս Քրիստոսի յանձնեցի, երբ 15





Կիրակի  
15 Մայիս

## ՊԷՆՏԵԿՈՍՏԻ ԶՕՐՈՒԹԻՄՆԵՐ

Կարդա՛  
Գործք 2. 1-17

Բայց Սուրբ Հոգիին ձեր վրայ եկած ատենը՝ զօրութիւն պիտի ստանաք, եւ ինձի համար վկաներ պիտի ըլլաք:  
— Գործք 1. 8

ԱՍՏՈՒԾՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ

■ Բ. Թագ. 19-21

■ Առակաց 16. 1-11

յաճախ կը փորձուինք նման հրաշանման դէպքեր եւ մեծ թիւով մարդիկ տեսնել Սուրբ Հոգիին ներկայութեան: Սակայն, կը մոռնանք, թէ կարճ ժամանակ մը ետք, նոյն մարդիկը, որ նոյն Սուրբ Հոգիով լեցուած էին, մերժուեցան, մտարկուեցան, բանտարկուեցան եւ նոյնիսկ նահատակուեցան: Այդ բոլորով հանդերձ, անոնք զօրաւոր վկաներ եղան իրենց Տէրը եղող Քրիստոսի:

Սուրբ Հոգիին ներկայութիւնն ու զօրութիւնը կրնանք տեսնել ուժեղ քարոզիչի մը մէջ, որ կը գրաւէ իր ունկնդիրները: Սակայն ատիկա կը տեսնուի նաեւ կամաւոր ծառայողի մը կեանքին մէջ, որ մէկ առ մէկ կը խօսի բանտարկեալներուն. անձի մը մէջ, որ կը վկայէ իր գործակիցներուն եւ դրացիներուն. կամ Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչուհիին մէջ, որ հաւատարմօրէն կը շարունակէ ծառայել ամէն Կիրակի: Պէնտէկոստէի զօրութիւնը առանձնաշնորհումը չէ միայն տաղանդաւոր քարոզիչներու, այլ ան մատչելի է Քրիստոսի բոլոր հաւատացողներուն:

**Աստուծոյ Հոգիին զօրութիւնը կը զօրացնէ մեր վկայութիւնը:**

Հոգեւոր հովիւ բարեկամներէս մէկը վերջերս շատ յուսահատ վիճակի մէջ տեսայ: Թէեւ ան ժրջան աշխատող մըն է, բայց իր եկեղեցին կը մնայ փոքր, մինչ անդին՝ դրացի եկեղեցի մը՝ արագօրէն կ'աճի ու կը մեծնայ: Բայց երբ նկատի ունենանք այլքոլամոլները, թմրեցուցիչներու մոլի դարձողները եւ բարոյապէս ինկածները, իմ ճանչցած հովիւ բարեկամս շատ օգտակար գործ կը կատարէ զանոնք դարձի բերելով եւ Քրիստոսը Փրկիչ ընդունելու ճամբով: Ան կը վկայէ Սուրբ Հոգիին զօրութեամբ:

Որովհետեւ այդ դէպքը պատահեցաւ Պէնտէկոստէի օրը (Գործք 2),





Երկուշաբթի  
16 Մայիս

### Յիսի եւ Ճշմարտութեան Ճամբան

Կարդա՛ր  
Գործք 4. 5-12

Յիսուս ըսաւ անոր.  
«Ես եմ Ճամբան ու ճշմարտութիւնը եւ կեանքը»:  
—Յովն. 14. 6

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
■ Բ. Թագ. 22-24  
■ Առակաց 16. 12-21

քով երթալ: Հիւանդը կ'երթայ եւ կը գտնէ ըստած գիւղը: Գիւղի մոտքին, ճամբուն վրայ կը տեսնէ մարդ մը, որ պարտէզին մէջ կ'աշխատէր: Կը հարցնէ անոր արաբական բժշկութիւն ընող մարդուն տունը: Անծանօթը բահն ու բրիչը մէկտէ կը դնէ եւ կ'ըսէ. «Հետեւէ՛ ինծի»: Հիւանդ մարդը կը հետեւի անոր: Այդ անծանօթ մարդը կ'երթայ, գիւղ կը մտնէ եւ կը կենայ պզտիկ տան մը առջեւ եւ զրպանէն բանալի մը հանելով կը բանայ տան դուռը եւ կ'ըսէ. «Այս է փնտռած բժշկիդ տունը եւ այդ բժիշկը ես եմ»:

Այսպէս է նաեւ Յիսուսի հետ մեր ունեցած յարաբերութիւնը: Յիսուս ոչ միայն ցոյց կու տայ մեզի դէպի ճշմարտութիւն տանող ճամբան, այլ ինքն է նաեւ այդ ճամբան: Ան մեր առջեւն կը քայլէ: Ինքն է նաեւ այն Բժիշկը, որուն պէտք ունինք: Մեզի կը մնայ վատահիլ Անոր եւ հետեւիլ իրեն, քանի որ ինքն է միակ «ճամբան ու ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յովհ. 14. 16):

**Ամոնք որոնք իրենց յայտ Գրիստոսի վրայ կը դնեն, երբեք յուսախար պիտի չըլլան:**

**Մ**արդ մը անհանգիստ կը գգայ եւ բժիշկին կը դիմէ: Բժիշկը պէտք եղած քննութիւնները կատարելէ ետք, չի կրնար որոշ ատամանաչում մը կատարել: Կարգ մը դեղեր յանձնարարելէ ետք, տուն կը դրկէ հիւանդը: Բայց անօգուտ: Հիւանդը կը առիպուի ուրիշ բժիշկներու դիմել, սակայն ո՛չ ոք կրնայ հասկնալ անոր անհանգստութեան պատճառը եւ դարման մը գտնել անոր:

Յուսահատ, օր մը երբ իր վիճակին մասին բարեկամի մը կը պատմէր, բարեկամը կը թեղարէ հետու գիւղի մը մէջ արաբական բժշկութիւն կատարող մարդու մը քով երթալ: Հիւանդը կ'երթայ եւ կը գտնէ ըստած գիւղը: Գիւղի մոտքին, ճամբուն վրայ կը տեսնէ մարդ մը, որ պարտէզին մէջ կ'աշխատէր: Կը հարցնէ անոր արաբական բժշկութիւն ընող մարդուն տունը: Անծանօթը բահն ու բրիչը մէկտէ կը դնէ եւ կ'ըսէ. «Հետեւէ՛ ինծի»: Հիւանդ մարդը կը հետեւի անոր: Այդ անծանօթ մարդը կ'երթայ, գիւղ կը մտնէ եւ կը կենայ պզտիկ տան մը առջեւ եւ զրպանէն բանալի մը հանելով կը բանայ տան դուռը եւ կ'ըսէ. «Այս է փնտռած բժիշկիդ տունը եւ այդ բժիշկը ես եմ»:





Երեքշաբթի  
17 Մայիս

## Քննէ՛ Օրը

Կարդա՛  
Եբր. 3. 7-15

Իմ ժամանակներս քու  
ձեռքդ եմ:  
—Սաղմ. 31. 15

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՆ  
■ Գործք 18-22  
■ Առակաց 16. 22-33

Աստուած շատ կարեւոր առաջ-  
նորդութիւն կու տայ մեզի Եբր. 3. 13 համարով. «Ամէն օր  
յորդորեցէ՛ք գիրար: 'Այսօր՛ կ'ըսուի, որպէսզի ձեզմէ՛ ոչ  
մէկը խտտանայ մեղքին խաբէութեամբ»: Հարց է, թէ ինչո՞ւ  
Այսօրը այդքան զօրաւոր կերպով շեշտուած է այստեղ:

Կրնայ պատահիլ, որ Այսօրը կրնայ մեր կեանքին վերջին  
օրը ըլլալ հոս՝ այս երկրի վրայ: Այսօրը կրնայ քու վերջին  
առիթոյ ըլլալ՝ ընդունելու Աստուծոյ փրկութեան պարգեւը:  
Կամ եթէ արդէն ընդունած ես զայն, Յիսուսի հանդէպ քու  
ունեցած սէրդ բարեկամի մը փոխանցելու, բու Տէրդ Իրեն  
ներկայացնելու, վերջին առիթը կրնայ ըլլալ այս օրը:

Յակոբոս Առաքեալ կը զգուշացնէ վաղուան վստահելէ.  
«Դուք՝ որ չէք գիտեր ինչ պիտի ըլլայ վաղը: Քանի որ  
ինչ է ձեր կեանքը, արդարեւ շոգի մըն է, որ քիչ մը  
ատեն կ'երեւնայ, յետոյ կ'աներեւութանայ» (Յակ. 4. 14-15):

Ամուր բռնէ՛ այն առիթները, որ Աստուած կու տայ  
քեզի այսօր: Ասիկա առողջ պատուէր մըն է, ոչ միայն  
Պատգեթպոլ խաղացողներուն համար, այլ մեր բոլորին համար:

**Ծրագրէ՛ այնպէս, որպէս թէ դար մը պիտի ապրիս:**  
**Ապրէ՛ այնպէս, որպէս թէ միայն այսօր պիտի ապրիս:**

**Ճ** իմ վարվանօ հեռաախուռմի  
գործին մէջ մտնելէ առաջ,  
Հիւսիսային Քարոյայնայի Պետական  
Համալսարանի Պատգեթպոլի խումբին  
մարզիչն էր եւ խումբը հասցուցած  
ախոյենութեան: Սակայն շատ չան-  
ցած, քաղցկեղ մը սկսաւ յայտնուիլ  
կունակին վարի մասին վրայ: Օր մը,  
երբ հրաւիրուած էր խումբ մը  
համալսարանականներու պատգամ  
տալու, ի մէջ այլոց ըսաւ. «Կեանքը  
կը փոխուի երբ նուազագոյնը  
կ'ակնկալես անկէ: Ապագան կը  
դառնայ անորոշ: Ուրեմն պէտք է  
կառչիլ այս օրուան, այս վայրկեանին  
եւ լաւագոյնը դուրս բերել անկէ»:

Աստուած շատ կարեւոր առաջ-





Չորեքշաբթի  
18 Մայիս

**Աստուծոյ  
Զօրաւոր Ձեռքերը**

Կարդա՛  
Ծննդոց 32. 22-30

Յակոբ մինակ մնաց,  
եւ մարդ մը կը  
գօտեմարտէր իրեց  
նետ՝ մինչեւ  
արշալույսին ծագիլը:  
—ԾՆՆԴՈՅ 32. 24

ԱՍՏՈՒԱՍՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԼԷՅ  
■ Սաղմոս 57-59

**Օ** ննդոց գիրքին մէջ յիշուած իւրաքանչիւր անձ եւ ընտանիք կարծես յատուկ դժուարութիւն մը ունի իրարու հետ ապրելու: Բնագիրը լեցուն է նախանձի, բարկութեան եւ վայրագութեան դէպքերով եւ խաբէութեամբ, որոնք ցոյց կու տան վիրաւորուած յարաբերութիւններու շարք մը: Նոյնիսկ Նոյ, Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ, որոնք Հաւատքի Հերոսներ նկատուած են, Եբր. 11-րդ գլխուն մէջ, ցոյց կուտան նկարագրի թերութիւններ եւ Հոգեւոր անկումներ: Բայց Աստուած երբեք չի լքեր գիրենք այդ վիճակին մէջ:

Յակոբ խաբէութեամբ իր եղբոր՝ Եսաւի անդրանկութիւնը առաւ: Ան ալ, երդում ըրաւ մեռցնել զինք (Ծննդ. 27. 41): Յետոյ, 20 տարիներ ետք, իրարու հետ գժտուած եղբայրներ, իրարու Հանդիպելէ առաջ, Յակոբ գօտեմարտեցաւ Աստուծոյ հետ: Եբր իր անունը Հարցուեցաւ, խաբեբայ կրտսեր եղբայրը ընդունեց, որ ինք «Յակոբ»ն էր՝ խաբողը (Հ. 24-27): Այդ դէպքը, Հոգեւորապէս դարձակէտ մը նկատուեցաւ Յակոբի համար:

Քարոզիչ մը ըսած է. «Քանի որ Աստուած չի լքեր մեզ, մենք ալ պէտք է յուսախաբուիինք մենք մեզմէ: Վերջին անձը, որուն պէտք է ներես այս աշխարհի վրայ, քու անձդ է»: Ուրիշ աստուածաբան մը ըսած է. «Միայն Աւետարանին ուսուցումներուն հետեւելով է, որ մարդիկ կրնան շարունակել սիրել իրենք գիրենք: Յոյսդ Տէրոջ վրայ ձգէ՛, եւ պիտի տեսնես Անոր զօրաւոր ձեռքերը որքան լաւ կերպով պիտի սրբագրեն քու թերութիւններդ»:

Եբր կունակ դարձուցած ենք Աստուծոյ, Ան կրնայ մեզի ետ դարձնել: Եբր Հոգեպէս քանդուած զգանք, Ան կրնայ վերակառուցանել մեզ:

**Երբ Քրիստոսի անձնատուր ըլլանք, Ան մեր պարտութիւնը յաղթանակի կը վերածէ:**







Հինգշաբթի  
19 Մայիս

## Շարժախիթի Հարց Մը

Կարդա՛  
Եբր. 4. 11-16

Աստուծոյ Խօսքը կե-  
նարար է, ազդու եւ  
ամէն երկասյրի սուրէ  
կտրուկ... եւ կը  
քննարկէ սիրտից  
մտածումներն ու  
մտադրութիւնները:  
—Եբրայեցիս 4. 12

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐԻ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆԸ ՄԷՋ

■ Գ. Թագ. 1-3

■ Առակաց 17. 1-14

**կառքը:** Ես արագ դատած էի մարդուն շարժառիթը եւ տեսայ, թէ չարաչար կը սխալէի:

Թէեւ մենք մարդոց արտաքին երեւոյթներէն եւ վարմունքներէն հետեւցնելով կարծիքներու կը յանդինք, սակայն միայն Աստուած կրնայ տեսնել մարդոց միտքերուն եւ հոգիներուն մէջ եղածը: Այս է պատճառը, որ մենք մեծապէս պէտք ունինք Աստուծոյ Խօսքին: Եբր. 4. 12-ը կ'ըսէ: «Աստուծոյ Խօսքը կենարար է, ազդու, եւ ամէն երկասյրի սուրէ կտրուկ: Ան թափացնելով կը բաժնէ անձն ու հոգին, ու յօդերը եւ ծուծը, կը քննարկէ սրտին մտածումներն ու մտադրութիւնները»:

Երբ մենք մեզ պատրաստ զգանք դատելու ուրիշներուն շարժառիթները, պահ մը կենանք եւ յիշենք, թէ միայն Աստուած Ինք կրնայ տեսնել մարդուն սիրտը, եւ միայն Անոր Խօսքը կրնայ արտաբերել շարժառիթները: Մեր պատասխանատուութիւնն է թոյլ տալ, որ Աստուած եւ Իր Խօսքը մեզ համոզէ մեր սիրտերուն համար:

**Մարդիկ պիտի դատուին այնպէս՝ ինչպէս Աստուած կը տեսնէ զիրենք, ոչ թէ ինչպէս մեմք կը տեսնեմք զիրենք:**

**Տ**իկինս եւ ես կանգ առինք երկաթուղիի մը քառուղիին վրայ, մինչեւ շոգեկառքը անցնի: Մինչ ինքնաշարժերու շարքին կեցած կը սպասէինք, մեր քովի ինքնաշարժը յանկարծ դուրս ելաւ շարքէն, մտաւ մօտակայ նեղ ճամբան եւ գնաց դէպի երկաթուղագիծի յաջորդ քառուղին:

Տինտջս դառնալով ըսի. «Նայէ՛ այդ մարդուն, փոխանակ մեզի պէս շարքին մէջ սպասելու, կ'ուզէ միւս կողմ անցնիլ»: Հազիւ այս խօսքս վերջացուցած էի, մարդը կեցուց ինքնաշարժը, դուրս ելաւ, եւ լուսանկարչական գործիք մը ձեռքին, սկսաւ նկարել դիմացէն եկող շոգե-





Ուրբաթ  
20 Մայիս

## Արդիւնաբեր Ցաւ

Կարդա՛  
Հռովմ. 8. 18-30

Բոլոր բաները բարիից գործաքկից կ'ըլլան անոնց, որ կը սիրեն Աստուած, անոնց որ կանչուած են Իր առաջադրութեան համաձայն:  
—Հռովմ. 8. 28

ԱՍՏՈՒԾՍԵՆՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ԱՄԷՋ

- Գ. Թագ. 4-6
- Առակաց 17. 15-28



*Եթէ մենք կը վստահինք երկրային բժշկներու, որ այդ մէկը ընեն մեր գաւակներուն, որքան աւելի պէտք է յօժար ըլլանք վստահելու Աստուծոյ՝ Մեծ Բժշկապետին, որպէսզի շտկէ մեր քանդուած կեանքերը, «Կերպարանակից ըլլալու Իր Որդիին պատկերին» (Հռովմ. 8. 29): Ցաւի պարագային, Աստուծոյ նպատակներէն մէկը Քրիստոսի պատկերը մեր սիրտերուն մէջ դրոշմել է: Կրնա՞նք լալ անոնց հետ, որոնք կու լան: Աստուած կրնայ ուզել, որ մեր այտերը թըղուին մեր արցունքներով, որպէսզի կարենանք հարազատորէն կարեկցիլ ուրիշներու ցաւին, ինչպէս Յիսուս ըրաւ: Յաճախ ինքնաբաժնի կը զգանք: Աստուած երբեմն կ'ուզէ մեր ապահովութիւնը խախտել, որպէսզի Քրիստոսով դարձի գանք եւ աւելի Իրեն վստահինք: Անհաւատ ենք: Թերեւս կարիքը կայ նեղութեան մը, որ մեզի ուսուցանէ վստահիլ Հօր Աստուծոյ, ինչպէս Յիսուս ըրաւ:*

*Յաջորդ անգամ, երբ ընկճուած կը զգաս, իրար մի՛ անցնիր: Փառք տո՛ւր Աստուծոյ եւ Իրեն վստահէ:*

**Աստուծոյ նպատակը ցաւի պարագային Իր պատկերը դրոշմելն է մեր սրտին մէջ:**





Շաբաթ  
21 Մայիս

## Ուղղագրութեան Մրցում

Կարդա՛  
Սաղմոս 119. 9-16

Իմ սրտիս մէջ պահեցի  
քու խօսքերդ:  
—Սաղմոս 119. 11

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԸ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՆ  
■ Գ. Թագ. 7-9  
■ Առակաց 18. 1-12

**Տ**իկինս եւ ես բաւական ուշ մնացինք դիտելու Հեռատեսիլի յայտագիր մը, որ շատ հետաքրքրական թուեցաւ մեզի: Եղածը միջնակարգ դպրոցներու աշակերտներուն միջեւ կատարուող ուղղագրութեան բերանացի մրցում մըն էր: Հիանալի էր տեսնել այդ աշակերտները ինչպէս շիտակ կը հեգէին այնքան դժուար բառեր:

Կարգ մը մասնակցողներ տկար ըլլալով, սկսան հետզհետէ դուրս մնալ մրցումէն եւ կարելի եղաւ նախատեսել, թէ ո՛վ յաղթական դուրս պիտի գայ: 13 տարեկան աղջիկ մը մնաց անպարտելի: Մէկ բառ մնաց իր եւ աշխարհի փոխյեանին միջեւ:

**Փոքր տատամտւքէ՛ մը ետք, աղջնակը կրցաւ այդ վերջին բառն ալ շիտակ հեգել:**

Յայտնի էր որ այդ աղջնակը լաւ կրնար հեգել: Ան կրցաւ նոյնիսկ հեգել բառ մը, որուն իմաստը չէր գիտեր:

Որպէս Քրիստոսի հաւատացողներ, շատ կարեւոր է մեզի համար գիտնալ Աստուծոյ Խօսքը, այսինքն՝ Աստուածաշունչը: Մեր նպատակը պէտք չէ ըլլայ գիտութիւն ամբողջ, այլ կարեւորը կիրարկելն է մեր հասկցածը, որպէսզի կարելի ըլլայ շարունակել հաւատքի գինուած մեր երթով:

Երբ գիտենք Աստուծոյ Խօսքը, ան մեզ կը պաշտպանէ հոգեւոր սայթաքումէ (Սաղմ. 37. 31): Ան կը հազեցնէ մեր հոգեւոր ծարաւ ունեցող հոգիները (Երեմ. 15. 16): Եւ ան շատ կարեւոր գէնք մըն է փորձութեան դէմ դնելու (Մատթ. 4. 1-11, Եփես. 6. 10-18):

Աստուծոյ Խօսքը գիտնալ նպատակ դարձնենք: Ապա, երբ կեանքի մարտահրաւէրներուն առջեւ գտնուինք, պատրաստ կրնանք ըլլալ որեւէ կացութեան մէջ:

---

**Իմաստուն մարդուն համար Աստուծոյ Խօսքը  
բաւարար է:**





Կիրակի  
22 Մայիս

### Յաջորդ Սերունդը

Կարդա՛  
Բ. Տիմ. 2. 1-13

Եւ ինչ որ լսեցիր  
ինձմէ... աւանդէ՛  
ճաւատարիմ մարդոց,  
որոնք ընդունակ ըլլան  
սորվեցնել Գաեւ  
ուրիշներու:  
—Բ. Տիմ. 2. 2

ԱՍՏՈՒԱՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Գ. Թագ. 10-12
- Առակաց 18. 13-24

Եւ ինչ որ լսեցիր ինձմէ... աւանդէ՛ ճաւատարիմ մարդոց, որոնք ընդունակ ըլլան սորվեցնել Գաեւ ուրիշներու: —Բ. Տիմ. 2. 2

Նուագախումբի մը թաւջութակահարը օր մը ըսաւ ինծի, թէ լաւագոյն նուագարանները ընդհանրապէս չի նուած կ'ըլլան փայտէ: Սակայն փայտը պէտք է շատ լաւ հինցնել որպէսզի խոնաւութիւնը երթայ անկէ: «Փայտը պէտք է 80 տարի հինցնել, որպէսզի ետքը կարելի ըլլայ նուագարանը գործածել 80 տարի եւս», ըսաւ ան: Նուագարանը չի նողը պէտք է գործածէ փայտ մը, որ կտրուած եւ հինցուած է ուրիշի մը կողմէ, որ երբեք իր ապրած ատեն պիտի չտեսնէ այդ գործիքը իր կատարելութեան հաստած:

Շատ մը կարեւոր բաներ կը կատարուին մեր կեանքին մէջ

յաջորդ սերունդներուն համար, ինչպէս ուսուցանել, մարզել, դաստիարակել: Պօղոս Առաքեալ ինքզինք կը շահադէմ մարդոց համար, որոնց վրայ իր գործած հոգեւոր ազդեցութիւնը պիտի չարունակէ իր այս կեանքէն հեռանալէ ետք ալ: Ան Տիմոթէոսի կը գրէ ըսելով. «Ինչ որ լսեցիր ինձմէ, շատ վկաներով աւանդէ հաւատարիմ մարդոց, որոնք ընդունակ ըլլան սորվեցնելու նաեւ ուրիշներու» (Բ. Տիմ. 2. 2): Պօղոս Առաքեալ, Տիմոթէոս, «հաւատարիմ մարդիկ» եւ «ուրիշներ», կը ներկայացնեն չորս հոգեւոր սերունդներ հիմնուած Տէր Յիսուս Քրիստոսի մշտատեւ Աւետարանին հիման վրայ:

Արդեօք մենք կ'ապրինք այսօրու<sup>ն</sup> համար միայն՝ կարճ շրջանի մը համար, թէ կը տրամադրենք մենք մեզ այսօր ուրիշներու, որոնք իրենց կարգին՝ պիտի փոխանցեն այդ հաւատքը յաջորդ սերունդին: Ապրիլ Յիսուսի համար եւ աշակերտներ պատրաստել կը նշանակէ մեր հաւատքը փոխանցել յաջորդ սերունդին:

**Մենք կ'ազդենք ապագայ սերունդներուն, այսօր՝ Քրիստոսի համար ապրելով:**





Երկուշաբթի  
23 Մայիս

## Սիրտի Հիւանդութիւն

Կարդա՛  
Ջաքարիա 7. 8-14

Մի՛ խստացէ՛ք ձեր  
սիրտերը:  
—Սաղմոս 95. 8

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆՆԵՐ ՄԷՋ

■ Գ. Թագ. 13-15

■ Առակաց 19. 1-15

Եղի ընկերութիւններ պիլիոն-  
ներով տղար կը շինեն ծախս-  
ւով դեղահատեր, որոնք կրնան ար-  
գիլել սիրտի երակներու կարծրա-  
նալն ու խցուիլը, որ կրնայ սիրտի  
տազնապի պատճառ դառնալ եւ  
որուն որպէս հետեւանք, հազարա-  
ւոր մարդիկ կը մահանան ամէն տարի:  
Երակներու կարծրացումէն աւե-  
լի լուրջ պարագայ մըն է մարդոց  
սիրտի կարծրացումը, որ կարելի չէ  
արգիլել որեւէ տեսակի դեղահատով:  
Ջաքարիա մարգարէն կը զգուշացնէ  
Իսրայէլի ժողովուրդը այդ հարցով:  
Անոնք կարծրացուցած էին իրենց  
սիրտերը եւ կը մերժէին Տէրոջ  
Խօսքին անապ: Որպէս ախտանիշեր  
այդ մահացու վիճակին, անոնք սկսած էին անարդար  
ըլլալ եւ կարեկցութիւն ցոյց չտալ տկարներուն (Ջաք.  
7. 9): Որպէս հետեւանք, Տէրը սկսաւ բարկանալ իրենց  
դէմ եւ դադրեցու մտիկ ընել անոնց (4. 13):

Որքան որ կարեւոր է եւ պէտք է զգուշանալ, որ մեր  
սիրտի երակները չխցուին, նոյնպէս եւ աւելի կարեւոր է  
եւ պէտք է զգոյշ ըլլալ, որ մեր սիրտերը կարծրացնելով  
անզգայ եւ անկարեկից չդառնանք մարդոց հանդէպ,  
որոնք շատ կարեւոր են Աստուծոյ համար, ինչպէս՝  
այրիներ, որբեր, օտարականներ եւ աղքատներ (4. 10):

Շատ կարեւոր է հետեւիլ մեր բժիշկներու  
հրահանգներուն, որպէսզի մեր երակները հեռու պահած  
ըլլանք կարծրանալէ: Սակայն, աւելի կարեւոր է  
հնազանդիլ Աստուծոյ, որպէսզի մեր սիրտը հեռու  
պահենք կարծրանալէ ուրիշին կարիքներուն հանդէպ:

Խնդրէ՛ Աստուծմէ այսօր, որ յիշեցնէ քեզի մէկը, որ  
կարիքը ունի կակուղ եւ կարեկից սիրտի մը:

**Քրիստոսը սիրել կը Յշամակէ կարեկից սիրտ մը  
ունենալ ուրիշներուն հանդէպ:**





Երեքշաբթի  
24 Մայիս

**Ստանալ՝ Ինչ Որ  
Կ'ուզես**

Կարդա՛  
Ղուկաս 12. 15, 22-34

Մէկու՞ն ստացուաք՞նե-  
րու՞ն առատութե՞նե՞ն  
կախուած չէ իր  
կեանքը:  
—Ղուկաս 12. 15

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԸ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ  
■ Գործք 23-28  
■ Առակաց 19. 16-29

Ներկայիս ժողովրդականացած մտածում մը կայ, ուզած բանդ ունենալու մասին, որուն կարելի է հանդիպիլ քիչ մը ամէն տեղ: Անիկա կոչուած է նաեւ «Ուշադրութիւն գրաւող օրէնք»: Պարզապէս մտածէ՛ եւ զգա՛ ինչ որ կ'ուզես հրապուրել եւ «օրէնքը պիտի գործածէ մարդիկ, պարագաներ եւ դէպքեր, որ մագնիսացնեն քու ուզածդ քեզի եւ քեզ ալ ուրիշին»: Այս դրական իմաստասիրական մտածելակերպը կ'ուսուցանէ, որ քու տիրապետող մտածումներուդ զօրութիւնը պիտի հրապուրէ քու կացութիւնդ:

Մենք այս տեսակ գաղափարի չենք հանդիպիր Աստուածաշունչին մէջ: Որպէս հաւատացեալներ, մենք լաւ պատճառներ ունինք դրական ըլլալու մեր մտածումներուն մէջ, որովհետեւ մեր Երկնաւոր Հայրը կը հասկնայ մեր կարիքները եւ կը հոգայ զանոնք: Քանի որ Ան կը հոգայ մեզ, պէտք չունինք մտահոգուելու (Ղուկ. 12. 29-30): «Որովհետեւ մէկուն ատացուածքներուն առատութենէն կախուած չէ անոր կեանքը» (Հ. 15), ուրեմն պէտք է նպատակ դարձնենք «Աստուծմով հարստանալը» (Հ. 21): Ատիկա կրնանք ընել իր թագաւորութիւնն ու կամքը փնտռելով (Հ. 31) եւ մեր գանձերը երկինքը դիզելով, ոչ թէ մեզի համար այս կեանքին մէջ: Յիսուս ըսաւ. «Ուշադիր եղէ՛ք եւ զգուշացէ՛ք ազահութենէ» (Հ. 15), որովհետեւ օր մը, անմիտ հարուստի առակին մէջ յիշուածին պէս (Ղուկ. 12) ամէն բան ետեւ՝ հոս ձգած, պիտի մեկինք: Ուրեմն Աստուծոյ կամքին հնազանդ ապրելով է, որ երկինքը գանձեր կ'ունենանք: Մինչ այդ Աստուած կը խոստանայ հոգալ մեր երկրային կարիքները, ինչ ալ ըլլան պարագաները:

**Գառնուկը, որ մեռաւ մեզ փրկելու համար, չովիւն է, որ կ'ապրի մեզ առաջնորդելու համար:**





Չորեքշաբթի  
25 Մայիս

**Կամուրջներ  
Կառուցել**

Կարդա՛  
Գործք 9. 17-27

Բառնաբաս՝ առնելով  
զայն տարաւ  
աշակերտներուն:  
—Գործք 9. 27

ԱՍՏՈՒԱՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՅ  
■ Մալմոս 60-62

**Ն**որ հաւատացեալ մը, վերջերս սկսաւ յաճախել մեր եկեղեցին: Ան ունէր երկար գոյնզգոյն ցցուած մագեր: Մութ գոյն եւ ծակծկած տաբատ մը հագած էր: Մորթը գոյնզգոյն գծուած եւ հոս հոն մորթի ծակծիկներու վրայ գարդեղէններ կախած: Ոմանք տարօրինակ նայուածքներ ուղղեցին անոր, ուրիշներ ալ զգալ տուին, թէ «լաւ է քեզ եկեղեցի տեսնել, բայց հաճիս իմ քովս մի նստիր»: Իսկ ուրիշներ ալ ետքը քովը գացին, բարի գալուստ մաղթեցին եւ սիրալիր խօսակցութիւն ունեցան անոր հետ: Անոնք կամուրջ կառուցողներն էին: Բառնաբաս այս կամուրջ կառուցողներէն էր Սօղոսի համար (որ ետքը Պօղոս կոչուեցաւ): Երբ Սօղոս Երուսաղէմ գնաց իր դարձի գալէն 3 տարիներ ետք, չստ մը աշակերտներ սկսան վախճանալ անկէ եւ կամուրջներ անոր բարեկիրութեան (Գործք 9. 26): Ան սիրալիր բարի գալուստ չստացաւ Երուսաղէմի եկեղեցիէն որոշ պատճառներով: Սօղոս ստակալի համբաւ մը ունէր որպէս քրիստոնեաները հալածող: Սակայն, Բառնաբաս դարձի եկած հաւատացեալ մը, հաւատաց Աստուծոյ շնորհքի հրաշագործութեան Սօղոսի կեանքին մէջ եւ կամուրջ մը եղաւ Սօղոսի եւ առաքեալներու միջեւ (Հ. 27)

Սօղոս պէտք ունէր անձի մը, որ իրեն հետ ըլլար, քաջալերէր զինք, սորվեցնէր իրեն եւ ներկայացնէր միւս հաւատացեալներուն: Բառնաբաս եղաւ այդ անձը եւ կամուրջը: Որպէս արդիւնք, Սօղոս խորացուց եւ ամրացուց իր յարաբերութիւնը աշակերտներուն հետ եւ Աւետարանը քարոզեց ազատօրէն եւ քաջաբար:

Նոր հաւատացեալներ Բառնաբասի պէտք ունին իրենց կեանքին մէջ: Գտի՛ր միջոցներ այդ կամուրջը ըլլալու:

**Այսօր մէկը քաջալերելու համար կամուրջ մը եղիր:**





Հինգշաբթի  
26 Մայիս

## Արևը Մեկնած

Կարդա՛  
Եսայի 60. 17-22

Քու արեւդ անգամ մըն  
ալ մայր պիտի չմտնէ  
...հապա Եհովան քեզի  
յախտեցակիս լոյս  
պիտի ըլլայ, եւ սուգի  
օրերդ պիտի աւարտին:  
—Եսայի 60. 20

ԱՍՏՈՒԱՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՅ

■ Գ. Թագ. 16-18  
■ Առակաց 20. 1-10

Տարիներ ետք, ան գրեց. «Կանչեցի  
մէկը որ կարենար նուազ մը գրել  
եւ գայն նուազէինք զինուորական  
կոչերու որպէս նոր եղանակ, որ ական-  
ջին հաճելի ըլլայ: Երբ կարելի չեղաւ  
մէկը գտնել, եւ փորձեցի եղանակ  
մը հնարել իմ ճաշակիս համեմատ  
երաժշտութեան որեւէ նօթի մասին  
ծանօթութիւն չունենալով: Ըրածս  
պարզապէս ականջի կարգադ-  
րութիւն մը եղաւ»: Զօրավար Պաթրիֆիլտ այդ եղանակը  
ստուա իր միաւորի փողահարին, որ նուազ է եւ այդ ըրածը  
պատմութեան անցաւ: Անկէ ետք, զինուորական թաղում-  
ներու յաճախ կը գործածուի ողբերգի այդ ծանօթ եղանակը:  
Այդ երգին մէկ համարը կ'ըսէ. «Օրը ամբողջացած է,  
արեւը մեկնած բլուրներէն, լիճերէն եւ երկիրէն: Ամէն  
բան լաւ եւ ապահով կը հանդէսի, Աստուած մօտ է»:

Ո՛րքան լաւ եւ մխիթարող քնարերգութիւն մըն է ասիկա,  
երբ հաւատարիմ եւ նահատակուող զինուորներ հողին կը  
յանձնուին: Եւ ի՞նչ մեծ յոյս, երբ յիշուի, որ Աստուած  
միշտ մօտ է մեզի, մասնաւորապէս մահուան պարագային:

Երբ մահն ու չարը կը տիրապետեն, Եսայի մարգարէ կը  
նախատեսէ օր մը, երբ մահը ինք պիտի մեռնի. «Քու  
արեւդ անգամ մըն ալ մարը պիտի չմտնէ... Եւովան քեզի  
յախտեցակիս լոյս պիտի ըլլայ», կ'ըսէ մարգարէն (60. 20):  
«Սուգի օրերդ պիտի աւարտին», որովհետեւ Աստուած  
մօտ է:

**Արեւամարը այս երկրի վրայ արեւածագ է գալի՞ք  
աշխարհի համար:**







Ուրբաթ  
27 Մայիս

**Կրնա՞նք Իսկապէս  
Լսել Աստուծմէ**

Կարդա՛  
Գ. Թագ. 19. 9-12

Հանդարտ կեցէ՛ք ու  
գիտցէ՛ք թէ ես եմ  
Աստուծո՛ւ:  
—Սաղմոս 46. 10

ԱՍՏՈՒԾՆՈՒԹՅԱՆ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆԸ ՄԷ՛Ջ  
■ Գ. Թագ. 19-20  
■ Առակաց 20. 11-20

Բարեկամ մը, որ յաճախ հոգեւոր խորհրդածողովներ կ'առաջնորդէ, օր մը ըսաւ ինծի, թէ երբեք չէ պատահած, որ իր կազմակերպած լուռ աղօթածողովներուն մէկը չլսէ Աստուծոյ Իրեն խօսիլը: Հետաքրքրուած եւ քիչ մըն ալ թերահաւատ, 5 օրերու խորհրդածողովի մը արձանագրուեցայ: Բաւական ազատ ժամանակ ունէինք եւ շատ քիչ պարտականութիւններ, ինչպէս՝ օրական երկու ժամ աղօթքի յատկացնել:

Առաջին օրը ժամանակ ունեցայ շրջելու մօտակայ մարգագետին մը եւ նստայ ծառի մը դիմաց: Հօտ մը, բաղկացած 147 եղջիւրաւորներէ, սկսան թափառիլ ճիշդ այդ դաշտին մէջ, ուր նստած էի: Հետաքրքրական էր դիտել այդ եղջիւրաւորները: Սակայն, շատ չանցած դարձաւ ձանձրացուցիչ: Այդ բոլորէն ետք սակայն, բնութեան հանդարտութիւնն ու գեղեցկութիւնը սկսան հրապուրել զիս եւ ազդել վրաս: Մնացած մի քանի օրերուն, սկսայ կարծես խօսակցութիւն մը ունենալ Աստուծոյ հետ: 50 տարեկան պիտի ըլլայի եւ խնդրեցի Աստուծմէ առաջնորդութիւն, թէ ինչպէս պէտք էր հոգիս պատրաստէի կեանքիս մնացած տարիներուն համար: Շատ մը բաներ եկան միտքս, մինչ նստած էի ժամեր շարունակ այդ դաշտին մէջ: Պէտք է ընդունիմ, թէ իրապէս լսեցի զԱստուծո՛ւ այդ օր: Երբ Եղիա կեցաւ Տէրոջ առջեւ Քորեի լեռան վրան, ան չհանդիպեցաւ Աստուծոյ հովին մէջ, ո՛չ ալ երկրաշարժին կամ կրակին մէջ: Բայց Աստուծո՛ւ խօսեցաւ «մեղմ եւ թեթեւ ձայնի մը միջոցով» (Գ. Թագ. 19. 11-12): Աստուծո՛ւ ունի յատուկ միջոցներ տարբեր առիթներով խօսելու մեզի, երբ դադրեցնենք մեր շուրջը եղող աղմուկները եւ իսկապէս փնտռենք Զինք:

**Աստուծո՛ւ կը խօսի անոնց, որոնք լուռ կը կանամ  
իր առջեւ:**





Շաբաթ  
28 Մայիս

## ՄԵՆՔ ՄՈՒԿ Կ'ՐՆԵՆՔ

Կարդա՛ր՝  
Սաղմոս 119. 41-48

Խօսքը գործադրողներ  
եղե՛ք, եւ ոչ թէ միայն  
լսողներ դուք ձեզ  
խաբերով:  
—Յակոբ 1. 22

ԱՍՏՈՒԾՆԵՐՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԵՒՋ

■ Գ. Թագ. 21-22

■ Առակաց 20. 21-30



պատուութիւնները կը սկսին փոխելի: Ուղղակի Աստուծոյ ըսած խօսքերը ազդած էին մարդոց սպրեկակերպին վրայ:

Յաճախ լսած եմ մարդիկ, որ կ'ըսեն. «Եթէ Աստուած ինծի ուղղակի խօսի եւ ըսէ ինչ պէտք է ընեմ, ես պիտի հնազանդիմ իրեն»: Պարզ եւ յստակ իրականութիւնը այն է, թէ Աստուած արդէն խօսած է մեզի իր խօսքով՝ Աստուածաշունչով: Արդեօք մտիկ կ'ընե՞նք իրեն, երբ կը խօսի:

Սաղմոսերգուն կը փափաքի հնազանդիլ Աստուծոյ Խօսքին, երբ կ'ըսէ. «Քու օրէնքդ շարունակ պիտի պահեմ, դարէ դար» (Սաղմ. 119. 44): Յակոբոս Առաքեալ կը գգուչացնէ Տէրոջ Խօսքը անտեսողներուն, երբ կ'ըսէ. «Խօսքը գործադրողներ եղէ՛ք եւ ոչ թէ միայն լսողներ՝ դուք ձեզ խաբերով» (Յակոբ. 1. 22):

Ի՞նչ պիտի ըլլայ պատասխանդ, երբ Աստուած խօսելու ըլլայ քեզի քու ձայնափիւռէդ: Երախտապարտ ըլլանք Աստուծոյ, որ Ան խօսած է եւ կը շարունակէ խօզիլ մեզի ո՛չ թէ ձայնափիւռէն, հապա իր Սուրբ Խօսքին միջոցով:

**Աստուծոյ գործերուն մէջ կը տեսնեմք Անոր  
ձեռքը, Անոր Խօսքին մէջ կը լսեմք Անոր սիրտը:**

**Յ**աջորդ Ձայնը Որ Կը Լսես խորաբով ձայնափիւռի հրապուրիչ ժապաւնը, որ 1950-ին մէջտեղ եկաւ, կը պատմէ ընտանիքի մը մասին՝ յատուկ փորձանքներով եւ նեղութիւններով լեցուն: Գիշեր մը, Աստուծոյ ձայնը կը լսեն ձայնափիւռէն: Բայց ոչ միայն իրենց ձայնափիւռէն – այլ Աստուծոյ ձայնը լսելի կը դառնայ աշխարհի ամէն կողմ՝ բոլոր ձայնափիւռներէն, որ նոյն բանը կ'ըսէ, նոյն ժամուն:

Առաջին առիթով, մարդիկ չեն ուզեր հաւատալ: Ետքը կը սկսին վախնալ: Քանի մը օրեր «Ձայնը» լսելէ ետք, հետզհետէ մարդոց կեցուածքը, գործերը եւ նախա-





Կիրակի  
29 Մայիս

## Վերջապէս Տուն

Կարդա՛ր  
Յովհ. 14. 1-6

Երբ երթամ եւ տեղ պատրաստեմ ձեզի, դարձեալ պիտի գամ ու բովս ընդունիմ ձեզ, որպէսզի ուր ես եմ՝ դուք ալ ճոճ ըլլաք: —Յովհ. 14. 3

ԱՍՏՈՒԱՍՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԵ՛Կ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷ՛Ջ

■ Դ. Թագ. 1-3

■ Առակաց 21. 1-10

**մէջ:** Անոնք ծովային փոթորիկներ դիմադրաւելու փորձառութիւնն ալ ունեցած էին եւ ծովու գլխապտոյտ հիւանդութիւններ: Եւ հիմա, վերջապէս հասած էին իրենց հանգրուանը: Այս պիտի ըլլար իրենց նոր տունը:

Օր մը, բոլոր անոնք, որոնք կը հաւատան եւ իրենց յոյսը կը դնեն Քրիստոսի վրայ որպէս իրենց անձնական Փրկիչը, երբ ձգեն այս կեանքը պիտի երթան այնտեղ՝ ուր մեր Տէրը պատրաստած է մեզի համար (Յովհ. 14. 3): Այդ ճամբորդութիւնը կրնայ դժուար ըլլալ եւ ոչ հանգստահատ, բայց մենք՝ որպէս հաւատացեալներ, յոյսով կը նայինք այդ օրունան:

Երգահան մը գեղեցիկ երգի մը բառերով այս երկրային կեանքը կը նմանցէ փոթորկալի ծովու մը: Երգը կը վերջացնէ ըսելով. «Յամաքի մը վրայ կը կոխես եւ յանկարծ կը զգաս, թէ երկինքն է ան»: Երբ Քրիստոսի հանդիպինք դէմ առ դէմ եւ առաջին անգամ, «վերջապէս մեր Երկնային Տունը» հասած պիտի ըլլանք:

**Աճճճճ, որոճճ կը սիրեն եւ կը ծառայեն Աստուծոյ երկրի վրայ, շիտակ տունը պիտի ըլլան երկինքի մէջ:**





Երկուշաբթի  
30 Մայիս

**Ասկէ Մինչեւ  
Երկինք**

Կարդա՛  
Եփեսացիս 2. 1-10

Քանի որ մենք Անոր  
ձեռակերտն ենք,  
Քրիստոս Յիսուսով  
ստեղծուած:  
—Եփես. 2. 10

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ

- Դ. Թագ. 4-6
- Առակաց 21. 11-21

**Խորհինք, թէ «վերջացաւ, փրկուած եմ, երկնային Հարստութեան տիրացած, ա՛լ ոչինչ ունիմ ընելիք Աստուծոյ Համար»:**

Այս մէկը մասամբ շիտակ կը թուի, բայց շատ սխալ է: Առաջին ակնարկով, մեր ճամբորդութեան գինը այստեղէն մինչեւ երկինք վճարուած է Յիսուսի զոհաբերութեամբ: Մենք ոչինչ կրնանք ընել մեր փրկութիւնը չափելու: Սակայն կայ երկրորդ մաս մը, որ պէտք է նկատի ունենանք:

Եփեսացիս 2. 8-9 Համարներուն մէջ Առաքեալը յստակօրէն կ'ըսէ, թէ պէտք է ունինք բան մը ընելու: Փրկութիւնը Աստուծոյ պարգեւն է: Ապա 10-րդ Համարին մէջ կ'ըսէ, թէ մենք իսկապէս գործ մը ունինք ընելիք: Որպէս Հաւատացեալներ, Քրիստոսով նոր ստեղծուածներ ենք բարի գործերու Համար: Աստուած ծրագրուած գործեր ունի մեզի Համար ընելու, մինչ այս երկրի վրայ ենք - ո՛չ թէ մեր պարտքը վճարելու, այլ մեր Փրկիչը պատուելու Համար:

Կեանքը այստեղէն երկինք նաւապտոյտ մը չէ, այլ սքանչելի առանձնաշնորհում մը, կոչ մը՝ Աստուծոյ ծառայելու:

**Մենք չենք փրկուած բարի գործերով, այլ՝ բարիք գործելու համար:**

**Մ**արդիկներ եւ մարդիչներ յաճախ կը ստանան բան մը՝ ոչինչի փոխարէն: Օրինակ, մարդիչ մը Յտարուան Համաձայնութիւն կը ստորագրէ խումբի մը վարչութեան հետ, տարեկան մէկ միլիոն տոլարի վարձատրութեամբ: Սակայն, առաջին եղանակին իսկ խումբը շատ տկար դուրս կու գայ եւ պատասխանատուներ կը աոխարին մարդիչը դուրս դնել: Մարդիչը կը հեռանայ, սակայն տակաւին երկու տարուան Համաձայնութիւն մնացած ըլլալով, ան կը գանձէ 2 միլիոն տոլարը, առանց բան մը ընելու:

Որպէս Հաւատացեալներ, պէտք է գգոյշ ըլլանք մեզ փրկող Հաւատքը այդպէս նկատելէ: Երբեք պէտք չէ





Երեքշաբթի  
31 Մայիս

**Արագութեան  
Համար Տուգանք**

Կարդա՛  
Հոովմ. 3. 9-20

Ո՛չ մէկ արդար կայ,  
ո՛չ իսկ մէկ ճատ:  
—Հոովմ. 3. 10

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՅ  
■ Հոովմ. 1-4  
■ Առակաց 21. 22-31

Խախտել, որքան յաճախ եւ դիւրաւ կը խախտեմ Աստուծոյ կատարեալ օրէնքները որոնք կեանքի բոլոր երեւոյթներուն մէջ տեղ կը գտնեն: Ոչ մէկա, որքան ալ նախանձախնդիր հաւատացեալներ ըլլանք, չենք կրնար կատարեալ ըլլալ: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ուստի ոչ մէկ մարմին պիտի արդարանայ Անոր առջեւ օրէնքին գործերով, քանի որ օրէնքին միջոցով կ'ըլլայ մեղքին գիտակցութիւնը» (Հոովմ. 3. 20): Օրէնքը պահելը մեզ չի փրկեր, այլ օրէնքի միջոցով կը գիտակցինք մեր մեղաւոր ըլլալուն (3. 7-12): Ասոր համար էր, որ Աստուած Իր Որդին ղրկեց մեզ փրկելու: Պէտք է Քրիստոսով արդարանայ, որովհետեւ մեր բարի գործերը չեն կրնար արդարացնել մեզ: Առաքեալը կ'եզրակացնէ. «Մարդ կ'արդարանայ հաւատքով, առանց օրէնքի գործերուն» (4. 28): Եթէ կը հաւատաս Քրիստոսի, Առաքեալին պէս կրնաս ըսել. «Երանի՛ անոնց, որոնց անօրէնութիւնները կը ներուին եւ որոնց մեղքերը ծածկուեցան: Երանի՛ այն մարդուն, որուն մեղք չի սեպեր Տէրը» (Հոովմ. 4. 7-8):

**Աստուծոյ օրէնքը մեզ կարիքի մը առջեւ կը դնէ, որ միայն Աստուծոյ շնորհքը կրնայ հայթայթել:**

**Ս**ինկախուրի մէջ 34 տարիներ ինքնաշարժ վարելէ ետք, առաջին անգամ էր, որ արագութեան համար տուգանքի կ'ենթարկուէի: Առաջին անգամ չէր, որ սահմանուած արագութեան օրէնքը կը խախտէի, բայց առաջին անգամն էր, որ ոստիկանէն բռնուելով՝ տուգանք կը ստանայի:

Առաջին հակազդեցութիւնս դժգոհանք էր: Սակայն երբ սկսայ խորհրդածել, անդրադարձայ, որ հոգ չէ թէ որքան երկար ստեն ես քշելու օրէնքը խախտած էի առանց տուգանքի ենթարկուելու, տակաւին համարատու էի օրէնքին դիմաց:

Եթէ յաճախ արագութեան այդքան յստակ օրէնքը կրնամ





Չորեքշաբթի  
1 Յունիս

## Սենեկակից

Կարդա՛  
Կողոս. 1. 3-8

Ամէն ասե՛ն աղօթելով  
ձեզի ճամար շնորհա-  
կալ կ'ըլլանք Աստուծմէ՛  
ու մեր Տէրոջ՝ Յիսուս  
Քրիստոսի Հօրմէն:  
—Կողոս. 1. 3

ԱՍՏՈՒԱՍՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
■ Սաղմոս 63-65

**գործածուիլ ընկերութեան մէջ, որպէս «մտերիմ բարեկամ» իմաստով:**

Բարեկամական խոր կապեր կը հաստատուին նաեւ քրիստոնէական ծառայութեան մէջ: Անոնք՝ որոնք կ'աշխատէին Պողոս Առաքեալի հետ, ծանօթ էին Հալաճանքի եւ բանտարկութեան երեւոյթներուն: Նոյն ծառայութեան մէջ ըլլալ խորուն կապ մը ստեղծած էր առաքեալներուն միջեւ: Կողոսացիներուն իր ուղղած նամակին մէջ Առաքեալը Եպափրասը կը կոչէ «սիրելի ծառայակից» (Հ. 1. 7): Բառը կարելի է բացատրել որպէս «միասին գերի» կամ «երկու հոգիներ, որոնք նոյն տէրոջ կը ծառայեն»:

Երբ հաւատացեալներ կ'ապրին եւ կը գործեն Քրիստոսի սիրութեան տակ, կը զգան, որ իրենց կեանքերը ձեւով մը միացած են իրարու՝ իրենց ծառայութեան մէջ: Ծառայելով Քրիստոսի իբր ծառաներ, հոգեւոր մտերմութիւն մը կը ստեղծուի, որ կը գերազանցէ սենեկակից ըլլալու վիճակէն: Եւ այդ կը շարունակուի մինչեւ յաւիտենականութիւն:

**Հաւատացեալներ գորաւոր կը զգան  
երբ միասին են:**

**Ա**նգլիոյ մէջ, 19րդ դարուն մէջ պարտատէրեր իրաւունք ունէին բանտարկել տալու անոնց, որոնք անկարող էին վճարել իրենց պարտքը: Այս բանտարկեալները յատուկ սենեակներու մէջ կը դնէին: Քանի որ անոնք ոճրագործ կամ վայրագ մարդիկ չէին, փոխադարձ վստահութեան եւ մտերմութեան զգացումներ չուտով տեղ կը գտնէր անոնց յարաբերութեանց մէջ: Անոնք միասին խաղեր կը խաղային, միասին կ'ուտէին եւ սենեկակիցներ էին:

Ժամանակի ընթացքին, բանտարկեալներ սկսան գիրար «սենեկակից» կոչել: Աւելի հետք, այդ բառը բանտէն դուրս գալով, սկսաւ



Հինգշաբթի  
2 Յունիս

### Վտանգաւոր Զբաղում

Կարդա՛  
Մատթէոս 8. 23-27

Ըսաւ անոնց, «Թե՛րա-  
հաւատնե՛ր, ինչո՞ւ  
այդպէս երկչոտ էք»: Այն ատեն ոտքի ելաւ,  
սաստեց հովերն ու  
ծովը եւ մեծ  
խաղաղութիւն եղաւ:  
—Մատթ. 8. 36

ԱՍՏՈՒՍՏՈՒՆՆԵՐ ՄԷԿ  
ՏՐՈՒՆՆԵՐ ՄԷՋ

- Դ. Թագ. 7-9
- Առակաց 22. 1-8

**Թ**ղթակից մը կ'ուզէր Հարցազրոյց մը ունենալ մարգրիկի մը հետ: Սակայն կը խորհէր, թէ բաւական դժուար պիտի ըլլար այդ մէկը իրագործել, մանաւանդ երբ հաւանականութիւնը կար, որ մարգրիկը կրնար մրցանիչը կորել: Վերջապէս, բաւական աշխատանք տանելէ ետք, աւիթը կը յարմարի եւ թղթակիցը բաւական վախով կը կատարէ Հարցազրոյցը: Մարգրիկը իրեն ցոյց կու տայ, թէ ինչպէս պէտք էր գործածել իր մարմինը՝ որքերը պարանիւն օդակներուն անցնելով: Թղթակիցը թերթին մէջ գրած իր տեսակցութեան մասին կ'ըսէր, թէ ինք մասնաւոր դաս մը սորված էր այդ Հարցազրոյցէն, թէ

ինչպէս կարելի է վարուիլ, երբ վախի եւ վտանգի առջև գտնուինք: Այդ մարգրիկը իր յարատեւ փորձերով կրցած էր յաղթահարել վախին եւ վտանգին: Վտանգը միշտ կայ, ըսած է ան, նոյնիսկ երբ իր ինքնաշարժը կը քշէ դէպի հանրային պարտէզ: Վախը եւ վտանգը յաճախ կը չփոթուին:

Երբ Յիսուս եւ իր աշակերտները Գալիլիոյ ծովը կը կտրէին, փոթորիկի մը բռնուեցան եւ ալիքները սկսան նաւուն մէջ խուժել: Ի՞նչ զարմանք, Յիսուս կը քնանար: Աշակերտները արթնցուցին Ջինք եւ ըսին. «Տէր, փրկէ՛ մեզ, ահա կը կորսուինք» (Մատթ. 8. 25): Ազնիւ յանդիմանութեամբ մը Յիսուս ըսաւ. «Թերահաւատներ, ինչո՞ւ այդքան վախկոտ էք: Այն ատեն ոտքի ելաւ, սաստեց հովերն ու ծովը, եւ մեծ խաղաղութիւն եղաւ» (Հ. 26):

Աշակերտներուն պէս մենք ալ, ո՛րքան աւելի լաւ ճանչնանք Յիսուսը, ա՛յնքան աւելի կը վստահինք Անոր: Մեր մեծադոյն եւ վտանգաւոր սխալը, որ յաճախ կը գործենք, Անոր չվստահիլն է կեանքի փոթորիկներու ընթացքին:

---

**Աջֆերդ Յիսուսի վրայ կեդրոնացուր եւ դում  
այլեւս վախերդ պիտի չտեսնես:**



Ուրբաթ  
3 Յունիս

**Արդարութեան  
Փնտոտիքը**

Կարդա՛  
Փողովողի 3. 14-22

Արեւին տակ տեսայ,  
թէ իրաւունքի տեղ  
անիրաւութիւն կայ, եւ  
արդարութեան տեղ՝  
ամբարտաւանութիւն:  
—Փողով. 3. 16

ԱՍՏՈՒԱՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՅ

- Գ. Թագ. 10-12
- Առակաց 22. 9-16

**Դ**ատաւարութիւն մը իր վճիռը  
տալով վերջ գտած էր եւ կաս-  
կածելի ոճրագործը անպարտ ար-  
ձակուած, հակառակ այն իրողու-  
թեան, որ բաւարար փաստեր կային,  
թէ ինքն էր ոճիրը գործողը: Անոր  
ընտանիքի անդամները մեծ ուրա-  
խութեամբ դուրս եկան դատարա-  
նէն: Իսկ միւս կողմէ, սպաննուած  
աղջկան ծնողքը, շատ զարմագած  
էր, թէ ի՞նչպէս արդարութիւն ընե-  
լու կոչուած դատարան մը այդպիսի  
անարդար վճիռ կ'արձակէր: «Ո՛ւր  
է արդարութիւնը այստեղ: Ո՛ւր է  
արդարութիւնը», սկսան բարձր  
ձայնով եւ լալով բացականչել,  
բարձրախօսին առջեւ կեցած:

Նման երեւոյթներու յաճախ կը հանդիպինք թերթերու  
մէջ կամ հեռատեսիլի վրայ: Բնագրաբար կը ցանկանք  
արդարութեան, բայց այնպէս կը թուի, թէ կարելի չէ զայն  
գտնել: Ամենէն իմաստունը նկատուած Սողոմոն Թագաւոր,  
իր օրերուն, նման յուսախաբութեանց առջեւ գտաւ ինքզինք:  
Ան տեսաւ, որ անկատար մարդ արարածներ չեն կրնար  
կատարեալ արդարութիւն տնօրինել: Անոր համար, ըսաւ.  
«Արեւին տակ տեսայ, թէ իրաւունքի տեղ անիրաւութիւն  
կայ, եւ արդարութեան տեղ՝ անբարչտութիւն» (Ժող. 3. 16):

Եթէ մեր լման վստահութիւնը դրած ենք անկատար  
մարդոց վրայ, միշտ յուսախաբ պիտի ըլլանք: Սակայն  
իմաստուն առակագիրը աւելցնելով կ'ըսէ. «Ատուած պիտի  
դատէ արդարն ու ամբարիշտը, որովհետեւ հոն ժամանակ  
կայ ամէն բանի եւ ամէն արարքի համար» (Հ. 17):

Արդարութիւն փնտելը կրնայ իմաստ ունենայ եթէ  
միայն Աստուծոյ վստահելու ըլլանք, որ միշտ արդար է  
ամէն բանի մէջ եւ ամէն ստեղծ:

**Արդարութեան կշիռքը օր մը կատարելապէս  
ճերդաշնակուած պիտի ըլլայ:**







Շաբաթ  
4 Յունիս

## Մի՛ Երթար Վարը՝ Այնտեղ

Կարդա՛  
Յովհ. 14. 15-24

Սէրը սա է.- Ընթացալ  
անոր պատուիրան-  
ներուն համաձայն:  
-Բ. Յովհ. 1. 6

ԱՍՏՈՒԱՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԱԷՋ

■ Դ. Թագ. 13-15

■ Առակայ 22. 17-29

Խանութ մը կրակ առած էր: Ոստիկանական ինքնաշարժ մը կը մտնենայ իրեն: Ոստիկանը ատրճանակը պատուհանէն դուրս հանած՝ իրեն ուղղելով կ'ըսէ. «Մի՛ երթար աւելի վար այնտեղ»:

Մեր ըմբոստական կամ կամակոր միտումները յաճախ մեզ կը հասցնեն անբաղձալի հետեւանքներու: Խոսելու փոխարէն բարկութեամբ Մովսէս գարկաւ ժայռին՝ ջուր ստանալու համար եւ ո՛չ այնպէս, ինչպէս Աստուած պատուիրած էր իրեն: Անոր համար ան գրկուեցաւ խոստացուած երկիրը մտնելու առանձնաշնորհումէն, իր ժողովուրդին հետ (Թուոց 20. 7-12): Յովնան անհնազանդ եղաւ Նինուէ երթալու իրեն տրուած Աստուծոյ հրահանգին: Երեք օրեր առիթ տրուած էր իրեն՝ իր ընտրութիւնը որոշելու՝ մեծ ձուկի մը փորին մէջ (Յովնան 1):

Ինչ գոհողութիւններ պէտք են մեզի, հնազանդելու մեր Տէրը եղող Աստուծոյ: Պէտք է հնազանդինք Անոր որովհետեւ մենք կը սիրենք Ձինք (Յովհ. 14. 15, 21):

«Հնազանդութիւն» ուրիշ բառ մըն է Սէր եւ  
հաւատարմութիւն նշանակող:

Հեղինակ մը, իր Դասեր Կանու-  
խէն Սորվուած գիրքին մէջ կը  
պատմէ իր գոյհճական կեանքի տա-  
րիներուն մասին: 1968-ը, քաղաքա-  
կան եւ ընկերային մեծ իրարան-  
ցումներու տարի մըն էր Միացեալ  
Նահանգներու մէջ: Խուովութիւններ  
սկսած էին յայտնուիլ շատ մը կա-  
րեւոր քաղաքներու մէջ: Շիքակոյի  
մէջ, իր ննջարանի տանիքէն, հեղի-  
նակը կը լսէ մեքենաներու ահա-  
զանգերը եւ կրակ առած վայրեր:  
Աշակերտներուն կը պատուիրուի  
չըջաբակէն դուրս չգալ, բայց ինք  
կ'ուզէ տեսնել պատահածը:

Դուրս գալով կը սկսի վազել  
դէպի մօտակայ փողոցը, ուր մեծ





Կիրակի  
5 Յունիս

## Շրջանաւարտութեան Մաղթանք Մը

Կարդա՛ր  
Սաղմոս 42

Ինչո՞ւ կը ցածնաս, ո՛վ իմ հոգիս, եւ ինչո՞ւ զիս կ'անհաճագոտացնես: Աստուծոյ յուսա՛, քանի որ տակաւին պիտի փառաբանեմ Ձայն:

—Սաղմոս 42. 5

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆՆԵՐ ՄԷՅ

■ Գ. Թագ. 16-18

■ Առակագ 23. 1-11

Կը նկատէք ձեզի համար»: Ապա, կը շարունակէ պատմել, թէ ի՞նչպէս իր կեանքի ասպարէզ նետուած տարիներու առաջին շրջանին, ան անցած էր մէկ ձախողութեան ուրիշ ձախողութիւն մը, մինչեւ որ ան ձախողութիւնը տեսած էր որպէս ազդեցիկ ուսուցիչ մը եւ դաս մը:

Հին Կտակարանի ժողովուրդին շատ մը երգերը գրուած են անոնց ձախողութեանց շրջանին: Իր կատարեալ յուսահատութեան եւ ձախողութեան մէջ է, որ սաղմոսներգուն կը գրէ իր սա գեղեցիկ աղերսանքը. «Ինչպէս եղջերուն ջուրի վտակներուն կը փափաքի, այնպէս ալ իմ անձս քեզի կը փափաքի, ո՛վ Աստուած: Հոգիս ծարաւի է Աստուծոյ, սպրող Աստուծոյ» (Սաղմոս 42. 1-2):

Երբեմն կարող չենք ըլլար տեսնելու Աստուծոյ իմաստութեան հրաշալիքներուն զօրութիւնը, մինչեւ նեղ կացութեան չմատնուինք ու մենք մեզ անզօր չզգանք: Պէտք է վստահինք Աստուծոյ սիրոյն, իմաստութեան եւ առաջնորդութեան:

---

**Սորվէ՛ ձախողութիւններէն, հակառակ  
պարագային, պիտի ձախողիս սորվելէ:**





Երկուշաբթի  
6 Յունիս

## Կապուած Սիրտեր

Կարդա՛  
Ա. Յովհ. 4. 7-14

Սիրելի՜նք՛ր, եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ, մենք ալ պարտաւոր ենք սիրելու զիրար:  
—Ա. Յովհ. 4. 11

ԱՍՏՈՒԱՍՏՆՈՒՆՆԵՐ ՄԷ՛՛Կ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷ՛՛Ջ  
■ Դ. Թագ. 19-21  
■ Առակաց 23. 12-28

**Ի**ւրաքանչիւր նոր օր, նոր բաներ կը բերէ մեր ընտանեկան կեանքէն ներս եւ մենք կը հաւատանք, որ Յիսուս կը գործէ այդ բոլորին ետին: Երբ կը գրեմ այս տողերը, հաւատացեալներու ընկերակցութիւն մը կը պատկերանայ աչքիս առջեւ:

Սեղանիս վրայ կողով մը լեցուն նամակներ կան մարդոց կողմէ ղրկուած, որոնց երբեք չեմ հանդիպած: Այն օրէն ի վեր, երբ «Զհաց Մեր Հանապազորդ» ի ընթերցողները տեղեակ եղան ինքնաշարժի արկածով մեր աղջկան՝ Մըլիսայի մահանալուն ու երկիրք փոխադրուելուն մասին, մենք հարիւրաւոր մխիթարական պատգամներ ստացանք հաւատքի մեր եղբայրներէն եւ քոյրերէն: Անոնցմէ ոմանք ասոր նման խօսքեր կ'ըսէին. «Կը վշտակցիմ ձեզի հետ եւ պիտի շարունակեմ աղօթել քեզի եւ ընտանիքիդ համար»: Ուրիշ մը կ'ըսէր. «Ես կու լամ ձեր կորուստին համար, կը ցաւիմ ձեզի հետ»: Ուրիշներ կը յանձնարարէին մասնաւոր գիրքեր կարդալ: Աւելի ուրիշներ, ղրկեցին մեզի գրութիւններ մխիթարութեան եւ յոյսի համար: Ուրիշներ փորձեցին իրենց անձնական փորձառութիւնը բաժնեկցիլ որպէս ցատկեղջուր բարեկամներ: Բոլորն ալ կ'արտայայտէին իրենց սէրը որպէս Աստուծոյ ընտանիքի անդամներ, ինչպէս կոչ կ'ընէ Առաքեալը Ա. Յովհ. 4. 11 համարին մէջ:

Այդ թանկագին նամակներուն բոլորն ալ իրարմէ տարբեր բաներ կ'ըսէին, սակայն մէկ հասարակաց գիծ կար անոնց մէջ, որ կը կապէր իրարու – Յիսուսի վրայ ունեցած մեր նոյն հաւատքին բաժնեկցիլը:

Սիրտեր՝ կապուած Յիսուսի՝ կը ստեղծեն սիրոյ շղթայ մը, որ կրնայ քաջալերել նոյնիսկ ամենէն շատ վշտացած սիրտը:

**Մեր սիրտերը կապուած են իրարու Քրիստոսի սիրով:**





Երեքշաբթի  
7 Յունիս

**Միասնաբար  
Ծառայել**

Կարդա՛  
Քաղատացիս 5. 13-16

Սիրով իրարու  
ծառայեցե՛ք:  
– Քաղատացիս 5. 13

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԻՎ  
ՏԱՐՈՒՆ ԵՒՋ  
■ Հոովմ. 5-8  
■ Առակաց 23. 29-35

Կ'ըսեն, թէ իրենց առաջին գործը պիտի ըլլայ ամուսնանալէ ետք ծառայել ուրիշներու: Քանի որ Աստուած Քրիստոսով հիմնովին փոխած էր իրենց կեանքը, անոնք կ'ուզէին փառաբանել զԱստուած գիրենք իրարմով օրհնած ըլլալուն համար:

Այդ գոյգը շատ լաւ ընտրութիւն մը կատարած էր իրենց ամուսնական կեանքը սկսելու – փառաբանել զԱստուած, ծառայելով ուրիշներու: Պօղոս Առաքեալ Գաղատացի հաւատացեալները քաջալերելով կ'ըսէ. «Սիրով իրարու ծառայեցէք» (Գաղ. 5. 13): Անոնցմէ ոմանք կը խորհէին, թէ Հին Կտակարանի ծէսերը պէտք էր գործադրուէին եկեղեցիին մէջ: Ասոր համար Առաքեալը կը գրէ իրենց, որ փրկութիւնը կարելի է Աստուծոյ շնորհքով միայն՝ հաւատքի միջոցով: Հաւատքով է, որ կրնանք ապրիլ մեր նոր կեանքը Քրիստոսի միջոցով: Առաքեալը կը յիշեցնէ, թէ օրէնքը իրագործուած կ'ըլլայ, երբ սիրենք մեր ընկերը մեր անձին պէս (Հ. 14):

Որպէս քրիստոնէաներ, ծառայելու ենք իրեն՝ սիրով – փառաբանելու զԱստուած մեզ օրհնած ըլլալուն համար:

**Ով Աստուած, օրհնէ՛ մեզ, որպէսզի մենք ալ  
օրհնութիւն դառնանք ուրիշներու:**

**Ա**նցնող տարուան գարնան, Ամենակացի գոյգ մը երբ կ'ամուսնանան, բան մը կ'ընեն, որ ոչ մէկուն միտքէն պիտի անցնէր: Փոխանակ հարսնեւորները մեծ ճաշարանի մը մէջ խրախճանքի հրաւիրելու, շատ պարզ հիւրասիրութիւն մը կը կատարեն եկեղեցիի հիւրասրահին մէջ: Ապա կը հրաւիրեն հիւրերը, որ օգնեն իրենց կերակուր բաժնելու շրջանի մէջ գտնուող կարօտեալներուն:

Անոնք նախապէս գնած եւ պատրաստած էին բեռնակառք մը լեցուն կերակուրներ: Եկեղեցիի բակին մէջ հիւրերուն հետ կը սրբին բաժնը կրակուրները եկող կարօտեալներուն, որոնց նախապէս լուր տրուած էր: Անոնք





Չորեքշաբթի  
8 Յունիս

## Օդային Կոիւնք

Կարդա՛  
Առակ. 17. 14-19, 27-28

Հանճարեղ մարդը  
պատուական հոգի  
ունի:  
—Առակաց 17. 27

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆԸ ՄԷՋ  
■ Սաղմոս 66-68

**Օ**դային կատաղի կռիւ մը սկսաւ մեր տան պատուհանին դիմաց: Ճարպիկ եւ արագ թռչողներու խումբ մը օդին մէջ սկսաւ վեր ու վար, աջ ու ձախ թռչտիլ, գիրար հարուածելով եւ փորձելով դիմացինը պարտութեան մատնել ու կռիւէն հեռացնել: Օդը լեցուն էր ձայներով: Ոմանք փախուստ կու տային, ուրիշներ կը շարունակէին գիրար հարուածել:

Պիտի ըսէք, վեց թռչուններու անկարեւոր խաղ մըն էր եղածը: Անոնք իրենց անասական բնագոյով կը կռուէին այն կերակուրին համար, որ տիկինս գետեղած էր յատուկ ամանի մը մէջ: Կը զարմանայինք, թէ ինչո՞ւ չէին կրնար համբերել եւ ապա միասին ուտել: Այս կռիւները անտեղի էին, նման այն բազմաթիւ վէճերուն եւ կռիւներուն, որոնք կը պատուհասեն Քրիստոսի եկեղեցին: Զանոնք կերակրողը ամէն օր առատ կեր եւ ջուր կը դնէ, բաւարար բոլորին եւ միշտ ալ աւելի: Սակայն, ամէն անգամ անոնք խումբով կու գային եւ կը կռուէին կերակուրին համար: Անոնցմէ իւրաքանչիւրը կ'ուզէր ունենալ բոլորը, կամ աւելի մեծ կտորը:

Եկեղեցիի հաւատացեալներուն վէճերն ու կռիւները իրենց Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անարգանք կը բերեն: Այդ վէճերը հոգեկան վէրքեր կը բանան եղբայրներու եւ քոյրերու միջեւ, որոնք եթէ բուժուելու իսկ ըլլան, իրենց սպիները կը ձգեն: «Մարդուն փառքն է կռիւը դադրեցնելը, բայց ամէն յիմար կռուասէր է», կ'ըսէ առակագիրը (Առակ. 20. 3) եւ ապա կ'աւելցնէ: «Գիտունը իր խօսքերը կը չափաւորէ» (17. 27):

Որպէս հաւատացեալներ հոգ տանինք մեր խօսքերուն եւ գործածենք ազնիւ բառեր խաղաղութիւն տարածելու:

**Երկու անձեր չեն կրնար կռուիլ, երբ անոնցմէ մէկը չուզէ:**





Հինգշաբթի  
9 Յունիս

## Ազատագրող Ճշմարտութիւն

Կարդա՛  
Եփես. 1. 3-10

Անով ընդունելի  
դարձուց մեզ՝ սիրելիից  
միջոցով:  
-Եփես. 1. 6

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ԱՄԷՅ  
■ Դ. Թագ. 22-23  
■ Առակաց 24. 1-12

մով, ինք եզակի անձ մըն էր, Քրիստոսով փրկութիւն գտած մէկը՝ գոր կարելի էր փոխարինել կամ պատճէնը հասնել:

Միրելի բարեկամ, դուն ալ արդեօք ինքզինքդ կը մեղադրե՞ս անոր համար, որ այնքան հոգեւոր կեանք էես ապրիր, որքան կրնայիր ապրիլ: Արդեօք դուն քեզ երկրորդ դասակարգի աշակե՞րտ մը կը նկատես, չունենալով այն ձիրքերն ու շնորհքները, որ ուրիշ հաւատացեալ բարեկամներ ունին, որոնք աղօթքի, վկայութեան եւ ծառայութեան սքանչելի օրինակներ կը նկատուին: Մենք կրնանք նման տրամադրութենէ մը ձեռքազատուիլ, եւ վայելել երախտագիտութեամբ մենք մեզ ընդունած եւ հաւանած ըլլալու իրավիճակը, երբ մենք մեզ ամբողջութեամբ կը յանձնենք Յիսուսի գամով ծակուած ձեռքերուն: «Իրմով մենք ունինք ազատագրութիւն՝ իր արիւնին միջոցով, ու մեղքերու ներում» (Եփես. 1. 7):

Եթէ Տէրը ընդունած է մեզ, անշուշտ մենք ալ կրնանք ընդունիլ մենք մեզ: Ահա այս է ազատագրող ճշմարտութիւնը:

**Ընդունիլ Յիսուսի փրկութեան ձրի պարգևը  
կ'ազատագրէ մեզ ընդունելու մե՞ք մեք:**

**Մ**իսիոնարուհի մը, որ ամուսնա-  
ցած չէր, ինքզինք անարժէք անձ  
մը կը նկատէր: Ան ուրախ չէր, որ  
իր կեանքով, մանաւանդ կը զգար,  
թէ իր հոգեւոր կեանքը հետզհետէ աւե-  
լի կը տկարանար՝ փոխանակ աճելու:

Առաւօտ մը, ան երկար ստեն ինք-  
զինք դիտեց հայելիին մէջ, կարծես  
ինքզինք աւելի լաւ ճանչնալու  
համար: Ապա ցած ձայնով ըստ. «Ո՛վ  
Աստուած, շնորհակալ եմ, որ ես՝ ես  
եմ եւ կարելի չէ, ուրիշ մէկը ըլլամ»:

Այդ վայրկեանը իրեն համար  
ինքզինք ազատագրելու եւ եղածին  
պէս ընդունելու փորձառութեան  
պահի մը վերածուած էր: Ան անդրա-  
դարձած էր, թէ Աստուծոյ ծրագրու-





Ուրբաթ  
10 Յունիս

## Սիրել Մեր Մեծ- ցած Զառակները

Կարդա՛  
Ա. Կորնթ. 13

Ուստի ճիմա կը մնաց  
ճաւատք, յոյս, սէր, այս  
երեքը, ու ասոնց  
մեծագոյնը սէրն է:  
—Ա. Կորնթ. 13. 13

ԱՍՏՈՒԱՍՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Դ. Թագ. 24-25

■ Առակաց 24. 13-22

չունչին «Սիրոյ Գլուխ»ը: Պօղոս Առաքեալ կը գրէ, թէ մեր ունեցած մեծագոյն շնորհքները – լեզուներ խօսիլ, գօրաւոր ըմբռնում ունենալ կամ գոհաբերել գիտնալ – ոչինչ կ'արժեն առանց սիրոյ (Կ. 1-3): Մէրը ինքնին հիմն է ամենէն ազդեցիկ եւ հրապուրիչ վարմունքին եւ անոր ազդեցութիւնը վերջ չ'ունենար: «Մէրը համբերատար է, քաղցր է, սէրը չի նախանձիր, սէրը չի գողոզանար, չի հպարտանար, անվայել վարմունք չ'ունենար, իրենը չի փնտռեր, չի գրգռուիր, չարութիւն չի մտածեր, անիրաւութեան համար չ'ուրախանար, հապա ճշմարտութեան ուրախակից կ'ըլլայ: Ամէն բանի կը հանդուրժէ, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը տուկայ: Մէրը բնաւ չ'իյնար (չի ձախողիր)» (Կ. 4-8):

Երբ մեր զառակները այլեւս մտիկ չեն ըներ մեր խրատներուն, անոնք տակաւին արժէք կու տան եւ կը փնտտեն մեր Մէրը: Մեր զառակները դաստիարակելու բոլոր շրջաններուն, մեր ըսածէն աւելի մեր ըրածն է կարեւորը:

**Ծնողքի մը սէրը երբեք վերջ չ'ունենար:**

**Կ**ատակերգակ մը կ'ըսէր. «Ես ունիմ երկու սքանչելի գաւակներ – եւ հինգէն երկուքը քէշ չէ»:

Երբ զառակներ կը հասնին իրենց հասուն տարիքին, շատ մը ծնողներ յաճախ նիւթ կ'ընեն, թէ ի'նչպէս իրենց զառակները հոն հասան: Ոմանք հպարտ կը զգան իրենց զառակներով եւ անոնց իրագործումներով, իսկ ուրիշներ, իրենք գիրենք յուսախաբ կը զգան իրենց զառակներուն ըրած սխալ ընտրութիւններուն համար: Ի'նչպէս կրնանք ծնողական լաւ հոգածութիւն ցոյց տալ մեր զառակներուն, իրենց բոյնը ձգելէ ետք:

**Ա.** Կորնթացիս 13-րդ գլուխը յաճախ կոչուած է Աստուածա-





Շարաթ  
11 Յունիս

## Գարման Մը Ունայնութեան

Կարդա՛  
Միքիա 6. 6-8

Տէրը ինչ կը պահանջէ քեզմէ - միայն գործադրել իրաւունքը, սիրել կարեկցութիւնը, ու խոհեմութեամբ ընթացնալ Աստուծոյ դիմաց:

—Միքիա 6. 8

ԱՍՏՈՒԱՍՏԱՆՈՒՆԵՐ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆԸ ՄԷՋ

■ Ա. Մնաց. 1-3

■ Առակաց 24. 23-34

**Թ**ղթակիցի մը հարցազրոյցին՝ Համաշխարհային Բ. Պատերազմէն վերապրող գինեւորներու հետ, անոնք յիշեցին յատկանշական օր մը իրենց կեանքէն: Մէկը ըսաւ, թէ խրամի մը մէջ պահուած էր երբ Գերմանական հրասայլ մը անցաւ քովէն եւ կրակեց անոնց վրայ: Ուրիշներ ըսին, թէ թղթախաղ կը խաղային ժամանակ անցըներու համար: Քիչեր միայն կատաղի ճակատամարտերու մասնակցած էին: Ընդհանրապէս սովորական օրեր ունեցած էին:

Աւելի ուշ, անոնք խնայան, թէ մասնակցած էին մեծ եւ վճռակամ պատերազմի մը: Անոնք չէին գգացած այն ատեն պատերազմին ա՛յդ քան վճռակամ ըլլալը, քանի որ անոր տարողութեան պատկերը չունէին:

Մեծ յաղթանակներ կը շահուին, երբ սովորական մարդիկ գործադրութեան կը դնեն իրենց համար նշանակուած գործը: Երբ Ինգնատիոսի հետեւորդները (1491-1556) կրցան տոկալ պարապ ժամանակաշրջաններ, ան միշտ կը պատուիրէր անոնց՝ ըսելով. «Յուսայքումի ժամանակներուն պէտք չէ որեւէ փոփոխութիւն կատարել, այլ պէտք է հաստատ կենալ եւ յարատեւել այն որոշումներուն մէջ վճռակամութեամբ, ճիշդ այնպէս՝ ինչպէս էին յուսայքումէն առաջ»: Հողեւոր պաշարներն ալ պէտք է տանիլ վճռակամութեամբ եւ գործածելով այն անմիջական գէնքերը որ մեր տրամադրութեան տակ ունինք - աղօթք, խորհրդածութիւն, անձնաքննութիւն եւ ապաշխարութիւն:

Թերեւս հոգեւոր սովորական եւ անիմաստ ընթացքի մը մէջ կը գգաս դուռն քեզ: Մնացի՛ր քեզի համար ճշդուած գործին վրայ: Միայն Աստուծոյ հնազանդութիւնն է, որ կրնայ մեզ ունայնութենէ դուրս բերել:

Եթէ կը գգաս, որ հաւատեղ վերակենսաւորութեան պէտք ունի, վերադարձի՛ր հոն՝ ուր լէցիք հնազանդութեանդ կապը:







Կիրակի  
12 Յունիս

## Տարրական է

Կարդա՛ր՝  
Սաղմոս 139. 1-6

Աստուծոյ յայտնի եմ  
իր բոլոր գործերը,  
աշխարհի սկիզբէն  
ի վեր:  
—Գործք 15. 18

ԱՍՏՈՒԾՆԵՐՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԷՋ

■ Ա. Մնաց. 4-6  
■ Առակաց 25. 1-14

**Վ**երջերս Լոնտոն տուած այցե-  
լուծեանս ընթացքին, Պէյքըր  
փողոցի գետնուղիին մէկ կայանին  
մէջ Հանդիպեցայ առասպելական  
դարձած գաղտնի ոստիկան՝ Շէրլոք  
Հոլմսի շքեղ արձանին: Ստեղծուած  
վիպասան Արթըր Քոնան Տոյլի  
կողմէ, այդ գաղտնի ոստիկանը իր  
գօրաւոր եւ սուր մտքի հոտառու-  
թեամբ, միշտ կարող էր մանր հետ-  
քերով եւ կասկածներով կծիկը քակել  
մութին մէջ գործուած ոճիւրներու:

Մեր այս ընթացիկ կեանքին մէջ  
չատ են յաճախ շփոթեցնող եւ  
խորհրդաւոր հարցեր ու երեւոյթներ,  
գորս կը ստիպուինք դիմադրուել:  
Յաճախ անոնք շատ աւելի բարդ են  
քան այն հարցերը, որոնք սրամիտ Շէրլոք Հոլմս կը դիմա-  
գրաւէր: Երբեմն կը փորձենք ամէն գնով յատակացնել մեր  
կեանքի խորհրդաւոր հարցերը, բայց չենք յաջողիր: Մեր  
կարողութիւնը շատ սահմանափակ կը թուի ըլլալ: Նման  
պարագաներու տակ, մեծ միսթարութիւն է գիտնալ, թէ  
ունինք Աստուած մը, որ երբեք պէտք չունի հարցերուն  
քննարկումին: Ան ի սկզբանէ արդէն կատարելապէս գիտէ  
ամէն բան: Գործ. 15. 18 համարին մէջ կը կարդանք.  
«Աստուծոյ յայտնի են իր բոլոր գործերը, աշխարհի սկիզբէն  
ի վեր»: Ան երբեք զարմանալու կամ ուրիշ տրամաբանական  
միջոցներու դիմելու պէտք չունի գաղտնիքներ եւ  
ճշմարտութիւններ դուրս բերելու համար:

Հակառակ մեր սահմանափակութեան, մեր կեանքը կը  
կենայ անոր ձեռքերուն մէջ, որ գիտէ մեր ամէն «ինչ»երը,  
«ինչու»ները եւ «երբ»երը: Ան կ'առաջնորդէ մեզ այն  
ճամբուն մէջ, որ ինք կ'ուզէ տանիլ մեզ: Եւ իր ճամբան  
միշտ շիտակ եւ ճշմարտութեան տանող ճամբան է:

**Խորհրդաւոր աշխարհի մը մէջ մխիթարական է  
գիտնալ զԱստուած, որ գիտէ ամէն ինչ:**





Երկուշաբթի  
13 Յունիս

## Այսպիսի ժամանակի Համար

Կարդա՛  
Եսթեր 4. 10-17

Եւ այդպէս թագաորին քով պիտի մտնեմ, ինչ որ օրէնքին համաձայն չէ, եւ եթէ մեռնիմ՝ թող մեռնիմ՝  
—Եսթեր 4. 16

ԱՍՏՈՒԱՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ԱՄԷՆ

■ Ա. Մ'առց. 7-9  
■ Առականց 25. 15-28

**Ե**րբ Շառի էկկըմ, 32 տարեկանին փառաճանաչուեցաւ արեան քաղցկեղի հիւանդութեամբ, բժիշկները ըսին, թէ միայն ոսկորի ողնածուծի փոխատնկում մը, մօտ եղող արեանակիցի մը կողմէ տրուած, կրնար փրկել անոր կեանքը: Էկկըմ որդեգրուած էր եւ չէր ճանչնար իր իսկական ծնողները: Անձնական հետազօտութիւն մը երեւան հանեց իր մէկ հարազատ եղբայրը՝ Մայք Ֆօրտը, որուն արիւնը լաւապէս յարմարեցաւ իրեն: Այսօր այդ տիկնոջ քաղցկեղը կը գտնուի իր նուազագոյն վիճակին մէջ: Մայք շխտակ անձը եղած էր շխտակ ժամանակին յայտնուած:

Եսթերի գիրքը ուրիշ սիրոյ եւ գոհաբերութեան պատմութեան մը մասին կը խօսի, Աստուծոյ ժամանակին յարմարող: Մուրթքէ՝ Հրեայ աքսորեալ մը, կը մերժէ խոնարհիլ Համանի առջեւ, որ բարձրագոյն պաշտօնի վրայ մարդ մըն էր, երկրորդը՝ թագաւորէն ետք: Համան բարկացած, դաւադրութիւն մը կը հնարէ Մուրթքէն եւ բոլոր Հրեայ աքսորեալները փճացնելու: Ան կը խաբէ թագաւորը եւ կը համոզէ զայն, որ հրամանագիր մը ստորագրէ՝ բոլոր Հրեաները մահուան դատապարտող: Երբ Մուրթքէ կ'իմանայ այդ հրամանագրին մասին, կ'երթայ եւ կը պատմէ իր ազգականը եղող Եսթեր թագուհիին եւ կը խնդրէ անկէ, որ բարեխօսէ թագաւորին: Մուրթքէ կ'ըսէ Եսթերի. «Ո՞վ գիտէ, թերեւս դուն այսպիսի ատենուան մը համար թագուհի եղար» (հ. 14): Առանց հրաւերի թագաւորին մօտեցողը մահով կը պատժուէր: Սակայն Եսթեր ժամանակը տեղին կը նկատէ փրկելու իր ժողովուրդը:

Երբ կարող ենք ուրիշները փրկել, պէտք է ընենք զայն ամէն գնով, խնդրելով Աստուծոյ առաջնորդութիւնը:

**Քաջութիւն չի նշանակեր վախի քացակայութիւն, այլ տիրանալ անոր:**





Երեքշաբթի  
14 Յունիս

## Անոնց Համար Որ Կը Ծառայեն

Կարդա՛ր  
Հոովմ. 13. 1-7

Լաւ վերակացու եղող երեցները, մանաւանդ անոնք՝ որոնց աշխատանքն է խօսքը քարոզել եւ սորվեցնել, թող արժանանան կրկնապատիկ պատիւի: —Ա. Տիմոթ. 5. 17

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ

- Հոովմ. 9-12
- Առակաց 26. 1-16

**Ե**րբ զաւակս՝ Ստեփան տեղ մը երթայ, յաճախ անմիջական յարգանքի կ'արժանանայ: Մարդիկ ձեռքը կը թօթուեն, կը ժպտին իրեն, կը շնորհաւորեն զինք եւ շնորհակալութիւն կը յայտնեն: Ասիկա կը պատահի եկեղեցիին մէջ: Կը պատահի ճաշարաններու մէջ: Կը պատահի ամէն տեղ որ կ'երթայ... այնքան ատեն որ կը Հաղուի Ամերիկեան ծովային զինուորի Համազգեստը:

Ան յարգանքին կ'արժանանայ, անոր Համար որ ամէն մարդ գիտէ, թէ ինք կը ծառայէ: Ան գոհած է անձնական շատ մը ազատութիւններ եւ փափաքներ, որպէսզի կարենայ ծառայել իր երկրին:

Մարդիկ կը յարգեն եւ կը գնահատեն ծառայողն ու ծառայութիւնը: Մենք կը պատուենք ոստիկանները, որոնք ծառայութեան մէջ են: Մենք բարձր պատիւ կ'ընծայենք զինուորներու, որոնք Հայրենիքի Համար ծառայութեան մէջ են: Սակայն, արդեօք միեւնոյն յարգանքը ցոյց կու տա՞նք անոնց, որոնք նոյնիսկ աւելի բարձր մակարդակով ծառայութեան մէջ են – Աստուծոյ ծառայելով: Արդեօք մենք պէտք եղած յարգանքը կը ցուցաբերե՞նք մեր Հոգեւոր Հովիւներուն, միսիոնարներուն, կիրակնօրեայ ուսուցիչներուն: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ պէտք է պատուենք բոլոր անոնք, որոնք արժանի են (Հոովմ. 13. 7): Մասնաւորապէս այնտեղ կ'ըսուի կրկնապատիկ մեր յարգանքը անոնց Հանդէպ, որոնք եկեղեցիի գործերը կը վարեն, ուսուցանելով եւ քարոզելով (Ա. Տիմ 5. 17):

Փոխանակ քննադատելու մեր Հոգեւոր առաջնորդները, լաւ է որ մարդիկ լսեն մեր երախտագիտական խօսքերը անոնց ծառայութեան Համար:

**Մե՞նք նաեւ զԱստուած կը պատուե՞նք երբ կը պատուե՞նք մեր առաջնորդները:**





Չորեքշաբթի  
15 Յունիս

## Ազատագրում

Կարդա՛ր  
Հոովմ. 6. 15-23

Ուստի դուք ազատ  
ըլլալով մեղքէ՞մ՝  
ստրուկ եղաք  
արդարութեան:  
—Հոովմ. 6. 18

ԱՍՏՈՒԱՍՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆԸ ՄԷՋ  
■ Սաղմոս 69-71

**Ն**ախագահ Լինքոլնի Ազատագրու-  
թեան Յայտարարութեան ստու-  
րագրութեանէն երկու տարի ետք (19  
Յունիս 1865), Թէքսասի մէջ կը  
կարդացուի պատմական հրամանագիր  
թիւ 3-ը. «Թէքսասի ժողովուրդին կը  
տեղեկացուի, թէ ըստ Միացեալ  
Նահանգներու Գործադիր Իշխանու-  
թեան կատարած Յայտարարութեան,  
բոլոր գերիները ազատագրուած են»:  
Առաջին անգամ ըլլալով, Թէքսասի  
գերիները կը տեղեկանան, թէ իրենք  
ա՛յլ ազատ էին: Ոմանք անակնկալի  
կու գան, ուրիշներ կը սկսին ուրա-  
խանալ եւ տօնախմբութիւն կատարել:  
Շուտով 19 Յունիսը կը ճանչցուի  
որպէս ազատագրութեան տօն:

Յիսուսի խաչին «Ազատագրութեան Յայտարարութեանէն»  
մօտ 25 տարիներ ետք, Պօղոս Առաքեալ գրեց Հռովմի  
հաւատացեալներուն: Անոնցմէ ոմանք, տակաւին չկրցան  
հասկնալ, թէ ի՞նչ կը նշանակէր ազատ ըլլալ մեղքի կա-  
պանքներէն: Անոնք կը խորհէին, թէ կրնային շարունակել  
մեղք գործել, քանի որ շնորհքի տակ էին (Հռովմ. 6. 15):  
Ուրեմն Առաքեալը կը յիշեցնէ անոնց կացութիւնը Յիսու-  
սով, զիմելով հետեւեալ իրողութեան. «Ի՞նչ բանի որ կ'են-  
թարկենք մենք մեզ, ան կը դառնայ մեր տէրը» (Յովհ. 8:  
34): Մեղք գործելը մեզ կը դնէ մեղքի իշխանութեան տակ:

Միւս ընտրութիւնը՝ արդարութեան գերին ըլլալն է: Իրա-  
կանութեան մէջ, փրկութիւնը կը նշանակէ տէրզ փոխել,  
ուրիշ գերութիւն մը որդեգրել: Երբ ատեն մը մեղքին կը  
ծառայէինք, հիմա մենք մեզ նուիրած ենք արդարութեան  
եւ այն ազատութեան, որ Յիսուս բերաւ:

Գործադրութեան դնենք Գրիստոսով ազատագրուած  
կացութիւնը, որ բոլորիս համար է - Ազատ ըլլալ:

**Ճշմարիտ ազատութիւնը Գրիստոսի տիրութեան  
տակ մնալուն մէջ է:**





Հինգշաբթի  
16 Յունիս

**Մեզ վեր հոնող  
Թելը**

Կարդա՛  
Յակոբ 4. 1-10

Խոնարհեցէ՛ք Տէրոջը  
առջեւ եւ Ան պիտի  
բարձրացնէ ձեզ:  
—Յակոբ 4. 10

ԱՍՏՈՒԱՍՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Ա. Մնաց. 10-12  
■ Առակաց 26. 17-28

երեւցած ամպերը եւ անոնցմէ վեր բարձրանալ, բայց  
աւա՛ղ, խեղճ բանտարկեալի մը պէս կապուած եմ... վրաս  
եղող թելը զիս կը կապէ գետին մնալու...»:

Թուուցիկը ի վերջոյ օր մը կը քաշէ թելը եւ կտրելով  
զայն, ազատ կը զգայ: Սակայն, փոխանակ դէպի վեր  
սաւառնելու, ամպերուն վրայ կը խորտակուի եւ կ'իյնայ  
ծովու ջուրերուն մէջ:

Այս փոխաբերական պատկերը կը յիշեցնէ ինծի նկատի  
առնել կարգ մը «թելեր», որոնք պատճառ կը դառնան որ  
ես երբեմն ինքզինքս կաշկանդուած զգամ: Ուխտեր, խոս-  
տումներ, յանձնառութիւններ եւ պատասխանատուութիւններ  
ինծի զգալ կու տան կապուածութիւն մը, սակայն  
Աստուած կը գործածէ զանոնք զիս վեր բռնելու համար:  
Ինչ-պէս Յակոբոս Առաքեալ կ'ըսուցանէ. «Խոնարհեցէ՛ք  
Տէրոջ առջեւ, եւ Ան պիտի բարձրացնէ ձեզ» (Յակ. 4. 10):

Մեզ կապող որեւէ թել կտրելէ առաջ, պէտք է վստահ  
ըլլանք, որ այդ թելը մեզ վեր բռնող թելը չէ:

**Հաւատացեալ մը աւելի վեր կը բարձրանայ  
հակառակ փչող հովերուն:**

**Ռ**էյ Պեթէլ Թուուցիկ Թուցնելու  
աշխարհի ակոյեանն է: Ան  
բազմաթիւ Թուուցիկներ կը շինէ  
եւ զանոնք իրարու միացուցած՝ կը  
Թուցնէ, կարծես մէկ առանձին  
Թուուցիկ մը ըլլային: Դիտելէ ետք  
անոր Թուուցիկներու տեսաերիզ-  
ներէն մէկը, ուր երեք Թուուցիկներ  
իրար միացած կը Թուչէին, յիշեցի  
Ճան Նիութընի բանաստեղծութիւն-  
երէն մէկը՝ «Թուուցիկը կամ  
Հպարտութիւնը Պիտի Ունենայ  
Անկում մը» խորագրով: Բանաս-  
տեղծութեան մէջ Թուուցիկը կ'ե-  
րագէր կտրուիլ զինք կապող թելէն  
եւ ազատ ըլլալ: «Ազատ կ'ուզեմ  
ըլլալ, ճախրել ազատ եւ ճեղքել





Ուրբաթ  
17 Յունիս

**Ծպտուած  
Աւագակը**

Կարդա՛ր  
Բ. Կոր. 1. 3-4, 12-15

Նոյնիմքն՝ Սատանան,  
իմքզիմք լուսաւոր  
հրեշտակի կը  
կերպարանափոխէ:  
—Բ. Կոր. 11. 14

ԱՍՏՈՒԱՍՏՆՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԷՅ  
■ Ա. Մնաց. 13-15  
■ Առակաց 27. 1-14



էր տեսնելով շատ մը վէրքերէ մնացած սպիներն ու ձեւագեղծուած սրունքը: Խուզարկութիւն մը՝ կատարուած իր տան մէջ, երեւան հանած էր պահուած ահագին ժամացոյցեր, ոսկեղէն եւ աղամանղեր: Ի յայտ եկած էր, որ այդ բժիշկը իսկութեան մէջ Թանորը պոլտ կոչուած աւագակն էր, ծպտուած վիճակի մէջ: Բողորն ալ խաբուած էին:

Սատանան եւ իր հետեւորդներն ալ ծպտուած են: Բ. Կոր. 11. 15-ը կ'ըսէ, թէ Սատանային ծառայողներ երբեմն իրենք զիրենք կը փոխակերպեն եւ կը ներկայացնեն որպէս արդարութեան ծառայողներ, սխալ վարդապետութիւններ ուսուցանելով: Պօղոս Առաքեալի ժամանակէն մինչեւ այսօր կան կեղծ ուսուցիչներ, որոնք կ'ուսուցանեն թէ բարի գործերով կրնանք փրկութիւն շահիլ: Առաքեալը կը զգուշացնէ մեզ չխաբուիլ Սատանային խորամանկութենէն (Հ. 3): Ըջմարտութիւնը այն է, թէ մենք «չնորհքով փրկուած ենք հաւատքի միջոցով... ասիկա ոչ թէ մեզմէ է, հապա Աստուծոյ ընծան է, ո՛չ թէ գործերէ» (Եփես. 2. 8-9): Չխաբուի՛նք:

**Սատանան շատ մը գործիքներ ունի, սակայն խաբելը այդ գործիքներուն ձեռքն է:**





Շաբաթ  
18 Յունիս

## Բարեկամութեան Հրաւեր Մը

Կարդա՛  
Յովհ. 15. 9-17

Այլեւս ծառայ չեմ  
կոչեր ձեզ, որովհետեւ  
ծառան չի գիտեր, թէ  
իր տէրը ինչ կ'ընէ:  
Հապա ես բարեկամ  
կոչեցի ձեզ:  
—Յովհ. 15. 15

ԱՍՏՈՒԱՍՏԱՆՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԼԵՅ

■ Ա. Մնաց. 16-18

■ Առակաց 27. 15-27

**Բաւական անձնակա-նութիւն...**: Կարելի է երեւակայել, թէ ի՞նչ մեծ եւ անակնկալ լուր էր աշակերտներուն համար, երբ Յիսուս ըսաւ իրենց. «Այլեւս ծառայ չեմ կոչեր ձեզ... Հապա ես բարեկամ կոչեցի ձեզ» (Յովհ. 15. 15):

Աւելի լաւը այն է, որ, Ան աշօր այդ մէկը մեզի կ'ըսէ: Ի՞նչ տեսակի բարեկամութիւն է ասիկա: Այդ բարեկամութիւնը կը սկսի զոհաբերութեամբ: Ինչպէս ինք ըսաւ. «Դուք իմ բարեկամներս էք, եթէ ընէք ի՛նչ որ ես կը պատուիրեմ ձեզի» (Հ. 14): Յետոյ հաղորդակցութեան զօրութեան մասին խօսեցաւ: Ան խոստացաւ ընել մեզի այն ամէն բաները որոնք Հայրը ըսած էր իրեն (Հ. 15):

Արդեօք կը հնազանդի՞նք իրեն: Եթէ այո՛, որպէս իր բարեկամները պտուղ կը բերենք (Հ. 16): «Տէրոջ փառքը տեսնելով, որպէս թէ հայելիի մէջ, կը փոխուինք նոյն պատկերին՝ իր փառքը յայտնելով մեր կեցուածքով եւ գործերով» (Բ. Կոր. 3. 18): Յիսուս կ'ողջունէ քեզ իր բարեկամութեան առանձնաշնորհումին մաս կազմելու: Իր բարեկամն ես:

**Բարի եկար Աստուծոյ բարեկամութեան  
առանձնաշնորհումին:**

**Մ**եծցած եմ տան մը մէջ, ուր կային մեծ թիւով որմնանկարներ: Մէկուն վրայ գրուած էր չակերտուած խօսք մը. «Բարեկամներ ձմերուկի նման են, ըսեմ թէ ինչու: Լաւ մէկը գտնելու համար պէտք է հարիւր հատ փորձել»:

Շատեր համաձայն են այդ ըսուածին: Դժուար է լաւ բարեկամ գտնել:

Արդեօք Աստուած՞ ալ այդպէս կը վարուի մեզի հանդէպ: Հին Կտակարանի ամբողջ ժողովուրդին մէջէն միայն մէկ հոգի կոչուած էր իր Բարեկամը: Եսայի 41. 8-ի մէջ Աստուած կ'ըսէ, թէ ինք ընտրած էր Յակոբը, «Աբրահամի, իմ բարեկամին» սերունդէն է:





Կիրակի  
19 Յունիս

## Կատարեալ Հայր Մը

Կարդա՛  
Առակ. 20. 3-7

Իր պարկեշտութեան  
մէջ ընթացողը արդար  
է, իրմէ ետք իր  
որդիները երանելի  
պիտի ըլլան:  
—Առակ. 20. 7

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆԸ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՅ

■ Ա. Մնաց. 19-21

■ Առակաց 28. 1-14



Հայրս էր: Շատ մը փոքր հարցերու եւ աւելիներու պարագային, ան միշտ քրոջս եւ ինծի զգացնել կու տար, որ մենք իրեն համար շատ կարեւոր անձեր էինք եւ միշտ կը սիրէր մեզ: Եւ տեսնելով իր գուրգուրանքով հոգ տանիլը մօրս, անոր կեանքի վերջին տարիներուն, ինծի սորվեցուց, թէ ի՛նչ կը նշանակէ անձնուէր սէր ունենալ: Հայրս կատարեալ մարդ մը չէր թէեւ, սակայն ան ինծի սուած էր լաւագոյն նմանութիւնը իմ Երկնաւոր Հօրս եւ իսկութեան մէջ այդ է, որ հաւատացեալ Հայր մը պէտք է ըլլայ:

Յաճախ երկրային Հայրեր կը ցաւցնեն եւ յուսախաբ կ'ընեն իրենց զաւակները: Սակայն մեր Երկնաւոր Հայրը «Գթած ու ողորմած է... Համբերատար եւ մեծապէս կարեկցող» (Սաղմ. 103: 8): Եթէ Հայր մը, որ կը սիրէ իր Երկնաւոր Հայրը, կը շտկէ, կը մխիթարէ, կը հոգայ եւ կը դատտարակէ իր զաւակները: Միշտ հոգալով անոնց կարիքները ան ներկայացուցած կ'ըլլայ ճշմարիտ եւ կատարեալ Հայրը, որ երկինքն է:

**Քրիստոսի համար ապրուած կեանք մը մեր զաւակներուն լաւագոյն ժառանգն է կտակելու:**

**Հ**այրս օր մը ըսաւ. «Երբ դուն կը մեծնայիր, ես շատ կը բացակայէի տունէն»:

Չեմ յիշեր այդ մէկը: Իր գործի կողքին, ան կարգ մը երեկոններ կ'երթար եկեղեցիի երգչախումբի փորձերուն՝ որպէս խմբավար, եւ երբեմն ալ կը ճամբորդէր քանի մը շաբթուան համար համերգներ տալու: Սակայն, կեանքիս բոլոր կարեւոր ժամերուն եւ աւելիներուն, ինք հոն էր:

Օրինակ, երբ ութ տարեկան էի, դպրոցին մէջ կէսօրէ ետք խաղ մը ունէինք, որուն մէջ շատ պզտիկ բաժին մըն ալ ես ունէի: Ընկերներուս բոլոր մայրերը հոն էին: Միայն մէկ Հայր կար, եւ այդ ալ իմ





Երկուշաբթի  
20 Յունիս

## Ոգիի Աւան

Կարդա՛  
Նէմիա 1. 4-11

Քու Աստուածդ քեզմէ  
ի՞նչ կը պահանջէ...  
Քու Տէր Աստուածդ  
պաշտել ամբողջ  
սրտովդ եւ ամբողջ  
անձովդ:  
—Բ. Օրինաց 10. 12

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆԸ ՄԷՅ

■ Ա. Մնաց. 22-24

■ Առակաց 28. 15-28

**Պ**րագիլի Պօա Վիստա քաղաքին մէջ 1970ական թուականներուն յայտնուեցաւ աշխարհի ամենէն Հարուստ ոսկիի Հանքերէն մէկը: Սակայն, շուտով ամէն բան փոխուեցաւ, երբ Հանքերը գոցուեցան: Պետական պաշտօնեաներ ըսին, թէ Հանքագործեր սկսան քանդել անտառը սնդիկ թափելով շրջանի գետերուն մէջ եւ Հիւանդութիւններ յառաջացնելով եւ շրջանին մէջ տեղացի մեծ թիւով մարդոց մահուան պատճառ դառնալով: Այսօր, Պօա Վիստա քաղաքը լքուած քաղաք մըն է, յուսախաբ, արկածախնդիր աղքատ մարդոցմով, վերադարձած՝ իր նախկին վիճակին:

Այսպէս էր Հին Կտակարանի Ժողովուրդին վիճակը՝ երբ Բաբելոնի աքսորութեան մէջ կը գտնուէին: Անոնք կարօտով կը յիշէին այն լաւ օրերը, երբ Աստուած իրենց Հետ էր եւ կը Հաճէր իրենց գործերուն: Հիմա Երուսաղէմ աւերակներու վերածուած էր, որովհետեւ օրհնուած Ժողովուրդ մը մոռցած էր Աստուծոյ բարիքները եւ սկսած՝ տկարները շահագործել, հոգ չտանիլ այն երկրին, որ վատահոլուած էր իրենց (Բ. Օր. 36. 19-21) եւ մոռցած՝ ճշմարտասպէս գ Աստուած պաշտել: Նէմիա մարգարէն կ'ըսէ՝ «Քու դէմը չարիք գործեցինք, ու քու ծառայիդ՝ Մովսէսի տուած պատուիրանները... չպահեցինք» (Նէմի. 1. 7):

Աստուած ա՛յնքան կը սիրէր իր Ժողովուրդը, որ թոյլ տուաւ անոնց՝ շարունակել վնաս Հասցնել իրենք իրենց եւ ուրիշներու: Թոյլ տալով, որ անոնք Բաբելոն գերութեան տարուին, օգնեց անոնց անդրադառնալու, թէ ինչէ՛ր կ'ընան պատահիլ օրհնուած Ժողովուրդի մը, երբ կ'սպլին կեանք մը, ուրկէ Աստուած դուրս դրուած է: Աստուած կ'ընէ այն՝ ինչ որ կ'օգնէ մեզի՝ տեսնելու մեր սխալը ու դարձի գալու:

**Աստուած օրհնութիւն կու տայ մեզի, որպէսզի մենք ալ կարենանք փառք տալ իրեն:**



Երեքշաբթի  
21 Յունիս

## Թռչունի Երգ

Կարդա՛ր  
Սաղմոս 104. 24-35

Յճճացէ՛ք Տէրոջ  
անջեւ... ուրախութեան  
ձայն արտաբերեցէ՛ք:  
—Սաղմոս 98. 4

ԱՍՏՈՒԱՍԾՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Հոովմ. 13-16  
■ Առակաց 29. 1-7

**Ի**նչո՞ւ թռչունները կ'երգեն: Թռչունները կ'երգեն «որովհետեւ անոնք կրնան եւ որովհետեւ անոնք պէտք է երգեն», կ'ըսէ Համալսարանի մը դասախօսը: «Երգով անոնք ընկեր կը հրապուրեն եւ իրենց շրջանը կը պաշտպանեն: Սակայն, անկէ աւելի դեր մը ունի թռչուններուն երգելը: Բնութիւնը լեցուն է գեղեցկութեամբ եւ երաժշտութեամբ»: Թռչունները կ'երգեն, որովհետեւ ունին մասնաւոր ձայնի խռչակ մը: Ձայնի այդ խռչակը պզտիկ տուփ մըն է թռչունին կուրծքին տակ: Այս է բնական եւ գիտական բացատրութիւնը անոնց շնորհքին:

Սակայն կրկին անգամ պէտք է հարցնել. **Ինչո՞ւ թռչունները կ'երգեն:** Իմ կարծիքով, թռչունները կ'երգեն, որովհետեւ անոնց Արարիչը երգ մը դրած է անոնց սիրտերուն մէջ: Իւրաքանչիւր թռչուն «Երկինքի բարձր եւ սուրբ մուսան է», ըսած է ուրիշ անձ մը: Անոնք ատեղծուած են մեր սիրտերը ուղղելու դէպի մեր Արարիչը: Անոնք յուշարարներ են, որ Աստուած մեզի երգ մը տուած է, որպէսզի կարենանք իր փառքը երգել:

Ուրեմն, ամէն անգամ, երբ լսենք թռչունի մը երգելը, մտաբերենք, թէ ան կ'երգէ իր Արարիչին երգը՝ իր սիրտին մէջ դրուած, որպէսզի մենք ալ, մեր կարգին երգենք մեր փրկութեան երգը: Պէտք է յաճախ բարձրացնենք մեր ձայնը – ներդաշնակ կամ անհաճոյ – եւ միանանք անոնց հետ՝ փառաբանելու մեր Արարիչը, Փրկիչը եւ Տէրը:

Օղին մէջ եղող թռչուններ կ'երգեն «ոտերուն մէջէն» կ'ըսէ Հին Կտակարանի բանաստեղծը: «(Ուստի) ես պիտի երգեմ Տէրոջ, ա՛յնքան ատեն, որ կ'ապրիմ: Սաղմոս պիտի ըսեմ Աստուծոյս, քանի որջ եմ» (Սաղմ. 104. 12, 33):

**Ամբողջ ստեղծագործութիւնը կ'երգէ Աստուծոյ փառքը:**





Չորեքշաբթի  
22 Յունիս

## Տրտնջալ Չկայ

Կարդա՛  
Փիլիպ. 2. 12-18

Ըրե՛ք ամէն ինչ՝  
առանց տրտնջելու եւ  
վիճաբանութիւններու:  
—Փիլիպ. 2. 14

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷԿ  
ՏԱՌՈՒՆ ԱԷՅ  
■ Սաղմոս 72-74

**Ե**րբ առաջին անգամ Սուրբ Գրոց Գողէճ սկսայ յաճախել, քանի մը օրեր անցուցինք դպրոցին օրէնքներուն եւ կարգ ու կանոնին վարժուելու: Ժողովի մը ընթացքին, երբ աչքէ կ'անցընէինք օրէնքները, մէկը ոտքի ելաւ եւ հարցուց. «Ի՞նչ ըսել է սեղմել չկայ, եւ ինչո՞ւ օրէնքի դէմ է այդ»: Ան կ'ակնարկէր բառի մը, որ Անգլերէն լեզուի մէջ, ուղղագրական մէկ գիրի տարբերութեամբ գանգատիլ բառին տեղը սեղմել կը կարդացուէր:

Գանգատելու դէմ օրէնք մը հասկնալի է: Քաղցկեղէ տառապող մարդ մը, տեսապէս գանգատով եւ տրտնջելով, ինքզինք կը տկարացնէ

թէ՛ հոգեպէս եւ թէ՛ զգացականօրէն, կրնայ նաեւ ազդել բոլոր խումբին վրայ: Եւ այդ մէկը կրնայ տանիլ դժգոհութեան, յուսախաբութեան եւ նոյնիսկ ըմբոստութեան:

Մովսէս լսեց իր ժողովուրդին տրտնջելը գանտնք գերութեանն ազատութիւն առաջնորդելէ միայն երեք օրեր ետք (Ելից 15. 24): Դարեր ետք, Սամուէլ դարձեալ զգաց ժողովուրդին գանգատներուն ծանրութիւնը, երբ ան փորձեց զԱստուած ներկայացնել իր սերունդին (Ա. Թագ. 8. 4-9):

Տրտնջեցող հոգի մը կրնայ քանդել նաեւ եկեղեցիի մը ազդեցիկ ըլլալը: Առաքեալը ասոր համար գրած է Փիլիպպեցիներու եկեղեցիին ըսելով. «Ըրէ՛ք ամէն ինչ՝ առանց տրտնջելու եւ վիճաբանութեան» (Փիլիպ. 2. 14):

Պետք է հեռու մնալ տրտնջող հոգի մը ունենալէ, մանաւանդ երբ կը ծառայենք Քրիստոսի: Փոխարէն, պէտք է ուրախ ըլլալ եւ փառք տալ Աստուծոյ Անոր բոլոր ըրածներուն համար: Տրտնջել արտօնուած չէ:

**Երբ տրտնջելու պէս կը զգաս, սկսէ՛ համրել օրհնութիւններդ:**





Հինգշաբթի  
23 Յունիս

## ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ Պատանհները

Կարդա՛  
Սաղմոս 128

Քու որդիներդ ձիթեցիի  
տունկերու պէս պիտի  
ըլլան սեղանիդ շուրջ:  
—Սաղմոս 128. 3

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆԸ ՄԷՋ

■ Ա. Մնաց. 25-27

■ Առակաց 29. 8-20

Այդ տարիները լեցուն էին մարտահրաւէրներով, պահանջներով եւ երբեմն այ պրկուած զօրութեամբ: Մեր մտային ամբողջ եւ զգացական ներուժը սպառած կը զգայինք: Այդ ընթացքին, մենք նաւարկեցինք մրրկալի ծովերու վրայ, անակնալ մահով մը կորսնցնելով մեր չորս պատանհներէն մէկը: Վայելեցինք նաեւ անոնց յաջողութեան ուրախութիւնը եւ պայքարեցանք տաժանքով՝ անոնց ըմբոստութեան պատճառով: Երբ ետ նայիմ եւ աչքիս առջեւ բերեմ մեր ծնողական փորձարկութիւնը, կը յիշեմ կարգ մը կարեւոր դասեր, որ սորվեցանք:

— Կարգ մը պատանհներ կը հետեւին կեանքի ուղիղ ընթացքին, իսկ ուրիշներ, կ'ընտրեն կեանքի գիլ-գակ ճամբան: Լաւ է, որպէս ծնողներ, քիչ մը ճկուն ըլլալ մեր սիրոյ եւ քաջալերութեան մէջ:

— Բոլոր պատանհները պէտք ունին, առանց պայմանի սէր, որովհետեւ անոնք կ'ապրին պայմանաւորուած աշխարհի մը մէջ:

— Աստուծոյ խօսքին հանդէպ սէր խիստ կենսական է հաւատքի փոխանցման մէկ սերունդէն՝ միւսը:

— Պատանհներ պէտք ունին Քրիստոսի հետ յարաբերութեան մէջ ըլլալ՝ հիմնուած ոչ թէ օրէնքի, այլ Քրիստոսի խոր սիրոյն վրայ:

Աստուած ի՞նչ դեռատի հոգիներ դրած է կեանքիդ մէջ: Ինչ ալ ըլլայ անոնց տարիքը, սիրէ գանոնք առանց պայմանի, օգնելով անոնց, որ սիրեն զԱստուած եւ Անոր խօսքը:

**Պարգապէս Ժամանակ մի՛ անցըներ գաւակներուդ հետ, հապա օգտագործէ՛ր ժամանակը:**





Ուրբաթ  
24 Յունիս

## Կրակի Լեռ

Կարդա՛  
Մատթ. 24. 36-44

Ուստի դուք ալ պատրաստ կեցե՛ք, որովհետև Մարդու Որդին պիտի գայ այնպիսի ժամու մը, որ դուք չէք ակնկալեր: —Մատթեոս 24. 44

ԱՍՏՈՒԱՍՏԱՆՈՒՆԵՐ ՄԷԿ ՏԱՌՈՒՆ ՄԷՋ

- Ա. Մնաց. 28-29
- Առակաց 29. 21-27

Տարիներ առաջ, երբ այդ լեռը կրկին հրաբուխի նոր ժայթքումի նշաններ ցոյց տուաւ, իշխանութիւններ փորձեցին հոն ապրող բնակիչները պարպել շրջանէն: Յետոյ, 13 Մայիս 2006-ին, Միբափի լեռը զօրաւոր ժայթքումով մը դուրս տուաւ գորշ լաւայ մը, ծծմբային ծուխի մը հետ մէկտեղ, կարծես ոչ խարներու հօտ մը ըլլար: Տարօրինակը այն էր, որ շրջանի բնակիչները լուրջի չէին առած տրուած վտանգի ազդարարութիւնը եւ շուտ վերադարձած էին տուն: Կարծես մոռցած էին նաեւ 1994-ի Միբափի Լեռան հրաբուխը, որ պատճառ դարձած էր 60 մարդոց մահուան: Մարդկային բնաւորութիւն է աննկատ ձգել նշանները:

Օր մը, երբ Յիսուս Երուսաղէմի մէջ տաճարը ձգելով կ'երթար, իր աշակերտները հարցուցին, թէ իր երկիր վերադառնալու ատեն ի՞նչ նշաններ պիտի յայտնուէին (Մատթ. 24. 3): Ան ըսաւ, թէ պէտք է շատ մը բաներու ուշադրութիւն ընէին: Սակայն մարդիկ երբեմն կը մոռնան եղած ազդարարութիւնը, եւ պատրաստ չեն ըլլար:

Պետրոս Առաքեալ կ'ըսէ, թէ վերջին օրերուն, ծաղրողներ պիտի ըլլան Յիսուսի վերադարձը. «Ո՛ր է Ա՛նոր գալուստին խոստումը: Որովհետեւ հայրերուն ննջելէն ի վեր՝ ամէն բան կը մնայ այնպէս, ինչպէս որ էր արարչութեան սկիզբը» (Բ. Պետ. 3. 4): Տակաւին ծաղրողներ կան այսօր: Պատրաստ ես դուն Տէր Յիսուսի վերադարձին:

**Ուրանալ Աստուածաշունչը կը ճշանակէ աղէտը  
հրաւիրել:**





Շաբաթ  
25 Յունիս

**Որեւէ Ատեն,  
Որեւէ Տեղ**

Կարդա՛  
Եփես. 2. 11-19

Քանի որ Անոր միջոցով մենք բոլորս ալ արտօնութիւն ունինք մօտեցալու Հօրը մէկ հոգիով:  
—Եփես. 2. 18

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Բ. Մնաց. 1-3  
■ Առակաց 30. 1-9

**Ն**երկայիս Հաղորդակցութեան արհեստագիտութեան ձեւեր ու միջոցներ ա՛յնքան յառաջդիմած են, որ մարդիկ որեւէ ատեն եւ որեւէ տեղ կրնան Հաղորդակցիլ իրենց ուզած մարդոց հետ: Էլէլէրէսթ լերան՝ 21,000 ոտք բարձրութեան վրայ, մարդ մը իր վրանին մէջէն էլէկտրոնիկ նամակագրութեամբ կրցաւ Ամերկա գտնուող իր հարազատներուն ու բարեկամներուն հետ կապ պահել: Զարմանալի չէ, որ Հաղորդակցութեան շատ աւելի ձեւեր կան այսօր, որոնք կրնան մեզ կապել աշխարհի որեւէ մասին հետ որեւէ ատեն եւ որեւէ տեղ:

**Որպէս Հաւատացեալներ,** կրնանք չզարմանալու կեցուածք մը ունենալ նաեւ աղօթքի հանդէպ: Աստուծոյ հե՞տ խօսիլ: Անչուշտ: Պէտք չունինք հեռաձայնի գիծի սպասելու կամ գործիք մը աշխատցնելու, կամ կրելու: Կրնանք մեր գտնուած տեղը մեր սիրտը պարպել մեր Տէրոջ որեւէ ժամանակ եւ որեւէ տեղ: Զարմանալու պատճառ չկայ: Ան հոն է:

Այնպէս կը թուի, թէ Պօղոս Առաքեալ միշտ կը սքանչանար, որ Աստուծոյ ներկայութեան մէջ գտնուելու դուռը լայնօրէն բաց էր: «Իսկ հիմա՝ Քրիստոս Յիսուսով դուք, որ ժամանակին հեռուոր էիք, մերձաւոր եղաք Քրիստոսի արիւնով», կ'ըսէ Առաքեալը: Եւ կը շարունակէ: «Անոր միջոցով մենք բոլորս ալ (թէ հրեաներ եւ թէ հեթանոսներ) արտօնութիւն ունինք մօտեցալու Հօրը՝ մէկ հոգիով» (Եփես. 2. 13, 18): Դուռը բաց է ամէն մարդու համար: Աստուած կ'ողջունէ բոլոր անոնք, որոնք կու գան հաւատքով: Քրիստոսի միջոցով մենք կրնանք Անոր ներկայութեան մատչիլ որեւէ ատեն, որեւէ տեղ: Ի՛նչ հիանալի բան:

**Չկայ տեղ մը կամ ժամանակ մը, ուր կարելի չէ աղօթել:**





Կիրակի  
26 Յունիս

**ՄԵԿ  
Բացատրութիւն**

Կարդա՛  
Եսայի 53. 4-12

Ձեզմէ ո՞վ կրնայ գիտ  
յանդիմանել մեղքի  
նամար, իսկ եթէ ես  
նշմարտութիւնը կը  
խօսիմ, ինչո՞ւ չէք  
նաւատար ինձի:  
—Յովն. 8. 46-47

ԱՍՏՈՒԱՍՏՆՈՒՆՆԵՐ ՄԵԿ  
ՏԱՐՈՒՆԸ ՄԵՋ  
■ Բ. Մնաց. 4-6  
■ Առակաց 30. 10-20

46): Աշակերտները ընդունեցին Անոր ըսածը, երեք տարիներ Անոր հետ ըլլալով եւ Անոր կեանքը մանրագնին քննելով: Ան առանց մեղքի մէկն էր (Ա. Պետրոս 2. 22, Ա. Յովհաննու 3. 5):

Յիսուս արդեօք բարոյական հրա՛ջք մըն էր, առանց մեղքի անձնաւորութի՛ւն մը, ամբողջ մարդկային մեղապալի պատ-մութեան մէջ: Այո՛, Ան միակ անբիծ բացառութիւնն էր, որու կ'ակնարկէ Պօղոս Առաքեալ. «Արդարեւ բոլորը մեղանշեցին եւ զրկուած են Աստուծոյ փառքէն» (Հռովմ. 3. 23): Եւ այդ «բոլոր» բառը իր մէջ կը բովանդակէ թէ՛ քեզ եւ թէ՛ զիս:

Որովհետեւ ամբողջ մարդկութիւնը մեղանշած է, մենք կրնանք ուրախ ըլլալ, որ միայն Յիսուս Ի՛նք արժանացած է անեղ կոչուելու, եւ միայն Ի՛նք արժանի է անթերի գոհը ըլլալու մեր մեղքերուն քառութեան, որուն պէտք ունինք:

Փառք տանք Յիսուս Գրիստոսի համար – միակ անմեղը եւ բացառութիւնը – որ մեր մեղքերը կրեց:

---

**Միայն Յիսուս՝ կատարեալ զոհը, կրնայ յայտա-  
բարել յանցաւոր մարդոց կատարեալ ըլլալը:**





Երկուշաբթի  
27 Յունիս

**Աստուծոյ Մեծագոյն Նպատակը**

Կարդա՛ր  
Բ. Կորնթ. 12. 7-10

Անոր քամար երեք անգամ աղաչեցի Տէրոջ, որ ճեռացնէ ինձմէ:  
—Բ. Կորնթ. 12. 8

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Բ. Մնաց. 7-9  
■ Առակաց 30. 21-33

**Ե**ս ունիմ ամուրի բարեկամ մը, որ թախանձագին կ'աղօթէ Աստուծոյ, որ պակեցնէ կամ նոյնիսկ բողբոլին վերցնէ իրմէ իր սեռային պահանջքը: Քանի որ ինք կը խորհի, որ սեռային այդ բնագրական պահանջքը յաճախ զինք փորձութեան կը տանի: Որքան կարելի է ազնուութեամբ, կ'ըսեմ իրեն, թէ ես կը կատարեմ որ Աստուած պիտի լսէ եւ պատասխանէ իր աղօթքին, այնպէս՝ ինչպէս ինք կը խնդրէ: Շատ հաւանաբար ան պէտք է սորվի հաւատարմութիւն, ինչպէս ոեւէ մէկը կը սորվի, ինքզինք կարգապահութեան ենթարկելով եւ շարունակ զգալով իր կախեալ ըլլալը:

Ինչ պատճառով ալ ըլլայ, Աստուած թոյլ տուած է, որ այս մեր ինկած աշխարհը կարենայ շարունակել իր այդ ինկած վիճակով: Այնպէս կը թուի, թէ Աստուած աւելի կարեւոր կը նկատէ մեր նկարագիրը, քան մեր հանդատութիւնը: Անոր համար երբեմն Ան կը գործածէ այն բաները, որոնք մեզի անհանդատութիւն կը պատճառեն, պարզապէս մեր նկարագիրը ձեւաւորելու համար: Այս մէկը որպէս ճշմարտութիւն կը գտնենք Պօղոս Առաքեալի կեանքին մէջ: Առաքեալը թախանձագին աղօթեց, որ «մարմինի այդ փուշը» իրմէ վերցուի (Բ. Կոր. 12. 8):

Իմ անձնական կեանքիս մէջ ես միշտ կ'աշխատիմ բաց ըլլալ նոր իրականութիւններու առջեւ: Երբեք չմեղադրել զԱստուած, որ իմ ակնկալութիւններս չեն իրականանար: Կը փորձեմ ամէն ատեն եւ ամէն բանի մէջ կատարելապէս վստահիլ իրեն, հաւատալով, որ Ան իմ ձախողութիւններուս մէջ ինծի նոր փորձառութիւն եւ հոգեւոր աճում պիտի պարգեւէ:

**Աստուած մեր դժուարութիւնները կը գործածէ իր Որդւոյն նմանութիւնը զարգացնելով մեր մէջ:**







Երեքշաբթի  
28 Յունիս

**«Արուեստասէր»  
Հաւատացեալներ**

Կարդա՛  
Ա. Կոր. 1. 18-31

Քրիստոսին սէրը մեզ  
կը ստիպէ:  
—Բ. Կորնթ. 5. 14

ԱՍՏՈՒԱԾՆԵՐՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՅ

- Ա. Կորնթ. 1-6
- Առակաց 31. 1-9

**Ա**րուեստասէր բառը, տարիներու ընթացքին, յաճախ վերասահմանուելով, կարծես կորսնցուցած է իր ծագումին իմաստն ու փայլքը: «Արուեստասէր»ը այն անձն է, որ բան մը կ'ընէ պարզապէս զայն սիրած ըլլալուն համար:

Գործ մը ընելու փոխարէն վարձք ատնալը, կը տանի մեզ աւելի բարձր մակարդակի մը՝ այլ խօսքով, արհեստավարժութեան: Այդ կը նշանակէ, թէ մէկը կը յօժարի վճարել քեզի ծառայութեանդ համար, եւ անոր համար պէտք է լաւագոյնդ ընես: «Արուեստասէր» մը կը նկատուի աւելի պակաս փորձառութիւն եւ կարողութիւն ունեցող անձ մը:

Մինչ կը կարդամ Աստուածաշունչս, այնտեղ կը տեսնեմ արժէքներու տարբեր տեսակի աստիճանաւորում մը: Յիսուսի ժամանակ կրօնական արհեստավարժեր, իրենց պաշտօնը կը շահագործէին աւելի ոյժ եւ վարկ շահելու իրենք իրենց համար եւ ո՛չ թէ ժողովուրդին ծառայելու համար: Ասոր համար, Յիսուս չընտրեց բոլոր անոնք, որոնք իմաստուն էին, գօրաւոր կամ ազնուական դասակարգի պատկանող, ըստ մարդկային չափանիշի (Ա. Կոր. 1. 26): Ան ընտրեց անոնք, որոնք կը փափաքէին իրեն հետեւիլ եւ մարդուի սիրոյ ծառայութեան մէջ:

Այսօրուան աշխարհին մէջ, պատկերը գրեթէ նոյնն է: Աստուած տակաւին կը փնտռէ «Արուեստասէր» մարդիկ, որոնք պիտի ուզեն ծառայել Տէրոջ՝ պարզապէս սիրելով այդ ծառայութիւնը: Քրիստոսի վրայ մեր ունեցած սէրէն պարտդրուած, մենք ալ կրնանք աշակերտներուն եւ առաքեալներուն պէս յայտարարել աշխարհի՝ Աստուծոյ սէրը - հետեւիլ Յիսուսի օրինակին - սիրել եւ ծառայել ուրիշներու:

**ՁԱՍՏՈՒԱԾ սիրելու փաստը կը յայտնուի մեր դրացին սիրելով:**





Չորե քշաբթի  
29 Յունիս

## Ճշմարիտ Խոստովանութիւններ

Կարդա՛ր  
Սաղմոս 51. 1-13

Անա ես անօրէնու-  
թեամբ ծնայ, ու մայրս  
մեղքով յղացաւ զիս:  
—Սաղմոս 51. 5

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 75-77

**Կ**ը պրեմ հնդկընկերջը: Միշտ պի-  
րած եմ գայն: Երբ երկրորդ  
դասարանի աշակերտ էի, օրուան մը  
յոգնութենէն ետք երբ տուն հասայ,  
խոհանոցը սեղանին վրայ գտայ  
տոպրակ մը լեցուն շերտուած  
հնդկընկերջ եւ բոլորն ալ արագօրէն  
կերայ եւ վերջացուցի: Երբ մայրս  
խոհանոց գնաց պատրաստելու  
հնդկընկերջէ կարկանդակը, յանկարծ  
կոչեց – ո՛վ կերաւ հնդկընկերջը:

**Ջգացի, թէ նեղութեան մէջ եմ:**  
Սակայն իմ խոստիւղու ձեւս շատ  
պարզ էր – արագ եւ դիւրին տուտ  
մը: «Ես չկերայ»: Մայրս շարունակեց  
իր հետապնդումը հարցնելով քոյ-  
րերուս: Անոնք ալ երբ «Ո՛չ» ըսին,  
բոլորս ալ լսեցինք մեզի ծանօթ խօսքը. «Սպասեցէ՛ք, քիչ  
ետք ձեր հայրը տուն կու գայ»: Յանցանքս գոցելու ծրագիրս  
վտանգուեցաւ: Այդ իրիկուն ստիպուած եղայ խոստովանիլ:  
Ո՛չ ոք ինձի սորվեցուցած էր սուտ խօսիլ, ինչպէս Սաղ-  
մոսերգու Դաւիթ կ'ըսէ. «Ահա ես անօրէնութեամբ ծնայ»  
(Սաղմ. 51. 5): Բայց իր մեղաւոր վիճակին մէջ, Դաւիթ  
գիտցաւ ո՛ւր երթալ – Աստուծոյ, որ անսահման  
գլխութեամբ կը մաքրէ մեզ մեր մեղքերէն (Կ. 1-2):

Երբ ճանչնանք եւ ընդունինք շարունակուող մեղքը  
մեր կեանքերուն մէջ, մեզի կը յիշեցուի գիտակցիլ Աստուծոյ  
շարունակուող ներկայութեան կարիքը եւ Անոր իջօքին  
զօրութիւնը, որպէսզի սպահով պահէ մեզ եւ հոգեւորա-  
պէս առողջ: Ան մեզի կը սպասէ, որպէսզի խոստովանինք  
մեր յանցանքները եւ ընդունինք իր թողութիւնն ու այն  
մաքրութիւնը, որ Ան պատրաստ է մեզի տալու: Յիշենք,  
թէ Աստուծոյ թողութեան թարմացնող կարեկցութիւնը  
մեզ կը սպասէ, երբ մեր մեղքերը խոստովանինք:

**Ճանցցի՛ր եւ ընդունէ՛ մեղքերդ, որպէսզի վայելես  
խոստովանութեան հաճոյքը:**



Հինգշաբթի  
30 Յունիս

**Վարակիչ Հիան-  
դութեան Դարմանը**

Կարդա՛  
Հռովմ. 3. 19-26

...Հիմա որ Իր  
արիւնով  
արդարանանք, ո՞րչափ  
աւելի իրմով պիտի  
ազատինք  
բարկութեանց:  
—Հռովմ. 5. 9

ԱՍՏՈՒԱՍՏՆՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆՆԵՐ ՄԷՋ  
■ Բ. Մնաց. 10-12  
■ Առակաց 31. 10-31

**Ե**րբ Ագեմոնեան Ալիլոփէ ծառայող հիւանդապահուհի միափոնար մը վարակուեցաւ մահացու հիւանդութենէ մը, շուտով Նիու Եորք փոխադրուեցաւ բժշկական հոգածութեան համար: Անոր տաքութիւնը բարձրացած էր մինչեւ 107 աստիճանի: Ջերմութիւնը իջեցնելու համար բժիշկներ սառ փաթթեցին անոր վրայ եւ կերակրեցին զայն իր երակէն աննդանիւթ ներարկելով: Ջերմութիւնը հետզհետէ պակսեցաւ: Ինը շաբաթ ետք, ան իր ծանրութենէն կորանցուցած էր շուրջ 15 քիլոկրամ եւ իր մազերուն մեծ մասը թափած էր: Այդ բոլորէն ետք, սակայն, ան կրցաւ վերապրիլ:

Տարրալուծարանի մը մէջ բժիշկ մը, մեկուսացնելով հիւանդութեան մանրէն, երբ հետազոտութիւն կը կատարէր, ինք ալ վարակուեցաւ նոյն հիւանդութենէն: Այն ատեն չկար յատուկ դարման մը այդ հիւանդութեան: Բարեբախտաբար, հիւանդութիւնը յաղթահարած հիւանդապահուհիին արեան մէջ հակաթոյն մը պատրաստուած էր արեան միջրոպներուն դէմ պայքարելու, որ երբ անկէ արիւն առին եւ ներարկեցին բժիշկին արեան մէջ, բժիշկը ապաքինեցաւ: Հիւանդապահուհիին արիւնը փրկած էր բժիշկին կեանքը:

Բոլորս ալ վարակուած ենք մեղք կոչուած ճակատադրական հիւանդութենէն (Հռովմ. 6. 23): Միայն մէկ դարման կայ, որ կը գտնուի Յիսուսի խաչին վրայ թափած մաքրող արեան մէջ: Առաքեալը կ'ըսէ. «Հիմա՛ որ արդարացած ենք իր արիւնով, ո՞րչափ աւելի բարկութենէն պիտի փրկուինք իրմով» (Հռովմ. 5. 9): Աստուծոյ արդար բարկութիւնը մեր մեղքերուն դէմ, գոհացում գտած է Յիսուսի՛ խաչի մահով: Մեր միակ կարիքը ապաշխարել եւ Յիսուսը ճանչնալն է:

**Մեր ազատութեան գիմը վնասուած է Յիսուսի արեամբ:**

